


ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — Անյապաղ ապաշրջափակում. բայց՝ ո՛չ ի հեճուկս Արցախի ինքնորոշման.....	521
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ	523
ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ	
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — Աստուծոյ դառնալ (Turning to God).....	527
ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ	
ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ — Մեկնութիւն Մատթեոս Աւետարանի (3.11-12).....	534
Ս. ԳՐԱՅԻՆ	
ԱՌԱՔԵԼ ԱԲՂ. ԳԱՏԷՅԾԵԱՆ — Յիսուսի աշակերտուհիները կամ առաքելուհիները.....	540
ՊԱՏՄԱ-ՈՒՄՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ	
ՍՈՒՐԷՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ — 90-ամեայ հունձքը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքին.....	547
ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ	
ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ Ա. ԸԷՅԵԱԵԱՆ — Աստուածիմաստութիւն.....	552
ՍՓԻՌՔԻ ՏԱՐԻ	
ԼԵՒՈՆ ՇԱՌՈՅԵԱՆ — Սփիւռքահայ դպրոցը՝ աւանդական դիմագծութեան ու նորարար պատշաճեցումներու միջեւ.....	562
ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ	579
ՀԱՅ ԴԱՏ	581
ՊԱՐԳԵԼԱՏՐՈՒՄ	596
ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ	599
ԴՊՐԵՎԱՆՔ	601
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ	610
ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ	613
«ՇՆՈՐՀԱԼԻ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲ	615
ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԵՆ	617
ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԶԱՐՈՉ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒ ԿՈՂՄԵ	620



ՊԷՇՏՕՆԿԿԱՆ ԸՄՍԱԳԻՐ
ԿԸԹՈՂԿՈՍՈՒԹԵԱՆ ՏՔՅՈՅ
ՄԵԾԻ ՏԷՆ ԿԻԿԿԻՈՅ

ՂԲ. ՏԱՐԻ 2023

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՅՈԿՏԵՄԲԵՐ

ԹԻՒ 9-10

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

**ԱՆՅԱՊԱՂ ԱՊԱՇՐՋԱՓԱԿՈՒՄ.
ԲԱՅՅ՝ Ո՛Չ Ի ՀԵՃՈՒԿՍ ԱՐՅԱԽԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ***

Արցախի անկախության տոնն է: Տխուր ու անորոշ պայմաններու մեջ կը նշենք Արցախի անկախության 32-րդ տարեդարձը:

Շրջափակումի ենթարկուած է Արցախը Ազրայեյճանի կողմէ եւ ենթակայ է սովամահ դառնալու վտանգին: Սակայն, Արցախի ժողովուրդին հաւատքը, վճռակամութիւնն ու յոյսը ո՛չ մէկ ոյժ կրնայ շրջափակումի ենթարկել:

Անկախութիւնը աստուածատուր իրաւունք է: Անկախութիւնը նաեւ միջազգային օրէնքի հիմնական սկզբունքներէն մէկն է: Արդ, ո՛չ մէկ ազգ իրաւունք ունի բռնաբարելու ուրիշ ազգի անկախութիւնը: 32 տարիներ առաջ, Արցախի ժողովուրդը իր անկախութիւնը հռչակած է եւ բազմիցս վերահաստատած:

Չետեւաբար, սիրելի՛ Արցախ, մնացիր ամուր՝ քու ինքնորոշման արդար իրաւունքը հարցականի տակ առնող ներկայ պայմաններուն մէջ: Մնացիր կառչած հաւաքական կեցուածքիդ: Դուն առանձի՛ն չես, որջ Յայութիւնը քեզի՛ հետ է:

Եղի՛ր միակամ բռունցքի նման, հեռու մնալով կամքդ ջլատող ներքին հակադրութիւններէ:

Եղի՛ր զօրեղ ժայռի նման, մերժելով քեզ համակերպութեան մղող մօտեցումները:

* Պատգամ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին Արցախի Հանրապետության 32-րդ տարեդարձին առթիւ 2 Մեպտեմբեր 2023-ին:

Թող պահանջատիրութեան ձայնդ հնչէ աշխարհի լռութեան ու անտարբերութեան դիմաց:

Թող մարտունակ ոգիդ մի՛շտ մնայ ուժեղ ու հատու:

Թող իմանան բոլորը, մօտաւոր թէ հեռաւոր, թէ Արցախի ձայնը կարելի է լռեցնել, սոսկ հաց ու դեղ տալով:

Թող իմանան բոլորը, մօտաւոր թէ հեռաւոր, թէ Արցախի ապաշրջափակումը չի՛ կրնար ըլլալ ի հեճուկս անոր ինքնորոշման արդար իրաւունքին:

Թող իմանան բոլորը, մօտաւոր թէ հեռաւոր, թէ մարդասիրական տազնապ ստեղծելով չե՛ն կրնար Արցախը ծունկի բերել:

Նայեցէք մեր դարաւոր պատմութեան: Մեր ժողովուրդը իր պատմութիւնը կերտեց, իր գոյութիւնը ամրագրեց եւ իր ինքնութիւնը պահեց նաեւ «ո՛չ» ըսելով՝ մեր հաւատքը խաթարող, մեր ինքնութիւնը այլափոխող ու մեր անկախութիւնը յափշտակել փորձող ոյժերուն դէմ: Մեր հաւաքական «ոչ»ով մենք մնացինք տոկուն պատմութեան արհաւիրքներուն մէջ:

Այսօր եւս, Արցախը եւ Արցախին հետ մեր ողջ ժողովուրդը, միահամուռ կերպով կ'ըսէ «ո՛չ».-

Ո՛չ՝ Արցախի ինքնորոշման իրաւունքը մոռացութեան դատապարտելու ձգտող ճիգերուն:

Ո՛չ՝ Արցախը իր Հայութենէն պարպելու սադրանքներուն:

Ո՛չ՝ Արցախի կրօնական, մշակութային ու ազգային ինքնութիւնը այլափոխող ապօրէն ծրագիրներուն:

Ո՛չ՝ Արցախը Ազրպէյճանի հողային տարածքին մէջ ներմուծելու դաւերուն:

Ո՛չ՝ տարբեր քողի տակ Արցախի Հայութեան դէմ Յեղասպանութիւն կազմակերպելու դիւային փորձերուն:

Վարդանանք ու Ղեւոնդեանք 5-րդ դարուն ըսին՝ այս հաւատքէն մեզ ո՛չ մէկ ոյժ կրնայ խախտել: Քրիստոնէական հաւատքը շաղախուած էր անկախութեան ոգիով եւ զսպանակուած՝ ազգային արժէքներով ու իտեալներով:

Արցախի պատմութեան ներկայ ճակատագրական հանգրուանին, Վարդանանք ու Ղեւոնդեանք հաւատքով վերանորոգուած ու կամքով կռանուած, մեր ողջ ժողովուրդը Արցախի հետ միասին կ'ըսէ աշխարհին դիմաց՝ Արցախին ազատօրէն ապրելու, գոյատեւելու ու ստեղծագործելու աստուածատուր իրաւունքը ո՛չ մէկ ոյժ կրնայ խլել:

Ահա՛ մեր համազգային ուխտը՝ այսօ՛ր ու մի՛շտ:

Փառք ու պատիւ իրենց արիւնով Արցախի անկախութիւնը կերտած նահատակներուն, եւ իր նահատակներուն սրբազան ուխտին հաւատարիմ Արցախի ժողովուրդին:

ԿՈՆԴԱԿՆԵՐ



**ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՅԱՐԴ ՀՐԱՊԱՐԱԿԱԾ ԿՈՆԴԱԿՆԵՐՈՒՆ
ԵՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐԵՐՈՒՆ ՀԱՄԱՔԱԾՈՆ***

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տ. Ներսէս Քհնյ. Պասիլեանին, Ծաղկեայ սեւ փիլոն
կրելու արտօնութիւն ստանալու առթիւ)

Ընդառաջելով Ատրպատականի թեմի Առաջնորդ Գերապատիւ Տ. Գրիգոր
Ծ. Վրդ. Զիֆթճեանի խնդրանքին, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը
շնորհենք

ԾԱՂԿԵԱՅ ՍԵՒ ՓԻԼՈՆ

կրելու արտօնութիւն՝ յընթացս տօնական օրերու եկեղեցական արարողու-
թեանց եւ պաշտօնական հանդիսութեանց:

Վստահ ենք որ Ձեզի շնորհուած այս պատիւը իր յաւանքը մը պիտի հանդի-
սանայ առաւել նուիրումով շարունակելու Ձեր քահանայական ծառայութիւնը
հայ եկեղեցոյ անդաստանէն ներս:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ հոգեպէս ու ֆիզիքապէս զօ-
րացնէ Ձեզ պարգեւելով Ձեզի քաջառողջութիւն եւ անսպառ կորով:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

* Յունուար 2010-ի թիւով սկսանք հրատարակել Ս. Աթոռոյս Վեհափառ Հայրապետ՝
Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Կոնդակներու հաւաքածոն, սկսեալ 1995 թուականէն:
Սոյն շարքը շարունակութիւնն է ընդհանուր հաւաքածոյին: *ԽՄԸ*:

*Տուաւ Կոնդակս այս ի Կաթողիկոսարանիս
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 25-ն Յունիսի, 2013 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԲ.
Ընդ համարաւ Շ/ՅԹԲ.*



ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տ. Գուրգէն Քհնյ. Յովհաննէսեանին,
Ծաղկեայ սեւ փիլոն կրելու արտօնութիւն ստանալու առթիւ)

Ընդառաջելով Լիբանանի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Գեղամ Արք. Խաչերեանի խնդրանքին, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք

ԾԱՂԿԵԱՅ ՍԵՒ ՓԻԼՈՆ

կրելու արտօնութիւն՝ յընթացս տօնական օրերու եկեղեցական արարողութեանց եւ պաշտօնական հանդիսութեանց:

Վստահ ենք, որ Ձեզի շնորհուած այս պատիւը խթան մը պիտի հանդիսանայ առաւել նուիրումով շարունակելու Ձեր քահանայական ծառայութիւնը՝ հայ եկեղեցոյ անդաստանէն ներս:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ հոգեպէս ու ֆիզիքապէս զօրացնէ Ձեզ՝ պարգեւելով Ձեզի քաջառողջութիւն եւ անսպառ կորով:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Գիրս այս ի Կաթողիկոսարանիս
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 28-ն Սեպտեմբերի, 2013 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԲ.
Ընդ համարաւ Շ/ՅԹԲ.*



ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ
(Տ. Նարեկ Քինյ. Հեճինեանին, Ծաղկեայ սեւ փիլոն
կրելու արտօնութիւն ստանալու առթիւ)

Ընդառաջելով Լիբանանի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Գեղամ Արք. Խաչերեանի խնդրանքին, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք

ԾԱՂԿԵԱՅ ՍԵՒ ՓԻԼՈՆ

կրելու արտօնութիւն՝ յընթացս տօնական օրերու եկեղեցական արարողութեանց եւ պաշտօնական հանդիսութեանց:

Վստահ ենք, որ Ձեզի շնորհուած այս պատիւը խթան մը պիտի հանդիսանայ առաւել նուիրումով շարունակելու Ձեր քահանայական ծառայութիւնը՝ հայ եկեղեցոյ անդաստանէն ներս:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ հոգեպէս ու ֆիզիքապէս զօրացնէ Ձեզ՝ պարգեւելով Ձեզի քաջառողջութիւն եւ անսպառ կորով:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Գիրս այս ի Կաթողիկոսարանիս
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 28-ն Սեպտեմբերի, 2013 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԲ.
Ընդ համարաւ ՇՅԻ.*



ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ
(Տ. Սեւակ Քինյ. Վասիլեանին, Քահանայական Լանջախաչ
կրելու արտօնութիւն ստանալուն առթիւ)

Ընդառաջելով Լիբանանի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Գեղամ Արք. Խաչերեանի խնդրանքին, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԼԱՆՋԱԽԱՉ

կրելու արտօնութիւն՝ յընթացս տօնական օրերու եկեղեցական արարողութեանց եւ պաշտօնական հանդիսութեանց:

Վստահ ենք որ Ձեզի շնորհուած այս պատիւը խթան մը պիտի հանդիսանայ առաւել նուիրումով շարունակելու Ձեր քահանայական ծառայութիւնը՝ հայ եկեղեցւոյ անդաստանէն ներս:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ հոգեպէս ու ֆիզիքապէս զօրացնէ Ձեզ պարգեւելով Ձեզի քաջառողջութիւն եւ անսպառ կորով:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Կոնդակս այս ի Կաթողիկոսարանիս
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 28-ն Սեպտեմբերի, 2013 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԲ.
Ընդ համարաւ Շ/ՅԻԱ.*



ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տ. Յակոբ Քինյ. Պգտիկեանին, Քահանայական Լանջախաչ կրելու արտօնութիւն ստանալու առթիւ)

Ընդառաջելով Լիբանանի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Գեղամ Արք. Խաչերեանի խնդրանքին, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԼԱՆՋԱԽԱՉ

կրելու արտօնութիւն՝ յընթացս տօնական օրերու եկեղեցական արարողութեանց եւ պաշտօնական հանդիսութեանց:

Վստահ ենք որ Ձեզի շնորհուած այս պատիւը խթան մը պիտի հանդիսանայ առաւել նուիրումով շարունակելու Ձեր քահանայական ծառայութիւնը՝ հայ եկեղեցւոյ անդաստանէն ներս:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ հոգեպէս ու ֆիզիքապէս զօրացնէ Ձեզ պարգեւելով Ձեզի քաջառողջութիւն եւ անսպառ կորով:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Կոնդակս այս ի Կաթողիկոսարանիս
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 28-ն Սեպտեմբերի, 2013 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԲ.
Ընդ համարաւ Շ/ՅԻԲ.*

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ

**ԱՍՏՈՒԾՈՅ ԴԱՌՆԱԼ
(Turning to God)**

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Շաբաթ, 30 Մայիս 2020

Այսօր, մարդկությունը կը դիմագրաւէ երկու մեծ տագնապներ՝ երկրագունդի ջերմաստիճանի բարձրացում, որ կը սպառնայ մարդկության եւ մոլորակի ամբողջական կործանումին, եւ Քովիտ-19 համաճարակը որ մեծ թիւով մահեր կը յառաջացնէ բոլոր ընկերություններու կեանքէն ներս: Իրենց աշխարհաքաղաքական ռազմավարությունէն ու տնտեսական շահերէն մղուած, մեծ պետություններ փաստօրէն հարկ եղած կարեւորությունը չեն տար յիշեալ երկու տագնապներուն վերաբերեալ գիտնականներու հնչեցուցած ահազանգներուն ու զգուշացումներուն, ինչպէս նաեւ՝ միջազգային գիտաժողովներու որոշումներուն:

«Մարդուն կողմէ եղած խախտումներն ու Աստուծոյ ծրագիրը» գլխաւոր թեման էր Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի համաժողովին, 1948 թուականին՝ Համաշխարհային Երկրորդ Պատերազմէն անմիջապէս ետք: Ժամանակաշրջան մը՝ երբ աշխարհը ենթարկուած էր ընդհանուր կործանումի, աւերուածութեան եւ տնտեսական փլուզումի: Իր հրապարակած յայտարարութեան մէջ, Համաժողովը յիշեցուց մարդկության, որ աւերուած աշխարհը կարելի է վերականգնել՝ միայն հաւատարիմ մնալով Աստուծոյ ծրագրին: Համաշխարհային Երկրորդ Պատերազմին յաջորդած էր «պաղ» պատերազմը: Մարդիկ կը յուսային, որ պաղ պատերազմը պիտի վերջ գտնէր այն ատեն միայն երբ համայն մարդկությունը յարգէր մարդկային իրաւանց սկզբունքները եւ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան որոշումները: Ասիկա սակայն չիրականացաւ: Այսօր, մարդուն կողմէ եղած խախտումները կը շարունակուին առաւել սաստկութեամբ եւ այլազան կերպերով՝ աշխարհով մէկ, եւ կեանքի բոլոր մարզերէն ներս:

Աշխարհաքաղաքական զարգացումները ազգերու կեանքէն ներս իրենց անդրադարձը կ'ունենան զանազան ձեւերով: Աշխարհաքաղաքական յարափոփոխ յարաբերությունները իրենց ազդեցությունը կը ձգեն նաեւ տնտեսութեան բնագաւառէն ներս: Համաշխարհային Տնտեսութեան համաժողովը, 2020 Յունուարի իր հանդիպումին այս գծով ահազանգ հնչեցուց (տե՛ս Global

Risks Report 2020, p.6) պարզելով յառաջիկայ վտանգները:

Ճակատագրական դէպքերն ու մեծ տազնապները պատմութեան մէջ անկիւնադարձ կը հանդիսանան, ինչպէս պատահեցաւ Համաշխարհային Առաջին եւ Երկրորդ պատերազմներէն, Խորհրդային Միութեան փլուզումէն եւ 11 Սեպտեմբեր 2001-ին Նիւ Եորքի ահաբեկչական արարքէն ետք: Համաճարակէն ետք եւս աշխարհը պիտի չըլլայ այն ինչ որ էր համաճարակէն առաջ: Համաճարակը հիմնական փոփոխութիւններ պիտի յառաջացնէ մարդկային կեանքի զանազան տարածքներէն ներս, ներառեալ ազգերու փոխյարաբերութեան եւ պետութիւններու կողմէ առաջնահերթութիւններու ճշդումին:

Արմատական փոփոխութիւններ տեղի ունեցան թէ՛ շրջանային եւ թէ՛ միջազգային մակարդակներու վրայ: Աշխարհը այլեւս իր տնտեսական, քաղաքական, ճարտարարուեստական թէ՛ զինուորական մարզերով Արեւմուտքին կողմէ չի ղեկավարուիր: Մինչ Զինաստանը եւ Ռուսիան հետզտեհէ միջազգային գետնի վրայ տիրական ներկայութիւն կը դառնան, ազգերու արեւելումը՝ Արեւելք թէ՛ Արեւմուտք կամ Հիւսիս թէ՛ Հարաւ հատուածին, իր կարգին կը փոխուի: Միացեալ Ազգերու Կազմակերպութիւնը կրնայ վճռել փոքր ազգերու ճակատագիրը՝ տնտեսական պատժամիջոցներու, վարչակարգի փոփոխութեան, զինուորական ուժի հաստատումով եւ դիւանագիտական կապի խզման ճամբով: Միաբեւեռ քաղաքականութիւնն ալ իր կարգին կրնայ վնաս պատճառել կենսոլորտին եւ աղքատութիւն, ընկերատնտեսական անհաւասարութիւններ եւ բռնութիւն յառաջացնել: Մարդկային իրաւանց բռնաբարումը տարբեր արտայայտութիւններով կրնայ շարունակուիլ, նոյնիսկ այն երկիրներուն մէջ, որոնք կը դաւանին մարդկային իրաւանց պաշտպաններ ըլլալ: Այս կանխազգուշական նշանները ցոյց կու տան, որ աշխարհը կը գտնուի վճռական դարձակէտի մը վրայ՝ տազնապներով, բեւեռացումներով եւ անորոշութիւններով յատկանշուած: Աշխարհը ներկայիս նուազ ապահով է քան ինչ որ էր Երկրորդ Համաշխարհային Պատերազմէն ետք. երկրագունդը վտանգուած է եւ՝ անարդարութիւնը, աղքատութիւնը, ցեղապաշտութիւնն ու բռնութիւնը գերակշիռ ներկայութիւն դարձած:

Աշխարհը ճիշդ ուղղութեամբ պիտի ընթանայ միայն այն ատեն, երբ տազնապները հնարաւորութիւններու վերածէ: Կը յուսամ, որ ներկայի իրավիճակները, յարացոյցներն ու արժեքափերը տեղի տան նոր հեռանկարներու, մօտեցումներու եւ առաջնահերթութիւններու: Կը յուսամ նաեւ, որ Քովիտ-19 համաճարակի պատճառած տազնապները եւ երկրագունդի ջերմաստիճանի բարձրացումը ազգերը մղէ, իրենց նիւթական թէ՛ այլ կարելիութիւնները ի սպաս դնելու մարդկութեան առողջութեան եւ կենսոլորտին պահպանման, փոխանակ զանոնք վատնելու տնտեսական առաւել շահի եւ զինուորական առաւել ուժ ապահովող նպատակներու վրայ: Վերջապէս, կը յուսամ որ ազգեր կը համաձայնին զօրացնել այն համակարգերը, միջոցներն ու գործընթացը, որոնց միջոցաւ կարենան առաջնահերթ տեղ տալ կանխարգիւման՝ քան պաշտ-

պանութեան. համագործակցութեան՝ քան հակազդող ռազմավարութեան. ստեղծագործ աշխատանքի՝ քան արդիւնաբերութեան. արժէքներու՝ քան շահադիտական նպատակներու: Ազգեր պէտք է զարկ տան սերտացնելու իրենց գործակցութիւնը եւ բազմակառավարումը քաջալերեն, փոխանակ բեւեռացման նոր պատճառներ եւ արտայայտութիւններ ստեղծելու եւ միակողմանի աշխատանքներու ձեռնարկելու:

Կը խորհիմ, թէ **Նոր աշխարհակարգ** մը ձեւաւորելու ժամանակը հասած է: Որեւէ աշխարհակարգ կրնայ նոր աշխարհի մը պատուհաս դառնալ, եթէ հիմնուած չըլլայ մարդկային հիմնական իրաւունքներուն վրայ, եւ առաջնորդուած՝ հասարակաց բարոյական արժէքներով: Խորհրդային Միութեան փլուզումը թշնամական պատեր քանդեց: Սակայն, դժբախտաբար աշխարհը ակնհաստեա կ'ըլլայ տեսանելի եւ անտեսանելի նոր պատերու կառուցման եւ նոր «թշնամութեան պատ»եր (Եփ 2.14) ի յայտ կու գան նոյնիսկ ազգերու, ցամաքամասերու, կրօններու, մշակոյթներու եւ քաղաքակրթութիւններու միջեւ:

Համաշխարհային Կրօններու Խորհրդարանը 1993-ին յայտարարեց. «համաշխարհային նոր համակարգ կարելի չէ հաստատել՝ առանց համաշխարհային բարոյագիտութեան» (տե՛ս "Declaration Toward a Global Ethic," p. 7). Սամուէլ Հանտինկթըն (1927-2008) Harvard համալսարանի քաղաքական գիտութեանց փրոֆեսոր եւ Հարուլըրտի Միջազգային Գործերու Կեդրոնի տեսուչ, իր *The Clash of Civilizations քաջածանօթ գիրքին մէջ (1996, London)* շեշտած է, որ «խաղաղութեան եւ քաղաքակրթութեան ապագան կախեալ է աշխարհի մեծագոյն քաղաքակրթութեանց քաղաքական եւ հոգեւոր ղեկավարներու եւ մտաւորականներու միջեւ փոխադարձ հասկացողութենէն եւ համագործակցութենէն» (էջ 321): Կիովին կը բաժնեմ այս տեսակէտը: Եթէ աշխարհի ղեկավարները ձախողին բարեփոխել աշխարհի կարգը՝ ժամանակակից ընկերային, քաղաքական, տնտեսական, բարոյագիտական արժէքներու, յարացոյցներու եւ յառաջատեսիլ ձգտումներու հիմամբ, մտավախութիւնս չեմ թաքցներ, որ կենսոլորտային դիւրաբեկ, տնտեսապէս երերուն, բարոյապէս կոտորուած եւ քաղաքականօրէն խոցելի աշխարհը կրնայ արագօրէն դէպի անիշխանութիւն թաւալիլ:

Սուրբ Պատարագը «Աստուծոյ նոր ստեղծագործութեան» յայտարարութիւնն է, այլ խօսքով՝ երկրի վրայ Աստուծոյ արքայութեան հաստատումը, որ իրականացաւ Աստուծոյ Որդւոյն մարդեղութեամբ: Աստուծոյ նոր ստեղծագործութիւնը պիտի շարունակէ մնալ մարտահրաւէր մը՝ ուղղուած հարստահարողներուն, ապականածներուն, անարդար իշխանութիւններուն եւ կառույցներուն:

Կիրակի, 31 Մայիս 2020

Կը խորհիմ, թէ ներկայ ժամանակը պիտի անցնի, սակայն համաճարակին արձագանգը պիտի շարունակէ լսելի դառնալ: Շատեր պիտի պատմեն իրենց

մղձաւանջներուն մասին, եւ մարդոց հետ բաժնեն իրենց փորձառութիւնները, բազմաթիւ գիրքեր պիտի գրուին, վաւերագրական արձանագրութիւններ կատարուին եւ շարժանկարի ժապաւէններ պիտի պատրաստուին: Քովիտ-19 համաճարակը պատմութեան մէջ կրնայ արձանագրուիլ իբրեւ Համաշխարհային Երկրորդ Պատերազմէն ետք ի յայտ եկած մեծագոյն տագնապը:

Որքա՞ն ժամանակ ետք կարելի պիտի ըլլայ ապահովապէս խօսիլ «Քովիտ-19 համաճարակէն ետք» հանգրուանին մասին: Մարդիկ տակաւին կը մնան արգելափակուած: Սրտովին կ'աղօթեմ, որ մարդկութիւնը շուտով ապրի յետ համաճարակի վերաշխուժացման շրջան մը: Սակայն, հարկ է հաշտուիլ այն ցաւալի իրականութեան հետ, որ մարդկութիւնը տակաւին չէ ձերբազատուած քորոնա վիրուսէն, որ առաւել սաստկութեամբ եւ արագութեամբ նոր տարբերակներով կը յայտնուի շատ մը քաղաքներու մէջ: Փորձագէտներու համաձայն, քորոնա վիրուսին յաղթելն ու բնականոն կեանքի վերադառնալը հաւանաբար շատ դժուար եւ բարդ գործընթաց մը պիտի ըլլայ: Հարկ է ըլլալ իրապաշտ. այնպէս կը թուի, թէ բնականոն կեանքի վերադարձը այնքան ալ շուտ պիտի չիրականանայ: Բժիշկներու եւ Համաշխարհային Առողջապահութեան Կազմակերպութեան համաձայն վիրուսը պիտի շարունակէ սպառնալիք մը մնալ աննախատեսելի ժամանակով:

Լիբանանեան Լօրիան Լը-ժուր օրաթերթի այսօրուան խմբագրականին մէջ ակնարկելով համաճարակին, զայն կը բնորոշէ որպէս «Քորոնա վիրուս պատերազմ» մը: Արդեօ՞ք վիրուսներու դէմ պատերազմի ժամանակը պիտի սկսի: Այնպէս կը թուի, թէ կախարդական լուծում մը չկայ եւ թէ կարելի պիտի չըլլայ մօտ ատենէն սովորական առօրեայ կեանքին վերադառնալ: Մեր վախն ու անձկութիւնը կրնան որոշ ժամանակ մը շարունակուիլ. թերեւս հարկ ըլլայ մեր կենցաղակերպին մէջ կարգ մը նոր սովորութիւններ ներառել: Կարգ մը մասնագէտներ նոյնիսկ կը խօսին քորոնա վիրուսի նոր եւ աւելի զօրաւոր տարբերակներու մասին: Ուրիշներ կը նախատեսեն, որ յայտնուին խտրականութեան, բռնութեան եւ անհանդուրժողութեան արտայայտութիւններ, ներառեալ՝ համաշխարհային տնտեսական աղէտ եւ զանգուածային սովամահ: Ճի՛շդ է, պէտք չէ յոռետես ըլլալ, սակայն հարկ է ըլլալ իրապաշտ: Ես կը հաւատամ, որ համաճարակէն ետք, մեր կեանքը իր բոլոր բնագաւառներով, տարածքներով եւ արտայայտութիւններով վերաքննելն ու վերակազմակերպելը հրամայական պահանջք պիտի ըլլայ: Վարակիչ հիւանդութեանց մասնագէտներ կը հաւատան, որ քորոնա վիրուսը, ի վերջոյ պիտի յաղթահարուի կա՛մ պատուաստի միջոցաւ եւ կա՛մ աստիճանական անհետացումով: Մինչ այդ, սակայն, մարդիկ պէտք է լրջօրէն հետեւին ընկերաբժշկական մասնագէտներու թելադրութիւններուն, որպէսզի կարենան անոր հետ յարմարելով իրենց կեանքը շարունակել:

Դպրոցներն ու համալսարանները արդէն իսկ որդեգրած են առցանց դասաւանդութեան կերպը. կրօններ, հաստատութիւններ եւ ընկերութիւններ

կրճատած են իրենց աշխատանքները եւ վերանայած իրենց ծրագիրներն ու ժամանակացույցը: Այնպէս կը թուի, որ մարդիկ, գէթ որոշ ժամանակի մը համար, իրենց հարազատ դէմքով պիտի չներկայանան: Զանազան գոյներով եւ վաճառանիշերով դիմակները անհրաժեշտութիւն պիտի դառնան, եւ ոմանց համար նոյնիսկ՝ նորոյթ. դիմակներու ետին պահուած իսկական դէմքերը, ժպիտները կամ թախիծը զանազանելը դժուար պիտի ըլլայ...:

Կը գտնուինք նոր կացութեան մէջ: Համաճարակը խորապէս այլակերպեց ընկերային կեանքը, նուազեցուց մարդուժի որակը, խափանեց հաստատուած կանոնները, փոխեց օրակարգի առաջնահերթութիւնները, նուազեցուց կազմակերպութեանց արդիւնաւորութիւնը, վտանգեց տնտեսութիւնը, սահմանափակեց տարածութիւնը եւ փոխեց մարդկային յարաբերութեան բնոյթը: Համաճարակին յաջորդող ժամանակաշրջանին, մենք պէտք չէ պարզապէս անցեալին վերադառնանք, այլ պէտք է լծուինք մեր անհատական, ընտանեկան եւ ընկերութեան կեանքի վերականգնումի, վերակառուցման ու վերակազմակերպման աշխոյժ եւ ազդու գործընթացի՝ բացուելով նոր իրականութիւններու եւ փորձառութիւններու: Պէտք է խոհեմութեամբ ու քաջութեամբ դիմագրաւենք մարտահրաւէրը՝ աւելի լաւ ապագայ մը կերտելու, եւ ջանանք վերատեսութեան ենթարկել մեր վերաբերումը տիեզերքին նկատմամբ, վերարժեւորենք տազնապներ դիմագրաւելու մեր եղանակը, մեր ինքնահակազդեցութիւնը որպէս Աստուծոյ պատկերով ստեղծուած արարածներ:

Մենք կ'ապրինք քայքայուած աշխարհի մը եւ դժուար ժամանակներու մէջ: Անհրաժեշտ է կարգալ «ժամանակի նշանները» եւ ճշդել մարդկութեան ապագան: Աստուծմէ հեռու աշխարհը ամայի եւ վտանգաւոր վայր մըն է: Առանց Աստուծոյ փոխակերպող ներկայութեան՝ աշխարհը անհաստատ, անկայուն եւ անորոշ պիտի մնայ: Մարդկութիւնը պիտի շարունակէ ապրիլ ինքզինք բնաջնջելու վտանգին տակ՝ այնքան ատեն որ պատասխանատուութեան եւ հաշուետուութեան գիտակցութիւնը չունի:

Կ'աղօթեմ, որ գալիք սերունդները զերծ մնան նման դառն փորձառութենէ: Կ'աղօթեմ որ անոնք աւելի իմաստութեամբ եւ քաջութեամբ, աւելի ուժեղ եւ կազմակերպ կերպով յաղթահարեն նման համաշխարհային սպառնալիքները:

Կ'աղօթեմ, որ քորոնա վիրուսի ահաւոր վտանգէն ետք, աւելի յանձնառու, համերաշխ եւ գորովալից ու գթառատ մարդկութիւն մը յառաջանայ:

2020 տարին յատկանշուեցաւ Քովիտ-19 համաճարակով, որ եղաւ կործանարար, եւ որուն հետեւանքները իրենց ժխտական անդրադարձը ունեցան մարդկային կեանքի բոլոր մարզերուն վրայ: Կ'աղօթեմ, որ գալիք տարիները համայն մարդկութեան համար ըլլան երջանկաբեր եւ բարգաւաճ տարիներ:

ԱՍՏՈՒԾՈՅ ԴԱՌՆԱԼ

Կեանքիս մէջ միշտ կ'արձագանգեն միջ-եկեղեցական պաշտամունքներու ընթացքին յաճախ արտասանուած աղօթքի հետեւեալ բառերը. – «Չնորհք ըրէ

Տէ՛ր, որ յոյս սփռենք հոն՝ ուր յուսահատութիւն կայ, լոյս ըլլանք հոն՝ ուր խաւար կայ, եւ տուր որ կարենանք բարոյալքուած աշխարհը բարեփոխութեան առաջնորդել»:

Միթէ այս չէ՞ եղած կրօնին հիմնական առաքելութիւնը՝ աշխարհի բոլոր կողմերը եւ բոլոր ժամանակներուն մէջ: Միթէ այս պէտք չէ՞ ուսուցանեն բոլոր կրօնները:

Ներկայ աշխարհի քառասային վիճակներուն մէջ, մենք շատ քիչ ժամանակ ունինք ըլլալու մեր անձերուն, մեր ընտանիքներուն եւ նոյնիսկ Աստուծոյ հետ...: Արդարեւ, մեր աշխատանքներն ու շահերը, մեր հաճոյքներն ու փառամոլութիւնը առաջնահերթ եւ կարեւոր տեղ կը գրաւեն մեր կեանքին մէջ:

Յաճախ զԱստուած առանձին կը ձգենք, որովհետեւ զբաղած կ'ըլլանք ոչ-աստուածահաճոյ գործերով:

Սակայն, Աստուած մի՛շտ կը խօսի մեզի: Արդեօք տրամադի՞ր ենք զի՞նք լսելու:

Աստուած մի՛շտ կը մօտենայ մեզի: Արդեօք պատրա՞ստ ենք դառնալու իրեն:

Իրաւամբ, մեր կեանքը դատարկ է ու անիմաստ՝ առանց Աստուծոյ:

Քորոնա վիրուսի տագնապը իր ցնցիչ ահազանգով յիշեցուց մեզի ԱՍՏՈՒ-ԾՈՅ ԴԱՌՆԱԼՈՒ հրամայական անհրաժեշտութիւնը:

Աստուծոյ դառնալ կը նշանակէ՝ դառնալ տիեզերքի Արարիչին, կենաց աղբիւրին, մեր երկնաւոր Հօր, որ Իր Միածին Որդւոյն միջոցաւ դարձաւ մեզի եւ մեզ հրաւիրեց իրեն դառնալու:

Աստուծոյ դառնալը խոստովանութիւն եւ ապաշխարութիւն կ'ենթադրէ:

Աստուծոյ դառնալ կը նշանակէ զԱստուած վերստին մեր կեանքին մէջ ընդունիլ:

Աստուծոյ դառնալով դարձած կ'ըլլանք մեր նմանին՝ սիրով եւ կարեկցութեամբ:

Աստուծոյ դառնալը նոր որակ կու տայ մեր կեանքին՝ հաւատքով, յոյսով եւ սիրով լեցուն:

Ժամանակն է, որ դառնանք Աստուծոյ:

Ժամանակն է, որ գերագոյն Ամենակարողին ներգործող ներկայութիւնը զգանք մեր կեանքին մէջ:

Ժամանակն է, որ խոստովանինք թէ շատ փոքր ենք Աստուծոյ մեծութեան դիմաց, եւ՝ հաշուետու իրեն:

Ժամանակն է, որ կրօններ աղօթքով միանան եւ խօսքով թէ գործով հաստատեն հանդուրժողութեան, ոչ-բռնութեան, արդարութեան եւ խաղաղութեան առանցքային կարեւորութիւնը՝ որպէս հիմնական արժէքները մեր հասարակաց կեանքին:

Առանց Աստուծոյ պայծառակերպող ներկայութեան, մեր կեանքը անիմաստ է ու աննպատակ:

Առանց Աստուծոյ հզօր ներգործութեան, մեր կեանքը չար ուժերով, մտածումներով եւ անարդար կառույցներով պիտի տիրապետուի:

Առանց Աստուծոյ փրկարար միջամտութեան, մեր կեանքը ենթակայ պիտի ըլլայ ահաւոր վտանգներու:

Անորոշութեան եւ յուսահատութեան մէջ, աշխարհի ամբողջ տարածքին, մարդիկ զանազան կերպերով կը փարին հաւատքին եւ յոյսին, համերաշխութեան եւ միասնութեան: Իրօք, տագնապը գերագոյնին յոյսը կու տայ մեզի եւ մեզ իրարու կը մօտեցնէ, յիշեցնելով մեզի մեր տկարութիւններն ու թերութիւնները: Տագնապը մեզ դէպի Աստուած կ'առաջնորդէ:

Եկէք դառնանք Աստուծոյ. այն ատեն կ'անդրադառնանք, որ ան արդէն իսկ դարձած է մեզի:

Եկէք մօտենանք Աստուծոյ. այն ատեն կ'անդրադառնանք, որ ան արդէն մօտեցած է մեզի:

Եկէք Աստուծոյ դառնանք. այն ատեն կ'անդրադառնանք, որ ան դատաւոր մը չէ, այլ՝ սիրող եւ հոգատար Հայր մը:

Աստուծոյ դառնալը կը զօրացնէ մեզ՝ պայքարելու այնպիսի երեւոյթներու դէմ, որոնք կը խախտեն աշխարհի համակարգը, կը քայքայեն ընկերութիւնները եւ կը վտանգեն տիեզերքին գոյատեւումը:

Աստուծոյ դառնալը խթան կը հանդիսանայ ինքնաքննութեան եւ ինքնասրբագրութեան՝ Աստուծոյ Արքայութեան հեռանկարով:

Աստուծոյ դառնալը կը վերականգնէ մեր մէջ Աստուծոյ պատկերը, որ ազաւազուած է:

Աստուծոյ դառնալը կը վերադարձնէ մեզ մեր մարդկային վաւերական արմատներուն: Աստուծոյ դառնալով լիովին կը ճանչնանք մեր ինքնութիւնը եւ Աստուծոյ մէջ կը գտնենք մեր համամարդկային ինքնութիւնը:

Ողջ պատմութեան ընթացքին Աստուած մեզի դարձաւ ինքզինք յայտնելով, եւ մարդուն հետ ունեցած հաղորդութեան միջոցաւ, ինչպէս նաեւ՝ Քրիստոսի մարդեղութեան եւ փրկարար առաքելութեան ճամբով:

Արդ, պատրաստ ենք Աստուծոյ դառնալու: Եկէք յիշենք Քրիստոսի խոստումը՝ «ես միշտ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչեւ աշխարհիս վախճանը» (Մտ 28.20):

Պատրաստ ենք Աստուծոյ հետ ըլլալու, որ Իր Միածին Որդւոյն՝ Յիսուս Քրիստոսի միջոցաւ դարձաւ էմմանուէլ. այսինքն՝ «Աստուած մեզի հետ» (Մտ 1.23):

Անգլերէնէ թարգմանեց՝
ՄԱԿԱՐ ԵՊՍ. ԱՇԳԱՐԵԱՆ

(Շար. 14 եւ վերջ)

ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷՈՍ ԱԲԵՏԱՐԱՆԻ (3.11-12)

«Ես ձեզ ջուրով կը մկրտեմ ապաշխարութեան իբրեւ նշան, բայց ան որ ինձմէ ետք կու գայ, անիկա ձեզ Սուրբ Հոգիով եւ կրակով պիտի մկրտէ» (Մտ 3.11):

1) Տարբերութիւնը Յովհաննէս Մկրտիչի մատուցած ջուրի մկրտութեան եւ Սուրբ Հոգիի ու կրակի մկրտութեան.–

ա) Յովհաննէս ջուրի մկրտութեամբ մարդիկը ապաշխարութեան հրաւիրեց (Գրծ 13.24, 19.4), իսկ Յիսուս, Սուրբ Հոգիի ու կրակի մկրտութեամբ մարդիկը նորոգութեան հրաւիրեց (Տիտ 3.5): Աշակերտները Սուրբ Հոգիի ու կրակի մկրտութիւնը ստացան Պենտէկոստէի օրը, երբ Սուրբ Հոգին կրակէ լեզուներու կերպարանքով յայտնուեցաւ եւ իրենց վրայ հանգչեցաւ (Գրծ 2.1-4):

բ) Յովհաննէսի պարգեւած ջուրի մկրտութիւնը մեղքերու խոստովանութեան ու թողութեան համար էր (Մր 1.4-5: Ղկ 3.3), իսկ Յիսուսի շնորհելիք Սուրբ Հոգիի ու կրակի մկրտութիւնը՝ մեղքերու քաւութեան համար:

գ) Յովհաննէսի պարգեւած ջուրի մկրտութեան նպատակը՝ մարդիկը Յիսուսի մօտեցնելն էր, իսկ Սուրբ Հոգիի ու կրակի մկրտութեան նպատակը՝ զանոնք Յիսուսի միացնելը:

դ) Յովհաննէսի պարգեւած ջուրի մկրտութիւնը մարդիկը կը պատրաստէր նոր ծնունդի, իսկ Սուրբ Հոգիի ու կրակի մկրտութիւնը՝ այդ նոր ծնունդն իսկ էր (Տիտ 3.5: Յհ 3.5-8):

ե) Յովհաննէսի ջուրի մկրտութիւնը մարդիկը կը հեռացնէր Սատանայի որդեգրութենէն, իսկ Սուրբ Հոգիի ու կրակի մկրտութիւնը՝ զանոնք կ'որդեգրէր Աստուծոյ:

զ) Յովհաննէսի պարգեւած ջուրի մկրտութիւնը՝ մարդուն մէջ հին մարդը կը մեռցնէր, իսկ Սուրբ Հոգիի ու կրակի մկրտութիւնը՝ մարդուն մէջ նոր մարդը կ'արթնցնէր: Մեզի ուղղուած հարցումը հետեւեալն է.– Մենք ջուրի մկրտութիւնը ունինք, բայց ունինք նաեւ Սուրբ Հոգիի ու կրակի մկրտութիւնը, այլ խօսքով՝ մեռած է մեր մէջ հին մարդը, եւ դարձած ենք Աստուծոյ բնա-

կարան: Ո՛չ ոք թող փորձէ ինքզինք կամ ուրիշը խաբել, ըսելով՝ որ եթէ մէկը մկրտուած է՝ իր մէջ մեռած է հին մարդը եւ յարութիւն առած է նոր մարդը: Այսօր բազմամիլիոն հայորդիներ ունինք որոնք մկրտուած են իրենց մանուկ տարիքին, որոնք, սակայն, նոյնիսկ եթէ մկրտութեան ժամանակ ապրած են իրենց վերածնունդը, այսօր սակայն հեթանոսներու նման կ'ապրին, որովհետեւ կ'ապրին առանց Աստուծոյ եւ առանց Աստուածաշունչին, առանց աղօթքի եւ առանց առաքինութեանց, առանց սիրոյ եւ առանց գթութեան: Այսօր դժբախտաբար մեր կատարած մկրտութիւնները Յովհաննէսի պարգեւած ջուրի մկրտութիւնը եղած են, եւ ո՛չ թէ Քրիստոսի պարգեւած Սուրբ Հոգիի ու կրակի մկրտութիւնը, եւ անոր համար ալ մկրտեալ մանուկին մէջ յարութիւն չ'առնէր նոր մարդը, եւ նոյնիսկ եթէ առնէ՝ իսկոյն ետ կը մեռնի, որովհետեւ քրիստոնէական դաստիարակութիւն չի ջամբուիր անոր, իսկ առանց քրիստոնէական դաստիարակութեան՝ մանուկին մէջ ողջ չի մնար նոր մարդը, այլ խօսքով՝ Քրիստոսապատկեր եւ Քրիստոսապատկան մարդը: Մկրտութեան ժամանակ որպէսզի մանուկ մը Սուրբ Հոգին ստանայ, այդ Հոգին հաւատքով կանչող մը պէտք է ըլլայ. իսկ եթէ Հոգին հաւատքով կանչող մը չկայ՝ կ'իջնէ՞ Հոգին: Զարեհ Արք. Ազնաւորեանը կը բացատրէ, թէ «Սուրբ Հոգին կախարդական ուժ մը չէ, որ մկրտութեան արարողութիւնը սկսածին պէս՝ մեքենաբար իջնէ մկրտութեան ջուրին վրայ. անիկա կ'իջնէ հաւատքի կանչի մը պատասխան իբրեւ»: Իսկ եթէ հաւատքի այդ կանչը չկայ՝ Սուրբ Հոգին կ'իջնէ՞: Ըսել թէ Սուրբ Հոգիին մանուկին վրայ էջքը կախեալ չէ մկրտող քահանային, կամ մանուկին մօրը ու հօրը հաւատքէն, կամ կնքահօր ու կնքամօր հաւատքէն՝ այրած սրտի մխիթարանք է: Եթէ կախեալ չէ, հապա ինչո՞ւ կ'ուսուցանենք թէ մանուկը իր հօրը ու մօրը հաւատքին հիման վրայ է որ կը մկրտուի: Եթէ հաւատքի այդ հիմը չկայ, ի՞նչ բանի հիման վրայ մանուկը կը մկրտուի: Եւսերիոս Ստեֆանոս կ'ըսէ. «Մկրտութեան ջուրը վերածնունդ տալու զօրութիւնը ունի համաձայն ուղղափառ վարդապետութեան, բայց սա չի նշանակեր թէ մկրտութեան խորհուրդը կը գործէ կրօնական կախարդութեան նման: Անձնապէս եւ խնդիր չունիմ մանուկներու մկրտութեան վաւերականութեան հետ, բայց զիս կ'անհանգստացնէ, որ մեր ուղղափառ եկեղեցիներուն մէջ մեծ թիով հեթանոսներ ունին»¹:

2) Ի՞նչ կը հասկնանք «կրակի մկրտութիւն» ըսելով.՝

ա) Սուրբ Հոգիի մկրտութիւնը կը կոչուի նաեւ կրակի մկրտութիւն, որով-

¹ Eusebius A. Stephanou, «*Sacramentalized but not Evangelized*», U.S.A., 2005, էջ 118: Այս նիւթին առնչութեամբ ընդարձակ կերպով խօսած եմ: Տե՛ս Յն 3.5-ի բացատրութիւնը ամբողջութեամբ, բայց յատկապէս 5-րդ կէտը:

հետեւ, երբ Սուրբ Հոգին լեցնէ մարդը՝ կրակ կը դառնայ մարդուն սէրն ու հաւատքը Աստուծոյ հանդէպ: Սուրբ Հոգին՝ Աստուծոյ կրակն է: Կրնանք լեցուիլ Սուրբ Հոգիին կրակով (Գրծ 2.3-4), եւ կրնանք միաժամանակ մարել Սուրբ Հոգիին կրակը մեր մէջ (Ա.Թս 5.19): Կրակով մկրտուիլը՝ Սուրբ Հոգիով լեցուիլն է:

բ) Տիրոջ հրեշտակը խօսեցաւ Մովսէսի հետ կրակով այրող բայց անկիզելի մնացող մորենիին մէջէն (Ել 3.2-4): Տիրոջ հրեշտակը Քրիստոս է, կրակը՝ Սուրբ Հոգին, իսկ մորենին՝ Ս. Կոյս Մարիամ: Մարիամի յղացումը Սուրբ Հոգիով՝ անոր մկրտութիւնն էր Հոգիին կրակով: Անոնք որոնք կը մկրտուին Սուրբ Հոգիով՝ Մարիամի նման Աստուծոյ Որդին իրենց մէջ կ'առնեն: Իսկ երբ Յիսուս ծնի մեր մէջ՝ իր ծնունդով մեր ծնունդը կ'ապրինք:

գ) Կրակը միշտ դէպի վեր կը ձգտի: Սուրբ Հոգիի կրակի մկրտութեան փորձառութիւնը ունեցողը՝ սրտով ու հոգիով վեր կը բարձրանայ, եւ միայն վերնայինը կը խորհի: Սուրբ Հոգիին կրակով մկրտուողը՝ իր յարութիւնն է որ կ'ապրի Քրիստոսի հետ, իսկ Քրիստոսի հետ իրենց յարութիւնը ապրողներուն համար Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Քանի որ յարութիւն առիք Քրիստոսի հետ, այսուհետեւ ձեր ուշադրութիւնը երկիմբ դարձուցէք, որովհետեւ հոն է Քրիստոս, Հօր Աստուծոյ կողմը² նստած: Երկնաւոր բաներու մասին խորհեցէք եւ ո՛չ թէ երկրաւոր բաներու» (Կղ 3.1-2):

դ) Կրակի մկրտութիւնը կեանքի նեղութիւններն են նաեւ (Մտ 20.22), որոնց կրակով Տէրը կը փորձէ մաքրել մեղքի ժանգը մեր կեանքէն: Հրեաներ այդ կրակով շմաքրուեցան. «...Անոր ժանգը կրակով շելաւ ...» (Եզ 24.12): Պետրոս առաքեալ նաեւ փորձութիւնները կրակի կը նմանցնէ. «Սիրելիներ, տարօրինակ մի՛ համարէք ոեւէ փորձութիւն, որ կրակի պէս կ'այրէ ձեզ: Անբնական բան մի՛ համարէք զայն, այլ՝ Քրիստոսի շարշարաններուն մասնակցութիւն նկատեցէք եւ ուրախացէք, որպէսզի երբ Քրիստոս իր փառով յայտնուի՝ նոյնպէս ցնծութեամբ ուրախանաք: Եթէ Քրիստոսի անունին համար նախատուիք՝ երանելի էք, որովհետեւ կը նշանակէ՝ թէ Աստուծոյ փառաւորիչ Հոգին ձեր վրայ հանգչած է» (Ա.Պտ 4.12-14): Կրակի մկրտութիւնը, փորձութեանց ու նեղութեանց կրակներուն մէջ մկրտուիլ եւ անոնց միջոցաւ մաքրուիլ է, Սուրբին ձեռքով սրբուիլ ու սուրբ հռչակուիլ է:

«Անիկա ինձմէ աւելի հզօր է, եւ ես անոր կօշիկները կրելու իսկ արժանի չեմ» (Մտ 3.11):

1) «Անիկա ինձմէ աւելի հզօր է»: Յիսուս ինչո՞վ Յովհաննէս Մկրտիչէն

² Յունարէն բնագիրին մէջ ունինք «աջ կողմը»:

աւելի հզօր էր: Ան Յովհաննէսէն աւելի հզօր էր ամէն ինչով եւ ամէն իմաստով: Յիսուս Աստուած ըլլալուն համար չէր որ Յովհաննէսէն աւելի հզօր էր, այլ՝ աշխարհ բերած իր փրկութեան պատճառով: Յովհաննէս փրկութիւն կը քարոզէր, իսկ Յիսուս քարոզուած փրկութիւնն իսկ էր: Յովհաննէս ապաշխարել ու մեղքերէ սրբուիլ կը քարոզէր, իսկ Յիսուս ապաշխարութեան արցունք պարգեւողն ու մարդս սրբողն էր: Յովհաննէս արքայութեան ճամբան կը քարոզէր, իսկ Յիսուս նոյնինքն արքայութեան ճամբան էր: Յովհաննէս Սուրբ Հոգիի մկրտութիւն խոստացողն էր, իսկ Յիսուս խոստացուած Սուրբ Հոգիի մկրտութիւնը պարգեւողը:

2) «Ես անոր կօշիկները կրելու իսկ արժանի չեմ»: Անցեալին կօշիկները կրելը ծառայի մը պարտականութիւնն էր: Յովհաննէս իր այս յայտարարութեամբ ինքզինք Յիսուսի ծառայ կը յայտարարէ: «Արժանի չեմ» բառերով, ան ինքզինք անարժան կը գտնէ Յիսուսի ծառան անգամ ըլլալու: Այսօր շատ հաւատացեալներ Յիսուսը կը կոչեն իրենց բարեկամն ու եղբայրը. ասոր մէջ սխալ բան չկայ. բայց երանի Յովհաննէսէն սորվին քիչ մը խոնարհ ըլլալ, եւ իրենք զիրենք Յիսուսի ծառաները անգամ ըլլալու անարժան նկատել, որպէսզի Տէրը ինք մեծարէ զիրենք, եւ ո՛չ թէ իրենք ըլլան իրենց անձերը մեծարողները: Յովհաննէս ինքզինք խոնարհեցուց երբ ըսաւ. «Ես անոր կօշիկները կրելու իսկ արժանի չեմ», իսկ Տէրը բարձրացուց ու պատուեց զայն երբ ըսաւ. «Կատան եղիք, թէ մարդոց մէջ Յովհաննէս Մկրտիչն մեծը չէ ծնած» (Մտ 11.11): Բոլոր անոնք որոնք իրենք զիրենք կը խոնարհեցնեն Աստուծոյ հզօր ձեռքին տակ, երբ յարմար ժամանակը գայ՝ Աստուած զիրենք պիտի բարձրացնէ (Ա.Պտ 5.6: Յկ 4.10):

3) Գիտենք որ անցեալին կօշիկը կը շինուէր մեռած կենդանիի կաշիով: Յովհաննէս գիտէր որ Յիսուս Աստուծոյ Գառնուկն էր որ աշխարհ եկած էր մարդոց մեղքերը իր վրայ առնելու եւ անոնց փրկութեան համար մեռնելու (Յհ 1.29): Այս առումով, երբ կ'ըսէ թէ ինք արժանի չէ Յիսուսի կօշիկները կրելու, ըսել կ'ուզէ թէ ինք արժանի չէ Յիսուսի կատարելիք գործը (մարդոց փրկութեան համար մեռնելու գործը) իր վրայ առնելու, այլ խօսքով՝ ինք մեռնելու մարդոց փրկութեան համար: Իսկ այլ առիթով երբ կ'ըսէ թէ արժանի չէ Յիսուսի կօշիկներուն կապերը քակելու, ըսել կ'ուզէ թէ ինք չէ որ պիտի ճշդէ թէ ե՛րբ պիտի մեռնի Յիսուս: Կապերը քակելը՝ Տիրոջ առաքելութեան աւարտը յայտարարել կը նշանակէ, եւ ասիկա Յովհաննէսը ինք չէր որ պիտի ընէր, այլ՝ Տէրը:

4) Կարգ մը մեկնիչներ կ'ըսեն, թէ Յովհաննէս գիտէր որ Յիսուս մարդեղացած Աստուածն էր, ուստի երբ կ'ըսէր թէ ինք արժանի չէ անոր կօշիկները

կրելու կամ անոր կօշիկին կապերը քակելու, ըսել կ'ուզէր թէ ինք արժանի չէր դպնալու մարդեղացած Աստուծոյ: Եթէ Յովհաննէս ինքզինք արժանի չէր նկատէր դպնալու մարդեղացած Աստուծոյ կամ անոր կօշիկին, որքա՛ն աւելի մենք, պէտք չէ մենք մեզ արժանի նկատենք դպնալու Տիրոջ մարմինին, որովհետեւ լեցուն ենք մեղքով: Յովհաննէս ինքզինք արժանի չէր համարեր Տիրոջ կօշիկին մօտենալու, իսկ այսօրուան հաւատացեալները ամենայն անարժանութեամբ Տիրոջ մարմինին ու արեան կը մօտենան:

5) Եթէ Յիսուս մարմին չառնէր ու չմարդեղանար՝ կօշիկ պիտի չհագնէր: Այս իրողութեան վրայ հիմնուելով, Մեծն Գրիգորիոս Պապ եւ այլ մեկնիչներ կ'ըսեն, թէ երբ Յովհաննէս ինքզինք արժանի չի համարեր Տիրոջ կօշիկները կրելու, ըսել կ'ուզէր թէ ինք չէր կրնար հասկնալ Աստուծոյ Որդիին մարդեղութեան խորհուրդը: Ուրեմն, կօշիկները չկրելը կամ անոր կապերը չքակելը՝ անոր մարդեղութեան խորհուրդը չհասկնալ կը նշանակէ:

«Հեծանոցը իր ձեռքին, ան պիտի մաքրէ իր կալը, ցորենը հաւաքէ շտեմարանին մէջ, իսկ յարդը այրէ անջէջ կրակով» (Մտ 3.12):

1) Հեծանոցը (կոշուած նաեւ հոսելի կամ եղան) եռաժանիք կամ քառաժանիք այն գործիքն է, որ կը գործածուի կալին (հացահատիկը կալսելու տեղ) մէջ, յարգախառն ցորենը հովին տալով յարդը ցորենէն զատելու համար: Այստեղ հեծանոցը խորհրդանշիչ մըն է Աստուծոյ դատաստանին: Ինչպէս հեծանոցը յարդը ցորենէն կը զատէ, այնպէս ալ Աստուծոյ դատաստանը պիտի զատէ իրարմէ յարգանման եւ ցորենանման, այլ խօսքով՝ ամբարիշտ եւ հաւատացեալ մարդիկը (Ջարեհ Արք. Ազնաւորեան):

2) Հեծանոցը կը խորհրդանշէ նաեւ Քրիստոսի խաչը: Տէրը իր խաչի հեծանոցով պիտի բաժնէ իրարմէ հաւատացեալներն ու անհաւատները, խաչի երկրպագունները ցորենի նման պիտի ժողվէ իր արքայութեան շտեմարանին մէջ, իսկ խաչը ուրացողները յարդի նման պիտի նետէ անշիջանելի բոցին մէջ (Ներսէս Շնորհալի):

3) «Հեծանոցը իր ձեռքին մէջ»: Այս բառերը կը պարզեն, թէ մարդիկը դատելու իշխանութիւնը կը գտնուի Յիսուսի ձեռքին մէջ. «Հայրը ոեւէ մէկը չի դատեր, այլ դատելու իշխանութիւնը ամբողջութեամբ յանձնած է Որդիին» (Յհ 5.22): Որդիին ձեռքով չազատողը՝ Որդիին ձեռքէն պիտի չազատի: Իւրաքանչիւրը որ կամովին մեղք կը գործէ՝ խաչ բարձրացուցած կ'ըլլայ Որդին որ իր արիւնը հեղուց մեզ ազատագրելու մեղքի ստրկութենէն:

4) «Ան պիտի մաքրէ իր կալը»: «Կալ»ը կը ներկայացնէ աշխարհը, իսկ «մաքրել» բառը ցոյց կու տայ, որ Յիսուս աշխարհէն պիտի հեռացնէ ու վեր-

ցընէ յարդանման մարդիկը (Մտ 13.41-42): Աստուած աշխարհը շտեղծեց որ-պէսզի յաւերժապէս մեղքով բնակուած մնայ. պիտի գայ ժամանակ երբ Աստուած երկրի երեսէն պիտի կորսնցնէ շարագործները եւ «Տիրոջ համբերողները երկիրը պիտի ժառանգեն» (Սղ 37.9): Պիտի գայ ժամանակ երբ Աստուած պիտի չքացնէ ամբարիշտները եւ «հեզերը պիտի ժառանգեն երկիրը» (Սղ 37.10-11: Մտ 5.5): Պիտի գայ ժամանակ երբ Աստուած աշխարհէն պիտի հեռացնէ անարդարներն ու անարդարութիւնը եւ երկրի վրայ «արդարութիւնը պիտի իշխէ» (Բ.Պտ 3.13), եւ «արդարները պիտի ժառանգեն երկիրը» (Սղ 37.29):

5) «Յորենը հաւաքէ շտեմարանին մէջ»: Յորենը կը պատկերացնէ Քրիստոսի սիրով ու հաւատքով լեցուած ու ատոքացած մարդիկը: «Հաւաքելը՝ Աստուծոյ զաւակները մէկտեղել ու մէկ ընտանիքի վերածել կը նշանակէ: Իսկ «շտեմարան»ը՝ Աստուծոյ սիրտն է, անոր արքայութիւնն է, անոր անմիջական ներկայութիւնն է: Յորենը շտեմարանին մէջ հաւաքելը՝ հաւատացեալները իր սրտին, իր արքայութեան ու ներկայութեան մէջ առնել եւ իբրեւ իր սեփականութիւնը ճանչնալ կը նշանակէ:

6) «Իսկ յարդը այրէ անշէջ կրակով»: Եթէ հասկը ցորենահատիկներով չլեցուի՝ յարդի կը վերածուի, իսկ յարդը կրակի կը մատնուի, եւ կամ անասուններու կեր կը դառնայ: Այս առումով, «յարդը» կը պատկերացնէ չլեցուած մարդիկը, դատարկ մարդիկը, առաքինութիւններէ դատարկուած անհաւատ մարդիկը, անմաքուր ու խաբեբայ մարդիկը, իսկ «այրելը»՝ անոնց պատիժն ու շարշարանքը. «անշէջ» (չմարող) բառը պատիժին յաւիտենական ըլլալը ցոյց կու տայ, իսկ «կրակ»ը՝ դատաստանին խստութիւնը: Կրակը կ'այրէ չորցած բաները. անոնք որոնք չորցած են իրենց հոգեւոր կեանքին մէջ՝ ենթակայ պիտի ըլլան գեհենի կրակին:

ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ

(Շար. 7)



ՍՈՒՐԲ ԳՐԱՅԻՆ

ՅԻՍՈՒՍԻ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐԸ ԿԱՄ ԱՌԱՔԵԱԼՈՒՀԻՆԵՐԸ

ՆԱԽԱԲԱՆ

Երբ ընթերցենք Մատթէոս, Մարկոս եւ Յովհաննէս աւետարանիչներուն գրած աւետարանները, հոն կը տեսնենք, թէ տիրապետող սեռը արականն է: Անոնց մէջ չենք հանդիպիր որեւէ հատուածի, ուր արձանագրուած է, թէ Քրիստոսի հետ առաքեալներուն կողքին կիներ կը շրջէին: Սակայն երբ բանանք Ղուկասու Աւետարանի 8.2-3 համարները, հոն կը հանդիպինք կիներու, որոնք Քրիստոսի մշտական ընկերակիցներն էին: Աւետարանիչը կը գրէ. «Իրեն յՔրիստոսի[հետ էին նաեւ կարգ մը կիներ, որոնք շար ոգիներ է եւ հիւանդութիւններէ բժշկուած էին, ինչպէս Մարիամը, որ Մագդաղենացի կը կոչուէր եւ որմէ եօթը ոգի հանած էր, Հերովդէսի պալատին վերակացու Քուզայի կիներ՝ Յովհաննան, Շուշանը, ինչպէս նաեւ շատ ուրիշներ, որոնք իրենց միջոցներով կը հոգային Յիսուսի պէտքերը» (Ղկ 8.2-3):

Դիտելի է, թէ աւետարանիչը ո՛չ միայն յիշած է կիներուն ներկայութիւնը Յիսուսի առաքելութեան մէջ, այլ զանոնք իրենց անուններով կոչած է: Թերեւս այս երեւոյթը 21-րդ դարուն մէջ ապրողներու համար սովորական կը թուի, մանաւանդ որ կ'ապրինք դարու մը մէջ, ուր ֆեմինիզմը իր յստակ ներկայութիւնը հաստատած է ամէնուրեք: Սակայն, Մատթէոս, Մարկոս եւ Յովհաննէս առաքեալներուն մօտեցումը մեր հետաքրքրութիւնը շարժելով, թոյլ կու տայ մտածելու, թէ ի՞նչ էր վիճակը կնոջ եւ ընդհանրապէս իգական սեռին՝ Քրիստոսի երկրաւոր առաքելութեան ընթացքին եւ Քրիստոսի աշխարհ գալուստով ի՞նչ փոփոխութիւն տեղի ունեցած է այդ իմաստով: Այս հարցումներուն պատասխանը գտնելու համար, պէտք է զանոնք դիտենք այդ օրուան մարդոց մտայնութեան եւ մօտեցման մէջ: Եւ որովհետեւ Քրիստոսի առաքելութիւնը առաւելաբար Պաղեստինի մէջ կեդրոնացած էր, հարկ է որ զայն դիտենք հրեաներու կեանքին մէջ:

ԿԻՆՐ ՀՐԷԱԿԱՆ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊԻՆ ՄԷՋ

Կինը հրէական մտածելակերպին մէջ դիտելու համար, պէտք է որ զայն տեսնենք հիմնական երկու շրջագիծերու մէջ.-

Ա) Կինը հրէական ընկերութեան մէջ

Մեր Տիրոջ ու Փրկիչին՝ Յիսուս Քրիստոսի երկրաւոր առաքելութեան շրջանին, Միջին Արեւելքի եւ յատկապէս՝ Պաղեստինի մէջ կինը ընկերութեան մէկ մասնիկը չէր համարուեր: Անոր գործունէութիւնը, աւելի ճիշդ՝ օգտակարութիւնը կը սահմանափակուէր միայն ընտանիքի նեղ սահմաններուն մէջ: Իգական սեռը արականէն ստորադաս կը նկատուէր: Կիներ ազատութեան եւ ինքնավարութեան իրաւունք չունէին: Անոնք կը կառավարուէին տղամարդոց կողմէ. ամուսնանալէ առաջ ենթակայ էին իրենց հայրերուն, ամուսնանալէ ետք՝ իրենց ամուսիններուն, իսկ մայրանալէ ետք՝ իրենց արու զաւակներուն: Անոնք իրաւունք չունէին իրենց ընտանիքէն դուրս գտնուող տղամարդոց հետ խօսելու: Իրաւունք չունէին որեւէ հարցի մասին իրենց կարծիքը յայտնելու: Իրաւունք չունէին որեւէ դէպքի մասին վկայութիւն տալու: Խիստ արգիլուած էր, որ ոեւէ կին իր անունով կանչուէր, նոյնիսկ իր ամուսնոյն կողմէ, երբ տունէն դուրս ըլլար:

Բ) Կինը հոգեւոր կեանքին մէջ

Աստուծոյ փոխանցած պատուիրանները միայն արական սեռին պատկանող անձերուն վերապահուած էին: Հրեայ հայրեր տան մէջ իրենց արու զաւակներուն Աստուծոյ խօսքը կը բացատրէին եւ Հին Կտակարանը կարդալ կը սորվեցնէին, որպէսզի երբ անոնք 12 տարեկան դառնային (օրինական տարիքը), սկսէին ժողովարանին¹ մէջ Հին Կտակարանէն ընթերցումներ կատարել:

¹ Ժողովարան կամ սինակոկ բառը ծագում առած է յունարէն բառէ մը, որ կը նշանակէ ժողով կամ միասին ժողովուի: Այս անունը տեղին է, քանի որ հինէն ի վեր ժողովարանները հրէական շրջանակներու մէջ վայրեր եղած են, ուր մարդիկ կը հաւաքուէին կրթութիւն ստանալու եւ պաշտամունք մատուցանելու համար: Եբրայերէն գրութիւնները ժողովարաններուն մասին յստակ բան մը չեն յայտնէր, բայց Քրիստոնէական յունարէն գրութիւններէն կը զիտցուի, որ (Ք.Ե.) առաջին դարուն այդպիսի հաւաքատեղիներ արդէն գոյութիւն ունէին: Ուսումնասէրներու մեծամասնութեան կարծիքով, ժողովարանները մէջտեղ եկան, երբ հրեաները Բաբելոն արքայութեան տակաւնէն հեռուուեցին: (Ք.Ե.) Առաջին դարուն, ժողովարանները կրօնական եւ ընկերային կեանքի կեդրոններ դարձած էին հրէական շրջանակներուն մէջ, որոնք տարածուած էին Միջերկրական ծովուն շուրջի երկիրներուն, ամբողջ Միջին Արեւելքի եւ անշուշտ Իսրայէլի մէջ: Երուսաղէմի Եբրայական համալսարանի Փրոֆէսէօր Լի Լըվին կ'ըսէ, թէ ժողովարաններուն մէջ սերտոդոյթիւն կ'ըլլար, մաքուր ճաշեր կ'ուտուէին, դատավարութիւններ տեղի կ'ունենային, տրուած նուիրատուութիւնները կը պահուէին եւ քաղաքական ու ընկերային ժողովներ կը գումարուէին:

րել: Ղուկաս աւետարանիչ, երբ իր Աւետարանի 2.41-52 համարներուն մէջ «Յիսուս մանուկը տաճարին մէջ» խորագիրով մեզի ծանօթ հատուածը կը գրէր, ասիկա նկատի ունէր: Բոլոր տղամարդիկ պարտաւորութիւն ունէին Շաբաթ² օրը պահելու, Ժողովարան երթալու եւ պաշտամունքին մասնակցելու³:

Հրեայ հայրեր իրենց էգ զաւակներուն եւ կիներուն կը սորվեցնէին Աստուծոյ պատուիրաններուն միայն ա՛յն հատուածները, ուր «մի՛» գործածուած էր: Ի տարբերութիւն արու զաւակներուն, իգական սեռին պատկանող զաւակները Աստուծոյ օրէնքը կարգալ չէին սորվեր, որովհետեւ այդ մէկը Աստուծոյ օրէնքը պղծել կը նշանակէր: Այս առումով, Քրիստոսի ժամանակակից ռաբբիներէն՝ Եղիազարը կ'ըսէ. «Այն հայրը, որ իր դստեր Աստուծոյ օրէնքը կը սորվեցնէ, կը նմանի այն անձին, որ իր որդիներուն պիղծ խօսքեր կը սորվեցնէ»: Իսկ հրէական Միշնայ⁴ գիրքին մէջ կը կարդանք. «Աւելի լաւ է այրել օրէնքը, քան՝ կիներուն ուսուցանել»: Կիներ որեւէ պարտաւորութիւն չունէին Ժողովարան երթալու: Ժողովարանին մէջ նոյնիսկ անոնց համար նստելու յատկացուած տեղ չկար:

Ժողովարանին մէջ պաշտամունք կատարելու համար կարիքը կար տասը⁵ տղամարդու: Պաշտամունքը կը սկսէր օրհներգութիւններով, որոնցմէ մէկուն մէջ տղամարդիկ կ'ըսէին. «Օրհնեա՛լ է Աստուած, որ զիս հեթանոս չէ ստեղծած, օրհնեա՛լ է Աստուած, որ զիս ստրուկ չէ ստեղծած եւ օրհնեա՛լ է Աստուած, որ զիս կիմ չէ ստեղծած»: Իսկ եթէ պատահէր, որ կիներ գտնուէին հոն, անոնք կ'ըսէին. «Օրհնեա՛լ է Աստուած, որ զիս հեթանոս չէ ստեղծած, օրհնեա՛լ է Աստուած, որ զիս ստեղծած է Իր կամփին համաձայն»: Հոս յստակօրէն կը տեսնենք, որ կիներու ներկայութեան ստրուկ բառը չեն գործածեր, որովհետեւ ինչպէս վերեւ յիշեցինք, կիներ իր հօր, ամուսինին կամ զաւակներուն ստրուկ ըլլալը կը կարծէին, որ Աստուծոյ կամքն է:

² Շաբաթ (Եբրայերէն բառացի՝ հանգիստ): Հրեայ ռաբբիները կ'արգիլէին շաբաթ օրուան ընթացքին որեւէ գործ կատարել, որովհետեւ Աստուած պատուիրած էր, որ Շաբաթը սուրբ պահուէր: Հրեաներ իրենց հանգիստը (Շաբաթ օրը) կրնային խախտել միայն բացառիկ պարագաներուն, ինչպէս՝ մէկու մը կէանքը փրկելու, պատերազմի եւ այլ ճակատագրական պահերու համար: Շաբաթ օրերուն ընթացքին, հրեաներ տաճարին մէջ գառազինում կը կատարէին, իսկ տաճարին փլուզումէն (70 Ք.Ա.) ետք, սկսան Ժողովարան երթալ եւ Տիրոջ խօսքը սերտել:

³ Այս սովորութիւնը մինչեւ օրս կը պահպանուի Ուղղափառ (Orthodox) հրեաներուն մօտ:

⁴ Միշնայ անունը կը տրուի հրէական ռաբբիական մեկնութեան գլխաւոր աղբիւրին:

⁵ Տասը թիւը թէ՛ Աստուածաշունչ մատեանին եւ թէ՛ հրեաներուն մօտ խորհրդանիշ է ամբողջականութեան:

Այս պատճառով, առաքելները կը զարմանային, թէ ինչպէ՛ս խումբ մը կիներ կը թողէին իրենց ընտանեկան պարտականութիւնները, կը մոռնային իրենց տեղը ընկերութեան մէջ եւ համարձակութիւնը կ'ունենային Վարդապետի մը հետ շրջելու եւ հասարակական գործունէութեան նուիրուելու: Ասիկա մեծ գայթակղութիւն էր, թէ՛ առաքելներուն, թէ՛ հրեայ ռաբբիներուն եւ թէ՛ հրեայ ժողովուրդին համար: Աւետարաններուն մէջ մենք յստակօրէն կը տեսնենք կնոջ նկատմամբ եղած արհամարհական մօտեցումը: Յիշենք քանի մը օրինակ.

Ա) Մատթէոս աւետարանիչ հինգ հազարի կերակրման դրուագի աւարտին կը գրէ. «Ուտողները շուրջ հինգ հազար հոգի էին, կիներն ու մանուկները չհաշուած» (Մտ 14.21), իսկ Մարկոս աւետարանիչ կը գրէ. «Ուտողներուն թիւը, միայն այր մարդիկը հաշուած, շուրջ հինգ հազար էր» (Մր 6.44): Մատթէոս աւետարանիչ նոյն մօտեցումով կը յիշէ չորս հազարի կերակրման մասնակցողներուն թիւը. «Ուտողները շուրջ չորս հազար հոգի էին, կիներն ու մանուկները չհաշուած» (Մտ 15.38):

Բ) Երբ Յիսուս Բեթանիա կը գտնուէր, բորոտ Սիմոնին տան մէջ, կին մը, թանկագին իւղի շիշ մը իր ձեռքին, կը մօտենայ Քրիստոսի եւ իւղը Անոր գլխուն կը թափէ: Առաքելները այս մէկը տեսնելով, կը վարկաբեկեն ու կը յանդիմանեն կինը, ըսելով. «Ինչո՞ւ այդպէս վատնել անուշահոտը. կարելի էր զայն սուղ գինով ծախել եւ դրամը աղֆատներուն տալ» (Մտ 26.9): Հոն Քրիստոս կը պաշտպանէ կինը եւ առաքելներուն դառնալով կ'ըսէ. «Ինչո՞ւ կ'անհանգստացնէ՛ք այդ կինը, քանի լաւ բան մը ըրաւ ինձի...Իմ մարմինիս վրայ այդ իւղը թափեց՝ իմ թաղմանս որպէս նշան: Լա՛ւ գիտցէ՛ք, թէ աշխարհի վրայ ո՛ր որ ալ Աւետարանը փարձուի, մարդիկ իր ըրածին մասին պիտի խօսին եւ յիշեն զինձ» (Մտ 26.10-13):

Գ) Երբ Տիրոջ երկու հրեշտակները Մարիամ Մագդաղենացիին, Յովհաննային, Յակոբոսի մօր՝ Մարիամին եւ իրենց ընկերացող կիներուն կ'աւետեն, թէ Քրիստոս յարութիւն առած է (Ղկ 24.5-7), աշակերտուհիները վերնատուն վերադառնալով աշակերտներուն կը փոխանցեն բարի լուրը, սակայն «Առաքելները ցնորական կը համարեն անոնց պատմածները եւ չեն հաւատար» (Ղկ 24.11), որովհետեւ, ինչպէս նախապէս յիշեցինք, հրեաներուն համար կիներուն վկայութիւնը վաւերական վկայութիւն չէր համարուեր:

Հոս պէտք է, որ առաքելները փախուստ տուած էին Քրիստոսի ձեռքակալման ատեն եւ ներկայ չէին Անոր խաչելութեան, մահուան եւ յարութեան դէպքերուն: Սակայն մենք չորս աւետարաններուն մէջ կը տեսնենք, որ աւետարանիչները յիշած են այդ դէպքերը: Ուրեմն ինչպէ՞ս կարելի է բացատրել այս հակասութիւնը: Ճիշդ է, որ առաքելները ներկայ չէին այդ

դէպքերուն, սակայն Քրիստոսի աշակերտուհիները ներկայ էին: Եւ ինչ որ այսօր աւետարաններուն մէջ արձանագրուած կը տեսնենք այդ մասին, աւետարանիչներուն պատմուած է Քրիստոսի աշակերտուհիներուն կողմէ: Առաւել, Ղուկաս աւետարանիչ իր Աւետարանին մէջ Քրիստոսի մանկութեան առնչուած մանրամասնութիւններ կը յիշէ, որոնք դարձեալ պատմուած են կնոջ մը կողմէ, այսինքն՝ Մարիամ Աստուածածինի կողմէ:

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԵՏԵՒՈՂ ԿԻՆԵՐՈՒՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Քրիստոսի աշակերտուհիներուն պարտականութիւնն էր Յիսուսի օգնել արտաքին միջոցներով: Պէնկէլ կ'ըսէ. «Հրէական սովորութիւն էր կամանց, մանաւանդ այրեաց, հրապարակաւ փարձողաց օգնել իրենց ստացուածքէն, վասն որոյ եւ երթալ անոնց հետ նոցա ճանապարհորդութեան ժամանակ⁶»:

Յիսուս իր երկրաւոր առաքելութեան շրջանին ինքզինք ամբողջապէս նուիրած էր քարոզչական գործի, ուստի իր օրապահիկը ապահովելու համար որեւէ արհեստ չունէր: Առաւել, Քրիստոսի առաքեալները իրենց արհեստները թողած էին, որպէսզի մշտապէս Քրիստոսի ընկերակից դառնային: Աւելին, ո՛չ Քրիստոսը եւ ոչ ալ առաքեալները կու գային հարուստ ընտանիքներէ, որպէսզի հասոյթ ունենային: Այդ իսկ պատճառով, այս կիները, որոնք «մէկ կողմանէ ունեւոր եւ միջոցներ ունեցող կիներ էին, միւս կողմանէ երախտաւորեալներ էին, որովհետեւ չար ոգիներէ եւ հիւանդութիւններէ բժշկուած էին⁷», իբրեւ նշան սիրոյ, շնորհակալութեան ու մանաւանդ՝ երախտագիտութեան, կը հոգային Քրիստոսի եւ իր աշակերտներուն բոլոր պէտքերը:

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԵՏԵՒՈՂ ԿԻՆԵՐՈՒՆ ԹԻՒՆ ՈՒ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Ղուկաս աւետարանիչ Քրիստոսի հետեւող կիներուն թիւն ու անունները ամբողջութեամբ կերպով չի յայտնէր, այլ միայն կ'ըսէ. «Իրեն Քրիստոսի/ հետ էին նաեւ կարգ մը կիներ, որոնք չար ոգիներէ եւ հիւանդութիւններէ բժշկուած էին, ինչպէս Մարիամը, որ Մագդաղենացի կը կոչուէր եւ որմէ եօթը ոգիներ հանած էր, Հերովդէսի պալատին վերակացու Քուզայի կիներ՝ Յովհաննան, Շուշանը, ինչպէս նաեւ շատ ուրիշներ, որոնք իրենց միջոցներով կը հոգային Յիսուսի պէտքերը» (Ղկ 8.2-3): Ինչպէս կը տեսնենք այս հատուածին մէջ, միայն երեք կիներ իրենց անուններով կը յիշուին, սակայն Աւետարանիչին «շատ ուրիշներ» արտայայ-

⁶ Մեկնութիւն Չորից Աւետարանաց, Ի տպարան Ա. Յակոբ Պոյաճեան, Կոստանդնուպոլիս, էջ 488:

⁷ Օրմանեան Մաղաքիա Արքեպիսկոպոս, Համապատում, հրատարակիչը՝ Վ. եւ Հ. Տէր-Ներսէսեան, Կոստանդնուպոլիս, 1911, էջ 203:

տուժիւնը մեզի ենթադրել կու տայ, որ անոնք տասէ աւելի կիներ էին: Միւս աւետարանիչներն ալ Իզաբեթ կիները յիշելու ատեն յստակ անուններ եւ թիւեր չեն յայտներ. «Մարիամ Մագդաղեմացին եւ Մարիամը գերեզմանը տեսնելու գացին» (Մտ 28.1), «Մարիամ Մագդաղեմացին, Յակոբոսին մայրը՝ Մարիամը, եւ Սողոմէն գացին խունկեր գնեցին եւ պատրաստեցին, որպէսզի երթան եւ օծեն Յիսուսին մարմինը» (Մր 16.1) եւ «Մարիամ Մագդաղեմացին գերեզման գնաց եւ տեսաւ, որ գերեզմանին մուտքին դրուած քարը վերցուած է» (ՅՀ 20.1): Միակ աղբիւրը, որ մեզի Քրիստոսի աշակերտուհիներուն թիւը կը յայտնէ, եկեղեցւոյ դարաւոր աւանդութիւնն է:

Եկեղեցւոյ աւանդութիւնը Քրիստոսի աշակերտ կը նկատէ բոլոր այն կիները, որոնք Յիսուսի կողմէ բժշկութիւն կամ խնդրանքի կատարում ստացած են⁸: Անոնք են. Ա) Պետրոսին զոքանչը (Մտ 8.14-15, Մր 1.29-31 եւ Ղկ 4.38-39), որուն անունը անծանօթ կը մնայ, Բ) Սամարացի կիներ (ՅՀ 4.1-30), որուն անունը Փոտինէ էր, Գ) Նայինի այրին (Ղկ 7.11-17), որուն պատանի զաւակը յարութիւն առաւ Քրիստոսի ձեռքով, Դ) Քանանացի կիներ, որուն անունը Լուսին էր (Մտ 15.21-28 եւ Մր 7.24-30), Ե) Տեռատես կամ արիւնահոսութենէ տառապող կիներ (Մտ 9.20-22, Մր 5.25-34 եւ Ղկ 8.43-48) եւ Զ) Հարիւրապետ Յայրոսին աղջիկը (Մտ 9. 8-19, 23-31, Մր 5.21-24, 35-43, Ղկ 8.40-42, 49-56): Անշուշտ այս խումբին անգամ կը նկատուին նաեւ Մարիամ Մագդաղեմացին, Սողոմէն, Շուշանը, Յակոբոսին մայրը՝ Մարիամը եւ Հերովդէսի պալատին վերակացու Քուզային կիներ՝ Յովհաննան, որոնք յիշուած են աւետարաններուն մէջ իբրեւ Քրիստոսի հետ շրջողներ: Այսպիսով, Քրիստոսի աշակերտուհիներուն թիւը 9 կ'ըլլայ:

ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ ԿԱՄ ԱՌԱՔԵԱԼՈՒՀԻ

Աւետարաններուն մէջ մենք չենք հանդիպիր աշակերտուհի կամ առաքեալուհի եզրերուն, ինչ որ ոմանց կրնայ իրաւունք տալ մտածելու, թէ Յիսուս կիները իբրեւ աշակերտուհի կամ առաքեալուհի չէր նկատեր: Սակայն, ասիկա որեւէ մէկ ձեռով իրականութեան չի համապատասխաներ: Աւետարաններուն մէջ մենք չենք հանդիպիր այդ եզրերուն, որովհետեւ աւետարանները գրող անձերը բացի Ղուկաս⁹ աւետարանիչէն, հրեաներ էին: Ուստի անոնք իրենց համոզումներով գրած են իրենց անուններով ծանօթ աւետարանները: Եթէ Քրիստոսի հետ շրջող արական սեռին պատկանողները առաքեալներ

⁸ Անդ, էջ 204:

⁹ Ղուկաս աւետարանիչ յոյն էր, այդ իսկ պատճառով, ան միակն է, որ յիշած է Քրիստոսի հետ շրջող կիները:

կամ աշակերտներ կոչուեցան, պէտք չէ կասկածինք, որ Քրիստոս Իրեն հետ շրջող իգական սեռին պատկանողներն ալ կ'ընդունէր իբրեւ աշակերտուհիներ կամ առաքեալուհիներ: Այս գծով Մաղաքիա Արք. Օրմանեան կ'ըսէ. «Յիսուս աշակերտներուն հետ աշակերտուհիներ ալ ունէր, Իրեն ետեւէն հետետողներ ունէր ոչ միայն այրերէն, այլ եւ կիներէն¹⁰»: Իսկ Արմաշական Պսակ Վարդապետ «Լոյս» եկեղեցական շաբաթերթի «Եկեղեցական բառեր ու ասացուածքներ» խորագիրով ստորագրած իր յօդուածաշարքին մէջ, յիշած է Առաքեալուհի բառը, որուն իբրեւ բացատրութիւն գրած է. «Նախնական եկեղեցին ունեցած է Առաքեալներու քովն ի վեր Առաքեալուհիներ ալ, այսինքն՝ կիներ, որոնք քաղցած են Աւետարանը այս կամ այն երկիրի մէջ¹¹»: Յիշեալ առաքեալուհիները ուրիշ անձեր չեն, եթէ ոչ՝ Քրիստոսի հետ շրջող կիները:

ՔՐԻՍՏՈՍԻ ԿԱՏԱՐԱԾ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Յիսուս աշխարհ գալով ամբողջապէս կը վերականգնէ կնոջ իրաւունքը, արժէքը, դերը եւ տեղը ընկերութեան կեանքին մէջ: Ան վերջնականապէս կը հաստատէ, թէ արուն եւ էգը իբրեւ Աստուծոյ կողմէ ստեղծուած արարածներ, ունին համահաւասար արժանապատուութիւն, արժէք, պատիւ եւ իրաւունք: Ան նոյնիսկ թոյլ կու տայ, որ առաքելներուն կողքին կիներ ալ շրջին Իրեն հետ: Այս իրականութեան ամէնէն խօսուն օրինակները այսօր մենք կը գըտնենք քրիստոնեայ երկիրներուն մէջ:

Եզրակացնելով, արժանապէս ու ճակատաբաց կերպով կարելի է հաստատել, որ եթէ Ֆեմինիզմի շարժումը կը սկսի 19-րդ դարու վերջաւորութեան եւ 20-րդ դարու սկզբնաւորութեան, Քրիստոս արդէն անկէ հազարաւոր տարիներ առաջ սկսած ու կնքած էր այդ շարժումը:

ԱՌԱՔԵԼ ԱԲՂ. ԳԱՏԷՀՃԵԱՆ

¹⁰ Օրմանեան Մաղաքիա Արք., Համապատում, հրատարակիչ՝ Վ. Եւ Ն. Տէր-Ներսէսեան, Կոստանդնուպոլիս, 1911, էջ 203:

¹¹ «Լոյս» եկեղեցական շաբաթաթերթ, Նոր Շրջան- Բ. Տարի 1906, վերահրատարակութիւն, տպարան Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Անթիլիաս, 1987, էջ 737:

ՊԱՏՄԱ.-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ

**90-ԱՄԵԱՅ ՀՈՒՆՁՔԸ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԴՊՐԵՎԱՆՔԻՆ**

Տ. ԴԵՐԵՆԻԿ ԵՊՍ. ՓՕԼԱՏԵԱՆ

Ծնած է 1 Յունուար 1914-ին, Քեսապ (Սուրիա): Աւագանի անունն է Հայկ: Տակաւին քալելու անկարող, 1915-ին, տարագրութեան ճանապարհին վրայ «քալած» է մինչեւ Տէր Զօր, իր հայրենակիցներու տառապանքին հաղորդակից դառնալով, հոգ չէ թէ... անգիտակից:

Արիւնոտ ճանապարհէն հագիւ ազատած, մայրակորոյս, Հալէպի վրայով վերադարձած է հայրենի գիւղը՝ Քեսապ, ուր զգացած ու ապրած է տառապանքի երկրորդ դառնութիւն մը՝ որբութիւնը:

Հայկ իր նախնական ուսումը ստացած է ծննդավայրի նախակրթարանին մէջ, ուր ի յայտ եկած է ուշիմ, ժրաջան եւ արդիւնալի աշակերտ մը ըլլալը:

1927-ին, ուսման տենչով խանդավառ դիմած է Հալէպի Ամերիկեան գոլէճ, ուր յետ յաջող ու փայլուն քննութեան, ընդունուած է եւ հինգ տարիէն աւարտած՝ գոլէճին ընթացքը եւ վկայուած:

Նիւթական չքաւորութիւնը եւ որդիական պարտականութիւնը հօրը օգնելու՝ պարտաւորած են զինք ընդհատելու ուսման ընթացքը եւ 1932-1933, որպէս տնօրէն, պաշտօնավարելու Քեսապի արուարձաններէն էքիզ-օլուզ գիւղի Նաճարեան Նախակրթարանին մէջ:

Կարճ ծառայութենէ մը ետք, զգացած է, որ ուսուցչութիւնը չէր կրնար իր իտէալ ասպարէզը ըլլալ, իր մէջ հետզհետէ աճող կրօնական եւ հոգեւոր արումները զինք մղած են դէպի եկեղեցական ծառայութիւն: Եւ 1933-ին դիմած է Անթիլիաս, աշակերտելու դպրեմանքին մէջ եւ դառնալու սպասաւոր Հայ Եկեղեցւոյ: Բարգէն Աթոռակից Կաթողիկոս, ընդառաջելով Հայկի խնդրագրին, զինք ընդունած է, եւ ան գտած է իր կեանքի ուղեգիծը:

Երկու տարուան հայագիտական եւ եկեղեցագիտական ուսումնառութենէն ետք՝ ան եկեղեցական ծառայութեան իր ուխտը կատարած է:

16 Յունիս 1935-ին Կուսակրօն Եկեղեցական ձեռնադրուած ու օծուած է, ձեռամբ դպրեվանքի վերատեսուչ Շահէ Արք. Գասպարեանի, եւ վերակոչուած՝ Տ. ԴԵՐԵՆԻԿ ԱՔԵՂԱՅ, իրեն օծակից ունենալով Տ. Զարեհ Աբեղան (ապա Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ):

Դերենիկ Աբեղայ վանքէն ներս ստանձնած է տեսչական պաշտօններ՝ Մեսրոպեան Նախակրթարանին եւ Կաթողիկոսարանի Մատենադարանին, միանգամայն դասաւանդելով դպրեվանքին մէջ:

28 Յունիս 1936-ին Վարդապետական Գաւազանի իշխանութիւն ստացած է, ձեռամբ Բարգէն Աթոռակից Կաթողիկոսի, աւարտաճառ ներկայացնելով Սարգիս Շնորհալիի «Եօթը Կաթողիկէ Թուղթերու Մեկնութիւնը»:

17 Փետրուար 1938-ին, դժուարին պայմաններու տակ գոյացնելէ ետք իր բարձրագոյն ուսման ծախսերը, Միացեալ Նահանգներ մեկնած է:

Ժամանման յաջորդ օրն իսկ, ընդունուած է Եպիսկոպոսական Եկեղեցւոյ Նիւ Եորքի Դպրեվանքը՝ General Theological Seminary-ն, ուր երկու տարուան դասընթացքով մը 22 Մայիս 1940-ին տիրացած է եկեղեցական պատմութեան Պսակաւորի տիտղոսին՝ S. T. B. (Bachelor of Sacred Theology), տիտղոս՝ որուն համար որպէս աւարտաճառ գրած էր «Հայ Եկեղեցւոյ խոստովանութիւնը ըստ Ներսէս Շնորհալիի» ուսումնասիրութիւնը, որ անգլերէնի թարգմանութիւնն է Ներսէս Շնորհալիի առ Մանուէլ կայսր ուղղած դաւանաբանական թուղթին, ներածական, պատմական, մեկնաբանական եւ վերլուծական բաժիններով ընկերացած:

Ապա անցած է Union Theological Seminary, ուր մէկ տարուան յարատեւ ու տքնաջան աշխատանքով 20 Մայիս 1941-ին ստացած է Աստուածաբանութեան Մագիստրոսի աստիճան՝ S. T. M. (Master of Sacred Theology): Այս տիտղոսի ստացման համար որպէս աւարտաճառ պատրաստած էր դարձեալ դաւանաբանական տարողութեամբ ուսումնասիրութիւն մը՝ «Նեստորական եւ Քաղկեդոնական Բանավէճը ըստ «Գիրք Թղթոց»եան աղբիւրներուն», ներկայացնելով մեր դաւանութեան ամէնէն առանձնայատուկ եւ էական տեսակէտները պարզող «Գիրք Թղթոց»ը՝ իր աստուածաբանական բովանդակութեան եւ արժէքին մէջ, յատկապէս քննարկելով նեստորական եւ քաղկեդոնական վարդապետութեանց արձագանգները մեր եկեղեցւոյ աստուածաբանական անդրադարձումներուն մէջ:

Դարձեալ տարի մը ետք, 2 Յունիս 1942-ին, վկայուած է Columbia համալսարանէն Մանկավարժութեան Մագիստրոսի աստիճանով՝ M. A.:

1944-ի Փետրուարին այս անգամ Նիւ Եորքի համալսարանէն ստացած է Փիլիսոփայութեան դոկտորական (Doctor) աստիճան՝ Ph.D., որուն համար որպէս աւարտաճառ գրած է ընդարձակ ուսումնասիրութիւն մը՝ «Հայ Եկեղեցւոյ Դաստիարակչական Դերը» թեմայով:

Դերենիկ Վարդապետ եօթը տարի մնացած է Միացեալ Նահանգներ: Անշուշտ իր կեցութեան հիմնական գրգիռը իր համալսարանական ուսումը եղած է, բայց պէտք է ըսել, որ ան ուսման առընթեր ինքզինք հեռու չէ պահած եկեղեցիէն, ան իր քարոզներով եւ մանաւանդ որպէս շրջուն դեսպան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, զանազան առիթներ օգտագործելով, նիւթական յատկացումներ փորձած է ապահովել անձուկ վիճակի մէջ գտնուող Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ու անոր դպրեվանքին: Եւ առաւել, ան իր ծառայութեամբ փորձած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը ծանօթացնել ամերիկահայութեան եւ հետաքրքրութիւն ու սէր ստեղծել անոր նկատմամբ:

Ան ուսումը աւարտելէ ետք, անմիջապէս չէ կրցած վերադառնալ իր տունը՝ Անթիլիաս, պատերազմին պատճառով, բայց իր Միացեալ Նահանգներ կեցութիւնը արդարացուցած է աշխատանքով մը, որ մեծ բարիք եղած է ամերիկահայութեան կեանքին մէջ: Եկեղեցւոյ հովանիին ներքեւ կազմակերպած է երիտասարդական համախմբումներ, որոնք առաւել եւս կապուած են իրենց մայրենի եկեղեցւոյ եւ ազգային վառ զգացումներով շրջեղած անոնց սրտերն ու հոգիները:

Ի վերջոյ, 1945-ի սկիզբը, պատերազմական վտանգաւոր կացութեան մէջ, ծովի ճամբով եւ ռազմական ճամբորդական միջոցներով Դերենիկ Վարդապետ ընկերանալով Գարեգին Արք. Յովսէփեանցի (որ 1943-ին Կաթողիկոս ընտրուած էր Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռին) Անթիլիաս վերադարձած է 23 Մարտին:

1945-ը Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռին համար բնորոշուած է աշխատանքային լուսաւոր հորիզոնով մը:

Կաթողիկոսարանը իր դպրեվանքով զգացած է նոր կեանքի մը փթթումը: Դերենիկ Վարդապետ իր կարեւոր ներդրումը բերած է այդ ընդհանուր աշխատանքին:

1945-1946 դպրոցական տարեշրջանին դպրեվանքին մէջ ան ստանձնած է ուսուցչական պաշտօն:

1945-ի աշնան նշանակուած է Ժողովրդային Լսարանի Ղեկավար, կազմակերպած է դասախօսութիւններ, որոնք լայն հետաքրքրութիւն ստեղծած են եւ մեծ խանդավառութիւն՝ պէյրութահայ հասարակութեան մէջ:

1946-ի Յուլիսին նշանակուած է տեսուչ դպրեվանուց:

9 Փետրուար 1947-ին Ծայրագոյն Վարդապետութեան իշխանութիւն ստացած է: Ու մէկ շաբաթ ետք, 16 Փետրուարին Եպիսկոպոս ձեռնադրուած եւ օծուած է, ձեռամբ Գարեգին Ա. Վեհափառ Հայրապետի, օծակից ունենալով Տ. Փառէն, Տ. Զարեհ, Տ. Խորէն եւ Տ. Ղեւոնդ Ծայրագոյն Վարդապետները:

Դերենիկ Սրբազանի տեսչութեան շրջանը բերրի եղած է, 1946-1954, ան 12 միաբաններ ձեռնադրած է եւ տասնեակ մը ամուսնացեալ քահանաներ: Վանքի միաբանութիւնը երիտասարդացած է, նոր ուժեր եկած են համալրելու վախճանեալ տարեց միաբաններուն տեղը:

Ան 1948-ին Միացեալ Նահանգներ, 1949-ին Եգիպտոս, 1950-ին Եւրոպա եւ յատկապէս Անգլիա եւ 1954-ին դարձեալ Միացեալ Նահանգներ այցելելով, շօշափելի գումարներ ապահոված է՝ սատար հանդիսանալով դպրեվանքին: Ներկայ Թանգարան-Մատենադարանի շէնքին, Պիքֆայայի Մատրան եւ դպրեվանքի հին շէնքին բարերարները գտած է եւ փորձած է հանգանակած գումարներով սատարել կաթողիկոսարանին եւ դպրեվանքին՝ զանոնք նիւթական անձուկ վիճակէն դուրս բերելով:

1953-ի Օգոստոսին, Գէորգ Զ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրաւերով մեկնած է Ս. Էջմիածին, աստուածաբանութեան դասընթացք մը աւանդելու Հոգեւոր Ճեմարանի սարկաւազներուն:

6 Մայիս 1954-ին, երբ վախճանած է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Զ. Զէօրէքճեան, թաղմանական արարողութեան մասնակցելու համար, Դերենիկ Սրբազան 20 Մայիսին, որպէս պատուիրակ Կիլիկիոյ Ս. Աթոռին, Կաթողիկոսութեան Տեղապահ Խաղ Արք. Աջապահեանի հետ մեկնած է Հայաստան:

Դերենիկ Սրբազան նաեւ անխոնջ աշխատող մը եղած է, իր առօրեային նուազագոյն վայրկեանն իսկ փորձած է լեցնել, վարչական, դաստիարակչական, ուսուցողական աշխատանքներով. բազմազբաղ վիճակին մէջ իսկ անոր գրիչը բեղուն եղած է: Ան հեղինակած է տասնեակ հատորներ, անգլերէն եւ հայերէն, թարգմանական, կրօնական, քարոզախօսական եւ յուշագրական հատորներ, որոնք այսօր մեզի կը ներկայանան հետեւեալ վերտառութիւններով.

- The Armenian Church.
- The Profession of faith of the Armenian Church, by St. Nerses Shnorhali.
- A Collection of Prayers from the Ancient Armenian Book of Office and Divian Liturgy. (Ծաղկաբաղ Աղօթից ի ժամագրոց եւ ի Պատարագամատոյց Մատեանէ).
- Service Prayer Book.
- Ուխտագնացութիւն ի Հայաստան.
- Հոգիներուն համար.
- Հոգիներու համար, Բ. Հատոր.
- Թուղթ Հեբման.
- Հայց. Եկեղեցոյ Խորհուրդները.
- Էջեր օրագրէս.
- Ուխտագնացութիւն ի Տաթեւ.

Կան նաեւ անտիպ երկասիրութիւններ. «Պատմութիւն Վարդանայ Վարդապետի», «Սարգիս Շնորհալի եւ Կաթողիկէ եօթը թղթոց Մեկնութիւնը», «Հայց. Եկեղեցին Հայ Պատմութեան մէջ», «*The Nestorian and Chalcedonian controversies as treated in the Armenian documents in «Grik Thghthots»*», «*The Educational role of the Armenian Church*», «Յերկիր Հայրենի», «Հայոց Եկեղեցին»:

1956-ի ազգային-եկեղեցական տագնապի օրերուն հեռացած է Մեծի Տանն Կիլիկիոյ Միաբանական Ուխտէն եւ մինչեւ իր վախճանումը, որպէս անհատ եկեղեցական, առաւելաբար կատարած է ճամբորդութիւններ մինչեւ Ծայրագոյն Արեւելք, որոնելով կորսուած հայկական գաղութներու հետքեր, կատարելով պրպտումներ եւ ուսումնասիրութիւններ:

Դերենիկ Սրբազան տխուր վախճան մը ունեցած է 22 Նոյեմբեր 1963-ին: Ան զոհ գացած է դաշունահարման:

Թաղմանական Կարգն ու Վերջին Օծումը կատարուած է Պէյրութի Նոր Հաճըն թաղամասի Ս. Գէորգ Եկեղեցւոյ մէջ, եւ մարմինը ամփոփուած է Կաթողիկոսարանի Զարեհեան Դամբարանի միաբանութեան բաժնին մէջ:

ՍՈՒՐԷՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ

(Շար. 15)



ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ԱՍՏՈՒԱԾԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ*
THEOSOPHIA

ԱՍՏՈՒԱԾԱՐԴԱՐԱՅՈՒՄ
THEODICY

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Հայերէնով աստուածադարացում եզրոյթը, բառացի թարգմանութիւնն է յունարէն theodikía եզրոյթին (theos = աստուած եւ díkê = արդարադատութիւն): Եզրոյթը (գերմ.՝ Theodizee, ֆրնս.՝ Théodicée, անգլ.՝ Theodicy) կազմած է գերման նշանաւոր փիլիսոփայ **Լայբնից**¹ (Gottfried Wilhelm Leibniz) եւ կ'օգտագործուի եւրոպական զանազան լեզուներու մէջ:

«Աստուածադարացում» եզրոյթի նշանակութիւնը լաւապէս ըմբռնելու կամ հասկացութիւնը բնութագրելու համար, հարկ է պատասխանել հետեւեալ հարցադրումին.-

Ինչպէ՞ս կարելի է համարել՝ միապաշտական Աստուածը, որ ամենազէտ, ամենակարող ու ամենաբարի է եւ աշխարհի վրայ գոյութիւն ունեցող չարն²

* «Աստուածիմաստութիւն – Theosophia».- Ընդհանուր վերնագիրն է յօդուածաշարքի մը, որ շարունակաբար լոյս պիտի տեսնէ ՀԱՍԿին մէջ: Այս թիւով՝ *Աստուածադարացման* (Theodicy) մասին:

¹ **Լայբնից, Գ. Վ.** (Gottfried Wilhelm Leibniz, 1646 – 1716 թ.).- Գերման հռչակաւոր ընդհանրական գիտնական, փիլիսոփայ ու մաթեմատիկոս, ֆիզիկոս ու իրաւաբան, պատմաբան ու լեզուաբան: Եւրոպայի մէջ, Լուսաւորութեան շրջանի *Բանապաշտութիւն* (Rationalism) փիլիսոփայական շարժումի նշանաւոր ներկայացուցիչ: Բարձրագոյն ուսումը ստացած է գերմանական Լայպցիգ (Leipzig) եւ Ենա (Jena) համալսարաններուն մէջ: Ժամանակաշրջան մը Փարիզի մէջ ապրելէ ետք, կը վերադառնայ գերմանական Հանովեր (Hannover) քաղաքը, ուր եւ կը մահանայ: Հեղինակ է բազմաթիւ գիտական աշխատասիրութիւններու եւ երկերու, որոնցմէ յիշարժան են.- «*Բնագանցութեան քննախօսութիւն*» (1868 թ., բնագիր՝ Discours de métaphysique), «*Աստուածադարացում*» (1710 թ., Théodicée) եւ «*Մոնադաբանութիւն*» (1714 թ., Monadologie):

² **Չարը** (յուն.՝ kakós, լատ.՝ malum, անգլ.՝ The Evil, ֆրնս.՝ Le mal, գերմ.՝ das Böse).- Չարը, բարոյագիտական *բարիին* հականիշն է, որ դատապարտման արժանի նշանակութիւն ունի եւ որմէ պէտք է խուսափիլ: Չարը անհատի մը վարմունքին եւ բարոյական ընդունուած կանոններու կամ օրէնքներու անհամաձայնութիւնն է: Ան հիմքն ու պատճառն է աշխարհի վրայ գտնուող ցաւին, տառապանքին ու ապերջանկութեան:

ու տառապանքը:

Աստուածադարացումը կը փորձէ պատասխանել յիշեալ հարցադրումին, որ ինչպէ՞ս Աստուած կարող է գիտակցաբար թոյլատրել, շխափանել, չկանխել կամ չվերացնել ընդհանրապէս շարճ ու յատկապէս մարդոց տառապանքը, նկատի ունենալով որ ան ամենագէտ, ամենակարող ու ամենաբարի է:

Փիլիսոփայական-տրամաբանական քննարկումով, Յ-րդ դարուն, հոեետորփիլիսոփայ եւ քրիստոնէութեան ջերմ ջատագով **Լակտանտիոս**³ (լատ.՝ Lactantius) կը պատճառաբանէ, հետեւեալ տարբերակներով՝

– Աստուած կ’ուզէ «չարը» խափանել, բայց չի կրնար ... ուրեմն Աստուած տկար է, ինչ որ չի համապատասխաներ Աստուծոյ էութեան:

– Աստուած կրնայ «չարը» խափանել, բայց չ’ուզեր ... ուրեմն Աստուած անբարեացակամ է, ինչ որ չի համապատասխաներ Աստուծոյ էութեան:

– Աստուած թէ՛ չ’ուզեր «չարը» խափանել եւ թէ՛ չի կրնար ... ուրեմն ան թէ՛ տկար է եւ թէ՛ անբարեացակամ, ուրեմն ան ամենակարող ու ամենաբարի Աստուած չէ:

– Աստուած թէ՛ կ’ուզէ եւ թէ՛ կրնայ «չարը» խափանել ... ինչ որ Աստուծոյ էութեան կը համապատասխանէ: ... ուրեմն՝ ուրկէ՞ ծագում առած է «չարը» եւ ինչո՞ւ չի յաղթարուիր:

Փիլիսոփայական-տրամաբանական նշեալ քննարկումի որպէս արդիւնք, կը յայտնուի պարզ հակասութիւն մը, որ հետեւեալն է.- եթէ մենք ընդունինք, որ միաժամանակ գոյութիւն ունին թէ՛ ամենագէտ, ամենակարող ու ամենաբարի Աստուածը եւ թէ՛ «չարը»:

Եթէ նկատի առնենք Աստուածաշունչը, հոն կը տեսնենք, որ տառապանքի միջոցով Աստուած մարդը իրեն մօտեցուցած է: Այս իմաստով լաւագոյն օրինակը **Յոբի** (Hiob) պարագան է: Յոբ, բազմաթիւ ցաւերու ու տառապանքի մէջէն անցնելէ ետք, տակաւին հարց կու տար՝ «Աստուծոյ ձեռքէն միայն բարիքը ընդունինք ու չարիքը չընդունինք» (Յոբ. 2/10), ինչպէս նաեւ կ’ըսէր՝ «...ականջովս լսած էի քու մասին, բայց հիմա աչքս կը տեսնէ քեզ» (Յոբ. 42/5):

Կան նաեւ աստուածաշնչեան այլ օրինակներ՝

• **Գիրք Սաղմոսաց** (Psalms, 78/34-35).-

«Երբ կը սպաննէր զանոնք, զինք կը խնդրէին ... ու կը յիշէին, որ Աստուած իրենց Վիմն է»:

³ **Լակտանտիոս** (Lucius Caecilius Firmianus Lactantius, 250 – 325 թ.)- Ափրիկեան ծագումով, հռոմէացի հոեետորփիլիսոփայ, որ ծնած է հեթանոս ընտանիքի մէջ ապա 40 տարեկանին քրիստոնէայ կը մկրտուի եւ կը դառնայ նոր կրօնին ջերմ ջատագովը: Իր գրութիւններով պաշտպանած է Քրիստոնէութիւնը: Գլխաւոր երկերու շարքին է իր «Աստուածային հրահանգները» (լատ.՝ Institutiones Divinae), «Աստուծոյ գայրոյթի մասին» (լատ.՝ De ira Dei) եւ «Փիւնիկ թռչունի մասին» (լատ.՝ De ave phoenice):

• **Գիրք Առակաց** (Proverbs, 3/11-12).-

«Ուրդեակ իմ, Տիրոջը խրատը մի՛ անարգեր ու անոր պատիժէն մի՛ յուսահատիր, վասնզի Տէրը իր սիրածը կը խրատէ ու կը յանդիմանէ (կը պատժէ):»

• **Գիրք Առակաց** (Proverbs, 16/4).-

«Տէրը ամէն բան իր նպատակին համար ստեղծեց, նաեւ ամբարիշտները (անաստուածները) չար օրուան համար:»

• **Մարգարէութիւն Եսայեայ** (Isaiah, 45/7).-

«Ես եմ Տէրը եւ ուրիշը չկայ՝ լոյսը հաստատողը ու խաւարը ստեղծողը, խաղաղութիւնը ընողը ու չարիքը ստեղծողը: Այս ամէն բաները ընողը ես Տէրս եմ:»

• **Մարգարէութիւն Ամովսայ** (Amos, 3/6).-

«Միթէ՞ ֆաղափին մէջ չարիք մը կ'ըլլայ՞, եթէ Տէրը զանիկա ըրած չէ:»

• **Նոր Կտակարանին մէջ եւս կան նման օրինակներ, ուր կը հաստատուի, որ ամէն ինչ կը կատարուի ամենագէտ, ամենակարող ու ամենաբարի Աստուծոյ գիտութեամբ ու հրամանով:**

Բողոքականութեան հիմնադիր **Մ. Լութեր**⁴ (Martin Luther) եւս կ'արդարացնէր մարդոց ցաւն ու տառապանքը, որոնք մարդը կ'առաջնորդեն դէպի աղօթքն առ Աստուած եւ աստուածճանաչում (աստուածիմացութիւն): Լութերի համաձայն, ցաւէն ու տառապանքէն տկարացած ու թուլացած մարդը, Աստուծոյ դիմելով եւ անոր օգնութեամբ պիտի կարողանայ իր նեղութիւնները տանիլ ու յաղթանայրել, աւարտին՝ զԱստուած փառաբանելու համար:

Արդ, ինչպէ՞ս կարելի է լուծել այս բաւական խրթին, գրեթէ անլուծելի թուացող հարցը:

Շատեր⁵ կը մտածեն, որ աստուածաբանացման գլխաւոր հարցադրումը «ի սկզբանէ սխալ է» եւ զայն կը համարեն որպէս շահադիտական հարց, երբ մարդ ասդենական աշխարհէն, անդենական Աստուծոյ մասին եւ անոր հանդէպ, իր հասկացութիւններով ու բռնեցողով, եզրափակիչ արտայայտութիւններ կ'արձակէ: Այս տեսակէտի կողմնակիցները բաւական խրթին այս հարցը կը տեղափոխեն շահադիտական (Speculative) մակարդակէն դէպի գոյապաշտական (Existential) մակարդակ:

⁴ Մ. Լութեր (Martin Luther, 1483 – 1546 թ.).- Պերման աստուածաբան, Սբ. Օգոստինոսի միաբանութեան վանական: Եկեղեցա-կրօնական *բարենորոգումներու* (Reformation) նշանաւոր ռահվիրայ. հիմնադիր՝ Բողոքականութեան (Protestantism): Ան, առաջին անգամ ըլլալով Աստուածաշունչ մատենանը թարգմանած է գերմաներէնի: Յայտնի են սկզբնական շրջանի իր բարեկարգչական 95 դրոյթները (Thesis):

⁵ «Շատերուն» մէջ, կայ օրինակ գերման կաթոլիկ աստուածաբան-փիլիսոփայ Պ. Կնաուր (Peter Knauer, *1935 թ.), որ հանրածանօթ է իր էկումենեան հիմնարար աստուածաբանութեամբ (Fundamental Theology):

Վերոյիշեալ գաղափարը կարելի է այլ խօսքով մը պարզաբանել, փոխանակ հարց տալու, որ «ինչպէ՞ս կարող է Աստուած թոյլատրել շարը», նոր հարցադրումով մը կարելի է ըսել՝ «ինչպէ՞ս կարող է մարդը դիմանալ շարին, ի տես իր վախճանականութեան»:

Այժմ տեսնենք թէ այս խորթին հարցը լուծելու ի՞նչ տարբեր միջոցներ կան եւ որքա՞ն համոզիչ կը թուին անոնք:

ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Վերոյիշեալ աստուածաբարացման հարցի առնչութեամբ, եղած են լուծման բազմաթիւ փորձեր, որոնցմէ պիտի ներկայացուին կարեւորները միայն:

1. Չարը, որպէս ոչ-գոյ ու բարիի բացակայութիւն⁶

Քրիստոնէական աստուածաբանութիւնը եւ «եկեղեցւոյ հայրերը», սկզբնական շրջանին, խուսափելու համար նշուած գլխաւոր հարցադրման տհաճ ու վնասակար փաստարկումներէն կամ հաստատելու համար աստուածաբարացում մը, շարը կը բնորոշեն որպէս «ոչ-գոյ», այսինքն՝ գոյութիւն չունեցող:

Չարի՝ որպէս «ոչ-գոյ» գաղափարը կը գտնենք նաեւ Նոր-Պլատոնական փիլիսոփայութեան մօտ: Արդարեւ, Նոր-Պլատոնականութեան հիմնադիր յոյն փիլիսոփայ Պլոտինոս⁷ (Plotinus, յուն.՝ Plôtinos), ինչպէս նաեւ միջնադարեան սրբադասուած փիլիսոփայ-աստուածաբաններ՝ Ա. Օգոստինոս⁸ (Օգոստինոս Երանելի – Aurelius Augustinus) եւ Թ. Աքուինացի⁹ (Thomas Aquinas),

⁶ Չարը, որպէս ոչ-գոյ ու բարիի բացակայութիւն.- Այս գաղափարը որոշ չափով մանրամասնուած է նաեւ հեղինակի 2021 Հոկտեմբերին Անթիլիասի մէջ լոյս տեսած «ԲՄՐՈՑԱԳՔՏՈՒԹՅՈՒՆ – փիլիսոփայական ակնարկ» երկին մէջ, «Բարին ու Չարը» հասկացութեան տակ, հոն՝ Մաս 9, էջ 427:

⁷ Պլոտինոս (Plotinus, յուն.՝ Plôtinos, 204 – 270 թ.).- Յոյն նշանաւոր փիլիսոփայ: Աշակերտ՝ Ամոնիոս Սակասի (յուն.՝ Ammonios Sakkas, 175 – 242 թ.), որ հիմնադիրն էր եգիպտական Ալեքսանդրիոյ դպրոցին: Պլոտինոս Նոր-Պլատոնականութիւն (Neo-Platonism) փիլիսոփայական ուղղութեան հիմնադիրը կը նկատուի:

⁸ Ա. Օգոստինոս (Օգոստինոս Երանելի – լատ.՝ Aurelius Augustinus, 354 – 430 թ.).- Լատին աստուածաբան-փիլիսոփայ: Ներկայացուցիչ Միջնադարու Հայրաբանութիւն (Patristics) շրջանի: Սրբադասուած՝ Կաթոլիկ Եկեղեցւոյ կողմէ, իսկ Ուղղափառ Եկեղեցւոյ կողմէ դասուած՝ երանելիներու շարքին: Հեղինակ է բազմաթիւ երկերու եւ ինքնակենսագրութիւն նկատուող «Խոստովանութիւններ» (լատ.՝ Confessiones) երկին, որ իր գլուխ գործոցը կը նկատուի: Քրիստոնէայ մկրտուելէ առաջ հետեւած է յունական դասական փիլիսոփայութեան եւ Մանիքեանութեան (Manicheism):

⁹ Թ. Աքուինացի (լատ.՝ Thomas Aquinas, 1224 – 1274 թ.).- Իտալացի աստուածաբան-փիլիսոփայ ու բարոյախօս: Միջին դարական փիլիսոփայութեան (Scholastic) մեծագոյն ներկայացուցիչներէն: Իր անունով կոչուած է ուղղութիւն մը՝ Թոմականութիւնը (Tomism):

կը հաստատեն, որ շարք ինքնին գոյութիւն չունի եւ նոյնինքն բարիին բացակայութիւնն է (լատ.՝ *privatio boni*): Այլ խօսքով, շարք իմաստ կը ստանայ միայն բարիին հակադրուելով:

Օգոստինոս, բարիի եւ շարի համեմատութիւնը կը նմանցնէ լոյսի եւ շուքի համեմատութեան, ուր շուքը իմաստ կը ստանայ միայն լոյսին հակադրուելով ու լոյսի բացակայութեամբ:

Նաեւ պէտք է յիշել, որ Հինդուականութեան (Hinduism) համաձայն, շարք իրապէս գոյութիւն չունի (այսինքն՝ «ոչ-գոյ» է): Անոնք (հինդուականներ) շարք կը բնորոշեն, որպէս՝ «պարզապէս պատրանքային երեւոյթ»:

Վերոյիշեալ «Բարիի բացակայութեան տեսութիւնը», որպէս շատ յաջող գաղափար գրեթէ անվիճելի էր փիլիսոփայական եւ աստուածաբանական ոլորտներու մէջ, մինչեւ 17-րդ դար: Անկէ ետք միայն, վերոյիշեալ տեսութիւնը ունեցաւ իր ընդդիմադիրները եւ «շարք», որպէս փորձնական (Empiric) բացայայտումներու վրայ հիմնուած փաստ, ուրոյն գոյութեան կարգավիճակ ստացաւ:

2. Լայքնիցեան լուծումը

Գերման նշանաւոր փիլիսոփայ Լայքնից, արդէն յիշեցինք այս յօդուածի սկիզբը, որպէս «աստուածաբարացում» եզրոյթի կազմողն ու առաջին օգտագործողը: 17-րդ դարուն, աստուածաբարացման ոլորտին մէջ, ան կը պնդէր, որ Աստուծոյ ստեղծագործութիւնը կը կայանայ՝ տրամաբանական կարելի լուագոյն աշխարհի մը վրայ, ուր շարք անհրաժեշտ մէկ մասը կը կազմէ, նոյնիսկ այս լուագոյն կարելի աշխարհին:

Լայքնից կը պատճառաբանէր, որ՝

– Ամենագէտ Աստուած, իր անսահման իմաստութեամբ կրցած է գտնել լուագոյնը, բոլոր հնարաւոր աշխարհներէն:

– Ամենաբարի Աստուած, իր անսահման բարութեամբ կրցած է ընտրել ամենաբարի աշխարհը:

– Ամենակարող Աստուած, իր անսահման ամենակարողութեամբ ստեղծած է ա՛յս աշխարհը:

Հետեւաբար, Աստուծոյ ստեղծած եւ գոյութիւն ունեցող ա՛յս աշխարհը «բոլոր հնարաւոր աշխարհներէն լուագոյնն» է, ուր շարի ու շարիքի իւրաքանչիւր ձեւ անհրաժեշտ ու բացատրելի է:

Սուրբերու կարգ դասուած դոմինիկեան միաբան: Գլխաւոր երկն է՝ «Համամատեան աստուածաբանութեան» (*Summa theologiae*):

Լայբնից կը զանազանէր շարի երեք գլխաւոր տեսակներ.-

- 1) բնագանցական շարը,
- 2) բնական-ֆիզիկական շարը եւ
- 3) բարոյական շարը:

Հետագային, այլ փիլիսոփաներ, ինչպէս Ֆրանսացի Վոլտէր¹⁰ (Voltaire), անգլիացիներ Դ. Հյում¹¹ (David Hume) եւ Բ. Ռասսէլ¹² (Bertrand Russell), ինչպէս նաեւ գերման Ի. Կանտ¹³ (Immanuel Kant) եւ ուրիշներ, ամբողջովին մերժեցին ու երբեմն նոյնիսկ հեզնեցին Լայբնիցի յիշեալ գաղափարը եւ ընդհանրապէս անոր աստուածադարացումը:

Առաջին ակնարկով իսկ, կարելի է յստակ դժուարութիւն տեսնել բոլորովին անորոշ «լաւագոյն աշխարհ» բառակապակցութեան իմաստին մէջ: Ինչ-

¹⁰ **Վոլտէր** (Voltaire, 1694 – 1778 թ.)- Բուն անունով՝ François Marie Arouet, ֆրանսացի պատմաբան-փիլիսոփայ-գրող: Լուսաւորութեան դարաշրջանի ներկայացուցիչ:

¹¹ **Դ. Հյում** (David Hume, 1711 – 1776 թ.)- Սկոտլանդացի բարոյագէտ-փիլիսոփայ, տնտեսագէտ եւ պատմաբան: Ընկեր Ա. Սմիթի: Լուսաւորութեան շրջանի, Փորձապաշտութիւն (Empiricism) փիլիսոփայական շարժումի ներկայացուցիչ: Բարոյագիտութեան առնչուած իր գլխաւոր երկն է՝ «Հարցաքննութիւն՝ բարոյականութեան սկզբունքներուն» (1751 թ., անգլ. բնագիր՝ An Enquiry Concerning the Principles of Morals):

¹² **Բ. Ռասսէլ** (Bertrand Russell, 1872 – 1970 թ.)- Անգլիացի ուսողագէտ (մաթեմատիկոս)-փիլիսոփայ: Վերլուծական ու լեզուի փիլիսոփայութիւն (Analytic & Language Philosophy) եւ Մետա-բարոյագիտութիւն (Meta-Ethics) ուղղութեան ներկայացուցիչ: Բարոյագիտութեան առնչուած գլխաւոր երկերն են՝ «Ամուսնութիւն եւ Բարոյականութիւն» (1929 թ., Marriage and Morals) եւ «Երջանկութեան Յաղթանակը» (1930 թ., The Conquest of Happiness):

¹³ **Ի. Կանտ** (Immanuel Kant, 1724 – 1804 թ.)- Գերման աշխարհահռչակ գիտնական փիլիսոփայ. նախահայր՝ Գերմանական Գաղափարապաշտութիւն (German Idealism) փիլիսոփայական ուղղութեան. հիմնադիր՝ Պարտագիտական Բարոյագիտութիւն (Deontological Ethics) տեսութեան: Փիլիսոփայութեան ընդհանուր պատմութեան մեծագոյն դէմքերէն: Կանտ հեղինակ է բազմաթիւ երկերու: Իր գլուխ-գործոցը կը նկատուի՝

→ «Քննադատութիւն զուտ բանականութեան» (1781/1787 թ., գերմ.՝ "Kritik der reinen Vernunft", կրճատ.՝ KrV, անգլ.՝ "Critique of Pure Reason") հատորը, որու աշխատասիրութիւնը տեսած է 11 տարիներ: Ա. հրատարակութենէն 2 տարի ետք Կանտ, որպէս պարզաբանում կը հրատարակէ՝

→ «Պրոնեգոմեններ ապագայ ամէն մետաֆիզիկայի, որ կարող է յառաջ գալ որպէս գիտութիւն» (1783 թ., գերմ.՝ "Prolegomena zu einer jeden künftigen Metaphysik, die als Wissenschaft wird auftreten können", անգլ.՝ "Prolegomena to any future metaphysics, that will be able to present itself as a science").

Բարոյագիտութեան ու գեղագիտութեան մասին գրած իր երկերու կողքին, ան ունի նաեւ Կրօնի փիլիսոփայութեան մասին հետեւեալ կարեւոր երկը՝

→ «Կրօնը, լոյ բանականութեան սահմաններուն մէջ» (1793 թ., գերմ. բնագիր՝ "Die Religion innerhalb der Grenzen der bloßen Vernunft", անգլ.՝ "Religion Within the Bounds of Bare Reason"), որ կը նկատուի քննադատական իր 4-րդ հատորը:

պէս իւրաքանչիւր ամենամեծ թիւի վրայ կարելի է, թիւ մը աւելցնելով, աւելի մեծը մտածել, նոյնպէս «լաւագոյն աշխարհ» հասկացութեան վրայ, կարելի է շատ աւելի լաւ աշխարհի մը մասին մտածել, օրինակ աշխարհ մը, առանց շարի ու տառապանքի, եւայլն...:

Քննադատելի այլ նիւթ մը կը նշէ նաեւ աւստրիացի փիլիսոփայ **Գերհարդ Շտրեմինգէր**¹⁴ (Gerhard Streminger): Շտրեմինգէրի համաձայն, Լայբնիցի յիշեալ պատճառաբանութիւնը հիմնուած է՝ Աստուծոյ ամենագիտութեան, ամենաբարութեան եւ ամենակարողութեան վրայ, յատկանիշներ, որոնք դեռ պէտք է ապացուցուին՝ աստուածարդարացման ոլորտի մէջ: Այլ խօսքով, Լայբնից, որպէս նախադրութիւն (Postulate) արդէն կ'ընդունի, ինչ որ դեռ չէ փաստուած:

3. Հակադրութիւններու օգտագործման լուծումը

Գերման բարոյագէտ-փիլիսոփայ **Ն. Հէօրստէր**¹⁵ (Norbert Hoerster) կը նկարագրէ լուծման ի՛ր տարբերակը.- Չարը իր «հակադրման ու լրացման» միջոցով «անփոխարինելի ներդրում ունեցաւ այս աշխարհի լաւագոյն ընդհանուր պատկերին մէջ»: Ինչպէս «հակադրութիւններու համադրումով խօսք կը գեղեցկանայ»¹⁶, նոյնպէս աստուածային հմտութեամբ եւ բարիի ու շարի հակադրութիւններու օգտագործմամբ՝ յառաջացած է գեղեցկագոյն ու լաւագոյն աշխարհը:

Նաեւ լուծման այս տարբերակը կը բախի որոշ դժուարութեան, քանզի կարելի չէ «գեղեցիկ» եւ «բարի» հասկացութիւններու միջեւ յստակ համամանութիւն մը տեսնել:

¹⁴ **Գ. Շտրեմինգէր** (Gerhard Streminger, *1952 թ.)- աւստրիացի փիլիսոփայ եւ թարգմանիչ: Աստուածիմաստութեան առնչուած իր գլխաւոր երկն է՝ «Աստուծոյ բարութիւնը եւ աշխարհի չարիքները» (2003 թ., գերմ. բնագիր՝ Gottes Güte und die Übel der Welt): Ան թարգմանած ու խմբագրած է փիլիսոփայ **Դ. Հյումի** (David Hume, 1711 – 1776 թ.) երկերը:

¹⁵ **Ն. Հէօրստէր** (Norbert Hoerster, *1937 թ.)- Գերման ժամանակակից բարոյագէտ-փիլիսոփայ: Բարոյագիտութեան առնչուած գլխաւոր երկերն են՝ «Օգտաւաշտական բարոյագիտութիւն եւ ընդհանրացում» (1971 թ., գերմ. բնագիր՝ Utilitaristische Ethik und Verallgemeinerung), «Բրաւունք եւ Բարոյականութիւն» (1986 թ., գերմ. բնագիր՝ Recht und Moral), «Բարոյագիտութիւն եւ Շահագրգռութիւն» (2003 թ., գերմ. բնագիր՝ Ethik und Interesse): Իսկ Աստուածիմաստութեան առնչուած գլխաւոր երկերն են՝ «Աստուծոյ հարցը» (2007 թ., գերմ. բնագիր՝ Die Frage nach Gott) եւ «Ամենաբարի Աստուածը եւ Չարը» (2017 թ., գերմ. բնագիր՝ Der gütige Gott und das Übel):

¹⁶ **Մէջբերումը** եւ գաղափարը քաղուած են փիլիսոփայ-աստուածաբան **Օգոստինոս Երանելիէն** եւ յիշուած գերման ժամանակակից փիլիսոփայ **Ն. Հէօրստէրի** (Norbert Hoerster, *1937 թ.) «Հաւատք եւ Բանականութիւն» (1988 թ., գերմ. բնագիր՝ Glaube und Vernunft) երկին մէջ, հոն՝ էջ 108:

Այն պնդումը, որ «կատարելությունը տառապանքով կը բարձրանայ», խիստ արհամարհելի կը դառնայ, մանաւանդ երբ ընդհանրապէս տառապանքը (նաեւ անմեղ մանուկներու տառապանքը), որոշ չափ ու սահման անցնի: Կրօնի մը վերջնական սկզբունքը պէտք է լոկ բարոյագիտական հիմք ունենայ եւ ոչ թէ՛ գեղագիտական:¹⁷

Իսկ այն վիճելի գաղափարին պնդումը, որ «տառապանքը անհրաժեշտ ու անփոխարինելի է Բարին գիտակցելու համար», կարելի է պարզապէս պատճառաբանել, որ ամենագէտ, ամենակարող ու ամենաբարի Աստուած կրնար մարդը ստեղծել այնպէս, որ առանց «չարը» իմանալու ան կարենար «Բարին» գնահատել: Այլ խօսքով, անհրաժեշտ պայման մը չէ «Չարը» իմանալ, «Բարին» գնահատելու համար:

4. Ընդհանուր զարգացման լուծումներ

Ընդհանուր զարգացման լուծումներու պարագային, նկատի կ'առնուին թէ՛ մարդկային զարգացման եւ թէ՛ աշխարհի զարգացման հարցերը:

• Իրենէական լուծումը

Բրիտանացի աստուածաբան-փիլիսոփայ **Ջ. Հիք**¹⁸ (John Hick) մշակած է աստուածարդարացման իւրայատուկ եղանակ մը, զոր կոչած է *Ջ-րդ դարու նշանաւոր եկեղեցւոյ հայրերէն մէկուն*, յոյն աստուածաբան **Իրենէոսի**¹⁹ (Irenaeus) անունով:

Հիքի համաձայն, չարն ու չարիքը, ցաւն ու տառապանքը կրնան անհրաժեշտ ըլլալ մարդու հոգեւոր զարգացման համար, իսկ մարդկային կամքի ազատութիւնը հնարաւորութիւն կու տայ մարդու բարոյականութեան զարգացման:

Նաեւ աստուածարդարացման այս տեսակէտը ունի իր դժուարութիւն-

¹⁷ Մէջբերումը եւ գաղափարը քաղուած են աւստրիացի ժամանակակից փիլիսոփայ **Գ. Շտրեմինգերի** (Gerhard Streminger, *1952 թ.) «Աստուծոյ բարութեան եւ աշխարհի տառապանքներու մասին» (2003 թ., գերմ. բնագիր՝ Von der Güte Gottes und die Leiden der Welt), այսինքն աստուածարդարացման մասին գրուած երկէն, հոն՝ էջ 93-103:

¹⁸ **Ջ. Հիք** (John Hick, 1922 – 2012 թ.)- Բրիտանացի ժամանակակից աստուածաբան-փիլիսոփայ, որու բազմաթիւ երկերը կ'ընդգրկեն հետեւեալ մեզ հետաքրքրող նիւթերը.- «հաւատքը ու գիտելիքը», «կրօնի իմացաբանութիւնն ու փիլիսոփայութիւնը», «Աստուծոյ գոյութիւնը», «աստուածարդարացումը»...:

¹⁹ **Իրենէոս** (Irenaeus, 135 – 200 թ.)- Յոյն աստուածաբան, ծագումով զմիւռնիացի (յուն.՝ Smyrna, այսօր՝ թրքական Իզմիր), եղած է ֆրանսական Լիոն (Lyon) քաղաքի երկրորդ եպիսկոպոսը, նահատակուած է Լիոնի մէջ: 2-րդ դարու նշանաւոր յոյն աստուածաբանը սրբադասուած է Կաթոլիկ եկեղեցւոյ կողմէ: Հեղինակ է բազմաթիւ երկերու, որոնք թարգմանուած են տարբեր լեզուներու (նաեւ հայերէնի), սակայն մեծ մասը մեզի չէ հասած:

ները: Արդէն անդրադարձանք այն գաղափարին, որ ծայրայեղ տառապանքը (նաեւ անմեղ մանուկներու տառապանքը), չեն նպաստեր որեւէ յառաջդիմութեան ու զարգացման:

• Հեգելի լուծումը

Գերման գաղափարապաշտ (Idealism) փիլիսոփայական ուղղութեան աշխարհահռչակ ներկայացուցիչ, փիլիսոփայ **Հեգել**²⁰ (Georg Wilhelm Friedrich Hegel) կը պնդէ, որ շարք եւ տառապանքը պատմութեան զարգացման մէջ կը ծառայեն, որպէս անհրաժեշտ անցումային փուլ, ուր Հեգելի իսկ բառերով՝ «աստուածային նախախնամութիւն մը, աշխարհի բացարձակ ու բանական վերջնականատակը կ'իրականացնէ»:

Հեգել իր բոլոր մեկնաբանութիւններուն համար կ'օգտագործէ՝ «նշմարիտ աստուածաբարացումը պատմութեան մէջ»²¹ բառակապակցութիւնը, որ ինքնին յստակ բնութագրութիւն մը չունի:

• Անաւարտ ստեղծագործութեան լուծումը

Գերման նշանաւոր աստուածաբան **Բերգեր**²² (Klaus Berger) կ'ենթադրէր, որ Աստուծոյ կողմէ աշխարհի ստեղծագործութիւնը դեռ չէ աւարտած եւ ան ընթացքի ու զարգացման մէջ է:

²⁰ **Գ. Վ. Ֆ. Հեգել** (Georg Wilhelm Friedrich Hegel, 1770 – 1831 թ.)- Գերման նշանաւոր փիլիսոփայ: Գերմանական գաղափարապաշտութիւն (German Idealism) փիլիսոփայական ուղղութեան յայտնի ներկայացուցիչ: Հեգելի երկերու հաւաքածոն՝ 20 հատորով: Գլխաւոր երկերն են.-

- «Ոգիի երեւութաբանութիւն» (1806-07 թ., բնագիր՝ Phänomenologie des Geistes, անգլ.՝ Phenomenology of Spirit),

- «Տրամաբանութեան գիտութիւն» (1812-16 թ., գերմ. բնագիր՝ Wissenschaft der Logik, անգլ.՝ Science of Logic),

- «Փիլիսոփայական գիտութիւններու հանրագիտարան» (1817 թ. ապա 1830 թ., գերմ. բնագիր՝ Enzyklopädie der philosophischen Wissenschaften, անգլ.՝ Encyclopaedia of the Philosophical Sciences):

²¹ **Մէջբերումը**, Հեգելի «Դասախօսութիւններ պատմութեան փիլիսոփայութեան մասին» (1837 թ., գերմ. բնագիր՝ Vorlesungen über die Philosophie der Geschichte) երկի 51-րդ գլուխէն:

²² **Կ. Բերգեր** (Klaus Berger, 1940 – 2020 թ.)- Գերման ժամանակակից նշանաւոր աստուածաբան՝ նախ Կաթոլիկ եկեղեցոյ ապա Բողոքական եկեղեցոյ եւ մասնագէտ Նոր Կտակարանի: Ստացած է նաեւ փիլիսոփայական ուսում: Իր բազմաթիւ երկերուն մէջ հանրաձանօթ են, Աստուածաշունչի (մանաւանդ Նոր Կտակարանի) գիտական ուսումնասիրութիւնները, հնադարեան գրութիւններու թարգմանութիւնները, ինչպէս նաեւ Յիսուսի մասին գրութիւնները («Յիսուս» - 2004 թ., գերմ. բնագիր՝ Jesus): Բերգեր եղած է դասախօս, գլխաւորաբար Հայդելբերգի (Heidelberg) համալսարանին մէջ:

Բերգերի համաձայն, երբ Աստուած սկսաւ իր ստեղծագործութեան, չարք եւ քաղաք արդէն կային: Աստուած ստեղծելով աշխարհը, թէեւ (որոշ չափով) ետ մղեց չարն ու քաղաքը, բայց անոնք դեռ առկայ են եւ դեռ վտանգ կը սպառնան, մանաւանդ՝ երբ Աստուծոյ ներկայութիւնը նուազի: Այս իմաստով, Աստուածաշունչն ու Քրիստոնէութիւնը երբեք նպատակ չեն ունեցած չարի ու քաղաքի ծագման մասին պատասխան տալ, այլ Աստուած ինքնին կը նկատուի այդ չարէն ու քաղաքէն փրկութիւնը:

Բերգերի համաձայն, Աստուած երբեք դաժան չէ: Աշխարհի վրայ եթէ չարիք մը կամ աղէտ մը պատահի (օրինակ երկրաշարժի, մրրիկի, փոթորիկի, հրաբուխի ժայթքումի, կամ ցունամիի պատճառներով...), ասիկա ցոյց կու տայ աստուածային ստեղծագործութեան ինքնավարութիւնը կամ ինքնօրինութիւնը (Autonomy): Այլ խօսքով, վերոյիշեալ աղէտներու (որպէս չարիք) իսկական պատճառը պէտք է փնտռել բնութեան օրէնքներուն (գերմ.՝ Naturgesetz, անգլ.՝ Natural Law) մէջ:

Աստուածարդարացման որպէս տեսակէտ, անաւարտ ստեղծագործութեան այս լուծումով, սակայն, բոլորովին հարցական ու կասկածելի կը դառնայ Աստուծոյ ամենակարողութիւնը, որպէս հիմնական սկզբունք: Ասիկա նաեւ կը նշանակէ, որ Աստուծոյ կողմէ տրուած կատարեալ ստեղծագործութեան ու արքայութեան խոստումները տակաւին չեն իրագործուած ու ամբողջովին չեն յարգուած:

ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ Ա. ՔԷՉԵԱՆԻ
Գերմանիա

(Շար. 2)



ՍՓԻԻՌՔԻ ՏԱՐԻ

ՍՓԻԻՌՔԱՀԱՅ ԴՊՐՈՅԸ՝ ԱԲԱՆԴԱԿԱՆ ԴԻՄԱԳԾՈՒԹԵԱՆ ՈՒ ՆՈՐԱՐԱՐ ՊԱՏՇԱՃԵՑՈՒՄՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ

Բոլորս ալ ականատես ենք իրողութեան մը, մերօրեայ աշխարհը մտած է արագասույր փոփոխութիւններու եւ խելքի պտոյտ պատճառող շրջափոխութիւններու փուլէ մը ներս: Մեր շրջապատին մէջ ամէն ինչ կը փոխուի տեւաբար, օրէ-օր:

Դիտեցէ՛ք ձեր շուրջբոլորը:

Ամէնէն առաջ փոփոխութեան մէջ է մարդ անհատին մտածելակերպը, յետոյ՝ ապրելակերպը, այնուհետեւ՝ վարքն ու բարքը: Կը փոխուին ընտանիքի հասկացութիւնն ու անոր կապուած բարոյական ըմբռնումները, եւ հոսկէ ալ՝ հետզհետէ կը խախտին ծնողք-զաւակ ու այր-կին յարաբերութեանց ականդական հիմքերը: Նկատելի է որ փոփոխութիւն կը կրեն մեր նախասիրութիւններն ու ճաշակները եւս, կը փոխուին մինչեւ իսկ մեր...սննդատեսակները: Միով բանիւ՝ կը փոխուի սերունդներու ամբողջ կեանքը, լրիւ աշխարհայեացքը:

Ճարտարագիտութեան եւ թեքնոլոգիի բազմազան զիւտերն ու զարգացումները մէկ կողմէ հրաշքներ կ'իրականացնեն մեր կեանքին մէջ, միւս կողմէ ալ՝ տակնուվրայ կ'ընեն մեր առօրեայ կեանքին ականդական դրուածքը:

– Հի՞ն դրուածքը աւելի լաւ էր, թէ նորը:

Այս հարցադրումը շարունակ կ'ուղղենք մենք մեզի, սակայն յստակ ու վերջնական պատասխան մը տալու կը վարանինք: Կը վախնանք որ մեր տալիք պատասխանը կրնայ ճիշդ չըլլալ, կրնայ մոլորեցուցիչ ըլլալ:

Այսօրուան մարդ անհատը,-գոր մենք կը սիրենք կոչել «աշխարհաքաղաքացի»,- եթէ կը պատկանի միջին չափահաս սերունդին (50-60 տարեկան), ապա կը տատանի հինին ու նորին միջեւ եւ հակասութիւն մը կ'ապրի իր ներսիդին: Մէկ կողմէ իր սիրտը քաղցր յուշերով կապուած կը պահէ 40-45 տարի առաջուան ընկերային անուշ կենցաղին, մեղկ, խաղաղաւէտ, շէն ու

լիառատ կեանքին (զոր կորսնցուցած ըլլալուն համար կ'ափսոսայ), միև կողմէ ալ ներքուստ ուրախ է, որ իր կեանքին այս Բ. կէսը կ'անցընէ հրաշալի գիւտերու դարաշրջանի մը մէջ, կ'օգտուի անոնց աներեւակայելի բարիքներէն...: Սքայփը, դիմատետրը, առձեռն հեռաձայնը, շարժական համակարգիչը, 24 ժամուան վրայ բանող արբանեակային պատկերասփիւռի բազմահարիւր կայանները, թուայնացուած գիրքերն ու համացանցային մամուլը կը լեցնեն իր ամբողջ օրը: Կը գերե՛ն զինք:

Այս հսկայ փոփոխութիւններու ալիքին մէջ՝ ո՞ւր է տեղը դպրոցներուն, այս պարագային՝ Սփիւռքի հայկական դպրոցներուն: Անոնք կը շարունակե՞ն պահել իրենց աւանդական դիմագծութիւնը: Կը հետամտի՞ն իրենց բուն առաքելութեան ու կոչումին, որ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒՄՆ է, ՀԱՅԵՐԷՆԻ ԻՄԱՅՈՒՄԸ, – որքանո՞վ, ի՞նչ համեմատութեամբ, յաջողութեան ի՞նչ չափանիշով:

Երանի՛ թէ տուեալներ ունենայինք ձեռքի տակ, ճշդելու համար Սփիւռքի հայկական ամէնօրեայ վարժարաններու ընդհանուր թիւը: Չունինք նման ցանկ մը: Կ'ենթադրենք սակայն, որ այդ թիւը կը հասնի 100-ի:

Շահեկան պիտի ըլլար իմանալ՝ թէ վերջին 15-20 տարիներուն քանի՞ նոր դպրոց բացեր ենք Սփիւռքի մէջ, ու ատոր փոխարէն՝ քանի՞ դպրոց փակեր...:

Ամէն պարագայի, մեր պատմական վարժարանները, ինչպէս օրինակ՝ Պոլսոյ էսայեանը, Կեդրոնականն ու Մխիթարեանը, Հալէպի եւ Պէյրութի ճեմարանները, Գահիրէի, Թեհրանի, Քուէյթի, Նիկոսիոյ, Աթէնքի ու մինչեւ իսկ հեռաւոր Արժանթինի մեր փառաւոր դպրոցները, -գո՛նէ անոնց մէկ մասը,- կան ու կը գոյատեւեն այսօ՛ր ալ: Շէնքերը յաճախ նորոգուած են, արդիականութեան հետ քայլ պահուած է: Տարիներու սահանքին հետ՝ դպրոցներու ընծայած կարելիութիւններն ալ ուռճացեր են, սակայն...ո՛չ անպայման ամէն ինչ ընթացեր է դրական ուղղութեամբ: Մեր վարժարաններուն երբեմնի տոհմիկ ու տաքուկ մթնոլորտին մէջ տակաւ առ տակաւ սողոսկեր է խորթ շունչ մը, բաներ մը չբացեր են, ցամքեր են, կորսուե՛ր են...: Կան կրթօճախներ, որոնք ակամայ կորսնցուցեր են իրենց երբեմնի փառքը, դարձեր են հմայաթափ, ուրիշներ՝ կծկուեր են, թուական մեծ անկում կրեր են, իսկ այլոց ալ հայեցի դիմագիծը այլափոխուեր է անդառնալիօրէն...:

Պատճա՞ռը:

Սերունդները փոխուած են: Իմա՛ցապէս ու հո՛գեպէս:

ՀԱՅ ԴՊՐՈՑԻՆ ՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՍԱՊԱՀԵՐԸ

Սփիւռքահայ դպրոցականներու այսօրուան սերունդը, իր բոլոր երեսակներով, կը պատշաճի աշխարհի նոր կարգ ու սարքին: Երբեմն, կատակով ալ

ըլլայ, կ'ըսենք, թէ այս սերունդը «Ֆէյսպուքեան սերունդ է»: Այսինքն՝ արագութեան, խիտ ու կարճ տեղեկութեան, նկարի ու ձայնի սերունդ: Խորքը շատ չի հետաքրքրեր զինք: Գոհ է ան իրեն մատուցուած մակերեսայինէն, որովհետեւ ատոր ընկալումը ճի՞ Գ ՊԱՀԱՆՋԵՐ իրմէ: Ճիշդ այս պատճառով ալ, հաւանաբար, ամբողջ հայաշխարհի մէջ գիրքի (եւ մամուլի) ընթերցումը նահանջ կ'արձանագրէ: Պատմական անցեալ ունեցող ինչ-ինչ հայատառ թերթեր կը փակուին՝ ընթերցողներու թիւի նուազումին հետեւանքով: Այլեւս գրողներ կամ գիրի սպասարկուներ գրեթէ չեն հասնիր նոյնիսկ միջին արեւելեան մեր դպրոցներէն: Հրատարակուած նոր գիրքերուն տպաքանակն ալ կը տատանի 250--400-ի միջեւ:

Դպրոցները կրնա՞ն նպաստել, որպէսզի մեր դարաշրջանի Հայ ուսանողը գիրքի ու թերթի բարեկամ դառնայ:

Դժուա՞ր հարցում եւ դժուա՞ր իրագործելի բաղձանք:

Ժամանակին, ԺԹ. դարու 70-ական թուականներուն, երբ նշանաւոր մանկավարժ ու դաստիարակ՝ Ռեթէոս Պէրպէրեան Պոլսոյ մէջ կը հիմնէր իր անունով գիշերօթիկ վարժարան մը, իրեն համար առաքելութեան կէտ-նպատակ դարձուցեր էր ԲԱՐԻՆ, ԳԵՂԵՅԻԿՆ ՈՒ ՃՇՄԱՐԻՏԸ:

Այսօր, ո՞ր է գեղեցիկն ու ճշմարիտը մեր աշակերտներու հոգիներուն մէջ: Շա՛տ բան խաթարուած է հոն:

Բանաստեղծ Զահրատ, իր սիրուն քերթուածներէն մէկուն մէջ կը գրէր. Գացէք ըսէք շար բաներուն որ չըլլան. որ չըլլայ թէ պատահին կամ երբ ըլլան հեռու մնան մեր այս պզտիկ աշխարհէն. համն ու հոտը խաթարելու չհասնին:

Եթէ Ռեթէոս Պէրպէրեան ապրէր 2000-ական թուականներուն, պիտի յաջողէ՞ր արդեօք իր վսեմ սկզբունքներուն տարածումին կամ կիրարկումին մէջ:

Այսօր, սփիւռքահայ մեր դպրոցներուն նպատակը ի՞նչ պէտք է ըլլայ: Ի՞նչ դերակատարութիւն կը սպասուի դպրոցներէն. գիտութեան ջամբո՞ւմ, դաստիարակութի՞ւն, մարդակերտո՞ւմ, հայախօսութեան արմատացո՞ւմ, մայրենիի տարրական գրաճանաչութի՞ւն, լեզուի ու մշակութային ժառանգութեան իւրացո՞ւմ, ոգիի փրկութի՞ւն, թէ՞ այլ բան...:

Մի՛շտ ի գօրու է անշուշտ դպրոցի ԱԻԱՆԴԱԿԱՆ եւ ՕՐԻՆԱԿԱՆ առաքելութիւնը, որ է՝ տուեալ երկրի կրթական ծրագիրը աւանդել գրասեղանին ետին նստած ուսանողին:

Իսկ անկէ դո՞ւրս: Անշուշտ որ կան զուգահեռ նպատակներ. Հայ աշակերտներու միասնութիւնը՝ միեւնոյն յարկին տակ, հայկական անփոխարինելի շունչը՝ որ դեռ կը յամենայ մեր դպրոցներու կտուրին տակ, ու մա՛նաւանդ՝ Հայերէնի դասապահէ՛րը...:

Մեր բոլորին ուշադրութիւնը պէտք է կեդրոնանայ, ահաւասիկ, այս կէտին վրայ. ՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԸ: Մեր համայնքային ու ազգային ղեկավարները պարտին առողջ ու կենսալիր պահել իրենց խնամքին յանձնուած վարժարանները՝ ոյժ տալով մայրենի լեզուի կատարելագործումին, որովհետեւ մայրենի այդ լեզուին բանալին է պատմութիւն, մշակոյթ, ինքնութիւն եւ կրօն հասկնալու, զանոնք ըմբռնելու կամ իւրացնելու բոլոր ճիգերուն, իբրեւ ինքնութեան վահան կամ զրահ:

Ու երբ կը խօսինք Հայերէնի դասապահերուն մասին, ինքնաբերաբար մեր դիմաց կը ցցուի ՀԱՅԵՐԷՆԱԻԱՆԻ ՈՐԱԿԱԻՈՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ունենալու կամ հայթայթելու տագնապը:

Ինչպէ՞ս եւ ուրկէ՞ ճարել Հայ ուսուցիչը...:

Գաղտնիք չէ, որ այլեւս նօսրացած է «մարդ»ու այս կերպարը:

Այնուամենայնիւ, ձեռնածալ պէտք չէ նստիլ: Պէտք է դիմել հնարաւոր ամէն միջոցի, կատարել նիւթական ու բարոյական անսակարկելի ներդրումներ՝ մեր դպրոցները օժտելու համար հայերէնաւանդ որակեալ նոր ուսուցիչներով:

Մենք դպրոցավարական լայն փորձառութիւն ունեցող ժողովուրդ ենք: Աւելի քան հարիւր տարի է ի վեր կ'ապրինք Սփիւռքի մէջ ու շատ բան սորված ենք մեզ շրջապատող քաղաքակրթութիւններէն: Եթէ կը հաւատանք Հայ Դպրոցի առաքելութեան, ուրեմն՝ ստանձնենք մեզի վիճակուած աշխատանքները, առանց ընկրկելու ծանր պարտաւորութիւններու խութերուն դիմաց...:

Հինէն ի վեր, սփիւռքահայ մեր վարժարանները կրցեր էին պահել ու պահպանել ազգային-տոհմիկ դիմագիծ մը, որ իրենց գոյութեան երաշխիքն էր: Դուրսէն այցելու մը եթէ պատահաբար մոտք գործէր հայկական դպրոցէ մը ներս ու ականջ տար բակին մէջ վազվզող, պոռացող-կանչող երեխաներու հայաբարբառ ձայնին, արդէն կը տպաւորուէր, նոյնիսկ կը յուզուէր: Մենք ի՞նչ բարերարներ ունեցած ենք, որոնք լիաբուռն դրամ տեղացուցած են Հայ Դպրոցին վրայ՝ պարզապէս տպաւորուելով կամ խանդավառուելով զբօսանքի մը ընթացքին իրենց լսած Հայերէն պոռչտութեն, երեխաներու ՀԱՅ ԶԱՅՆԷՆ: Առանց այդ Հայ ձայնին, «Հայ Դպրոց» կոչուած հաստատութիւնը ինչո՞վ կը տարբերի պետական կամ օտար կրթական օճախներէ: Հաւասարած է անոնց:

Ո՛չ որ պիտի առարկէ մեզի, եթէ ըսենք որ հայկական վարժարանները մեր գաղութներուն ՈՂՆԱՍԻԻՆԵՐՆ ԵՆ: Եթէ վերացնենք, ջնջենք մեր դպրոցները, մնացեալ ազգային կառոյցները՝ եկեղեցի, ակումբ, մարզական հիմնարկներ, մամուլ, եւայլն, կը մնան թեւատ, կաղ, անդամալոյծ:

Մարդոյժը կու գայ դպրոցէն: Դպրոցը փուռն է՝ որ շարունակ հաց կ'ար-

տադրէ, հոգ չէ որ օգտագործուած ալիւրը երբեմն փափաքելի որակը չունենայ, կամ փոսպանները չունենան երբեմնի վարպետ հացթուխներուն ճարտարութիւնը...: Ան որ հայկական դպրոց յաճախած է՝ անպայման տոհմիկ շող մը կաթեցուցեր է իր սրտին մէջ, անպայման իր ինքնութիւնը պաշտպանող անկորնչելի բան մը ծրարեր է իր հոգիին մէջ, յաճախ՝ առանց որ ինք անդրադարձած ըլլայ ատոր:

Այսօր սակայն (եւ մօտիկ ապագային) վտանգներ կան, որոնք կը սպառնան այդ աղուոր մթնոլորտին:

Միջին Արեւելքի մէջ, շատ մը հայկական դպրոցներ իրենց տարեկան պիւտճէն հաւասարակշռելու ստիպողութեան տակ՝ օտար աշակերտներ ալ կ'ընդունին այլեւս: Կամ ալ՝ թերեւս ազգային դիտանկիւնէ անպատեհութիւն չեն տեսներ Հայ եւ ոչ-հայ աշակերտներու դպրոցական միասնութենէն: Կարգ մը դպրոցներու մէջ՝ օտար աշակերտներու թիւը արդէն իսկ գերազանցած է հայերունը...:

Կարելի չէ մտահոգութեամբ չնայիլ այսպիսի դպրոցներու, որոնց վարիչներն ու պատասխանատու մարմինները ՈԳԻՆ կը զոհեն ԴԲԱՄԻՆ: Որովհետեւ այս գնացքով մեր գաղութային կրթօճախները օր մը անխուսափելիօրէն պիտի ԱՊԱՀԱՅԱՆԱՆ, պիտի կորսնցնեն իրենց տոհմիկ դիմագիծը:

Կար ժամանակ, երբ մեր այս դպրոցները մէկ-մէկ անառիկ ամրոցներ, բերդեր էին: Ո՛չ մէկ օտար տարր կը համարձակէր թափանցել այդ ամրոցէն ներս, որովհետեւ ամրոցին դարպասին առջեւ աշալուրջ կը հսկէին «քաջագուն բերդապահներ» (տնօրէն, հոգաբարձու, միութենական ղեկավար, եւ այլն): Այսօր, պատկերը շրջուած է դժբախտաբար: Երբեմնի անառիկ ամրոցին պարիսպները փլած են տեղ-տեղ, դարպասն ու քովնտի դռները անփութօրէն լա՛յն բացուած են արտաքին աշխարհին առջեւ, ու ինչ որ ամէնէն ճակատագրականն է՝ «քաջագուն բերդապահներ»ը անհետացած են հրապարակէն...:

Բերդին վերեւ՝ 80 կամ 90 տարի է ի վեր հպարտօրէն ծածանող հայկական արծուազարդ դրօշակը սահեր-ինկեր է գետին...:

Կրնա՞նք ակնկալել, որ հրաշք մը պատահի, «քաջագուն բերդապահներ»ուն շառաւիղները դա՛րձեալ յայտնուին ճակատի վրայ ու գետնէն վերցնեն ինկած դրօշակը...:

ԼԵՒՈՆ ՇԱՌՈՅԵԱՆ

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՌՕՐԵԱՅ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ
Կ՛ՈՒՆԵՆԱՅ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ԱԶԳ. ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԱԶԳ. ԿԱՌՈՅՑՆԵՐՈՒ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ՀԵՏ**

«Սփիւտֆի Տարի»ի շրջագիծէն ներս, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս երեք օրերու վրայ պաշտօնական հանդիպում-զրոյցներ ունեցաւ լիբանանահայ գաղութին հետ՝ անոր թեմական ու համայնական կառույցներուն կեանքը վերաշխուժացնելու ու վերակենսաւորելու նպատակով: Այս հանդիպումները կրեցին «Ինֆնաֆննութենէ Վերակազմակերպում» խորագիրը:

Արդարեւ, Ազգ. Առաջնորդարանի յարկին տակ, յաջորդական երեք օրերու ընթացքին Վեհափառ Հայրապետը հանդիպեցաւ Ազգ. Իշխանութեան, Լիբանանի Հայոց Թեմի Հոգեւորականութեան, Եկեղեցիներու Թաղականութեանց, Կիրակնօրեայ Վարժարաններու, Դպրաց Դասերու, Տիկնանց Յանձնախումբերու, Աղքատախնամ Մարմիններու, ինչպէս նաեւ Կուսակցութիւններու, Կառույցներու, Միութիւններու, Հայկական Վարժարաններու, Կազմակերպութիւններու եւ Հայրենակցական Միութիւններու պատասխանատուներուն ու ներկայացուցիչներուն հետ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԱԶԳ. ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Առաջին հանդիպումը տեղի ունեցաւ Երկուշաբթի, 23 Հոկտեմբեր 2023-ի երեկոյեան: Հանդիպումին ներկայ էին Լիբանանի Հայոց Թեմի Ազգ. Երեսփոխանները, Ազգ. Վարչութեան անդամները, Կրօնական Ժողովը եւ Ազգ. Առաջնորդարանի հովանիին տակ գործող բոլոր խորհուրդներու եւ յանձնախումբերու ներկայացուցիչները:

Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Շահէ Արք. Փանոսեան բացման խօսքով նկատել տուաւ, որ անցնող երկու տարիներուն, Հայրապետական Սրբատառ Կոնդակով, Նորին Սրբութիւնը համայն Հայութեան ուշադրութիւնը ուղղեց դէպի Սփիւռք եւ ժողովուրդը հրաւիրեց նոր զարթօնքի, որպէսզի նոր ճիգով առաջը առնուի սփիւռքահայ մեր կեանքէն ներս նշմարուող ընդհանուր նահանջին:

Սրբազան Հայրը յայտնեց, որ սոյն հանդիպումը կը միտի հրապարակայնօրէն խօսիլ Սփիւռքի ներկայ իրավիճակին մասին, որպէսզի նոր որոնումներ կատարենք ու նոր քայլերու դիմենք՝ մեր համայնական կեանքը նորոգելու ու ամրացնելու հրամայականներուն թելադրութեամբ: «Անկասկած, Սփիւտֆի գոյավիճակը մտասէւեռումի միտք դարձնելու գործին պէտք է առնչուին

Հայ Հոգեւորականն ու Հայ աշխարհականը, Հայ մտաւորականն ու Հայ հատաացեալը, ժողովականն ու յանձնառութեան տենչ ունեցող ամէն Հայ անհատ», շեշտեց Առաջնորդ Սրբազանը: Ան շարունակեց ըսելով, որ հակառակ դիմագրաւած անընդմէջ տագնապներուն ու զանազան դժուարութիւններուն, լիբանանահայ կեանքը անցնող տասնամեակներուն ո՛չ միայն տոկաց ու դրական յառաջընթացով յարատեւեց, այլեւ իր ստեղծած կշռոյթով, նաեւ կրցաւ ապահովել սփիւռքահայ կեանքին հայագրոշմ վիճակը: Առ այդ, ան յորդորեց իրապաշտ մօտեցումով կատարել մեր գնահատականները:



Այնուհետեւ, Սրբազան Հօր հրաւերով, պաշտօնական խօսք արտասանեց Ազգ. Երեսփոխանական ժողովի Ատենապետ՝ Վիգէն Աւագեան: Ան նկատել տուաւ, որ երկու տարիէն Թեմը կը բոլորէ իր կազմութեան 100-ամեակը: Քաղաքական ցնցումները, պատերազմները, տնտեսական կացութեան վերիվայրումները եւ ընկերային տագնապները յաճախ ստեղծած են չնախատեսուած դժուարութիւններ, շարունակաբար թեմական մարմինները դնելով ամէն

հարցի լուծում մը գտնելու անյետաձգելի պարտաւորութեան դիմաց, սակայն Թեմը ունի նաեւ մեծ աւանդ, ներուժ ու տագնապներ դիմագրաւելու, դժուարութիւններ յաղթահարելու լայն փորձառութիւն, վստահեցուց ան: «Այսօր, Կիբանանի Հայոց Թեմը, ինչպէս այլ թեմեր, դէմ-յանդիման կանգնած են տեսակ-տեսակ դժուարութիւններու եւ մարտահրաւերներու, ու բնական է, որ իրենց տագնապներուն յարմար լուծումներ գտնելու համար, մեր ժողովուրդի զաւակներուն ակնարկները դարձեալ ս-ւետին թեմական պատասխանատու-ներու ուղղութեամբ: Հետեալբար, բա-



րեբաստիկ այս այցելութիւնը, տեղի կ'ունենայ քննելու եւ խորհրդածելու համար Լիբանանի Հայութեան ամբողջական վերակազմակերպման լուրջ կարելիութիւնը՝ իր հաւաքական կեանքով, թեմական կառոյցներով, մտածողութեամբ եւ դերակատարութեամբ», հաստատեց Աւագեան:



Հուսկ, Նորին Ս. Օծութիւնը իր պատգամը ուղղեց ներկաներուն: Ան գոհունակութիւն յայտնեց դարձեալ Լիբանանի Հայոց Թեմէն ներս գտնուելուն համար՝ ըսելով, որ սոյն թեմը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմական կառոյցէն ներս իր իւրայատուկ տեղն ու արժէքը ունի՝ դերակատարութեամբ ու նկարագիրով:

Անդրադառնալով Սփիւռքի վերակազմակերպման, Արամ Ա. Կաթողիկոս շեշտեց, որ վերակազմակերպում բառը այլեւս մեզի համար լողունք պէտք չէ դառնայ: Լողունքները կարելոր

են որպէս յիշեցում, սակայն եթէ անոնք գործընթացի չվերածուին, կը դառնան անիմաստ եւ նոյնիսկ՝ վնասակար: Հայոց Հայրապետը շեշտեց, որ այսօր Սփիւռքը կը գտնուի նոր իրականութեան դիմաց, որուն առջեւ մենք չենք կրնար նախկին ոճով մտածել եւ գործել, եւ ա՛յս է հիմնական հարցը: Սփիւռքի Հայութիւնը զանազան գաղութներէ ներս պէտք է անդրադառնայ եւ խորունկ գիտակցութիւնը ունենայ, որ իր շուրջը համաշխարհային փոփոխութիւններ տեղի կ'ունենան, որոնց դիմաց ինք չի կրնար իր կեանքը, իր բոլոր տարածքներով, արտայայտութիւններով, առաջնահերթութիւններով, վերաքննութեան եւ վերարժեւորումի չենթարկել: «Ես խորապէս համոզուած եմ, որ Սփիւռքը վերաքննութեան կարիք ունի» եւ հարց տուաւ, թէ «ի՞նչ է Սփիւռքը: Ո՞վ ենք մենք Սփիւռքի մէջ: Ի՞նչ կը նշանակէ Հայ ըլլալ Սփիւռքի մէջ: Մենք այսօր պէտք է իմաստութիւնը եւ փառութիւնը ունենանք հարցադրումներ կատարելու, քննական ոգիով վերատեսութեան, վերարժեւորումի եւ վերաքննութեան ենթարկելու մեր կեանքը, մտածելակերպը, կառոյցները, կազմակերպութիւնները եւ այս մէկը ո՛չ միայն հրամայական անհրաժեշտութիւն է, այլեւ մենք արդէն իսկ ու չենք»:

Շարունակելով, Նորին Սրբութիւնը ըսաւ, որ 2022 եւ 2023 տարիները նուիրելով Սփիւռքին, փորձած է ընդհանուր գիծերով լուսարձակի տակ բե-

րել Սփիւռքին առնչուած կարգ մը հարցեր: Ան յայտարարեց, որ յառաջիկայ տարին պիտի ձօնէ մարդուժի պատրաստութեան, որովհետեւ մեր հաւաքական կեանքին մէջ, աշխատանքներուն մասնակցութիւն բերող, ծառայող, մեզի ուղղութիւն տուող, մեր կեանքին որակ տուող մարդոց կարիքը ունինք: Ան շեշտեց, որ Սփիւռքի վերակազմակերպումը սովորական մտահոգութիւն կամ երեւոյթ մը չէ եւ հետեւաբար, այդքան ալ դիւրին ու հեզասահ կերպով կարելի չէ զայն իրականացնել: Անցնող 4-5 տարիներուն, այս շրջագիծէն ներս, Անթիլիասի Մայրավանքին մէջ կազմակերպուած են համագումարներ, կատարուած են քննարկումներ եւ թեմերու այցելութեանց ընթացքին մենք բազմիցս խօսած ենք այս մասին: Ուստի, ան գոհունակութեամբ հաստատեց, որ կատարուած ճիգը ունեցած է դրական արձագանգ՝ թէ՛ մասնակցութեան իմաստով եւ թէ՛ ժողովուրդին մօտ գտնուող պատրաստակամութեան տեսակէտով:

Շեշտելով կեանքին մէջ իրապաշտ ըլլալու գաղափարը, Արամ Ա. Կաթողիկոս աւելցուց, որ անհրաժեշտ է կեանքը տեսնել այնպէս ինչպէս որ է եւ ո՛չ թէ այնպէս ինչպէս որ մենք կ'ուզենք զայն տեսնել: «Պէտք է իրապաշտ ըլլանք եւ ընդունինք մեր բացթողումները, որպէսզի կարենանք փոփոխութեան ենթարկել եւ սրբագրել սխալները: Հետեւաբար, մենք պէտք է ընդունինք, թէ սփիւտահայ մեր կեանքը հրամայական կարիք ունի բարեփոխութեան, որ գաղութներէն ներս թեմական կառոյցներով պէտք է սկսի», եզրափակեց Վեհափառ Հայրապետը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԹԱՂԱԿԱՆՈՒԹԵԱՆՑ, ԴՊՐԱՑ ԴԱՍԵՐՈՒ, ՏԻԿՆԱՆՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐՈՒ, ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ԵՒ ԱՂՔԱՏԱԽՆԱՄ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Եռօրեայ պաշտօնական հանդիպում-գրոյցներուն երկրորդը տեղի ունեցաւ Երեքշաբթի, 24 Հոկտեմբեր 2023-ի երեկոյեան: Թեմակալ Առաջնորդ Սրբազան Հայրը իր բացման խօսքին մէջ ներկաներուն ուշադրութեան յանձնեց ինքնաքննութեան եւ վերակազմակերպման սոյն աշխատանքին Հայ եկեղեցիէն՝ Հայոց Հայրապետին կոչով ընթացք առնելուն, ընդգծելով, որ դարեր շարունակ, Հայ եկեղեցին, իր ունեցած Հոգեւոր առաքելութեան կողքին, նաեւ եղած է մեր ազգային արժէքներուն պահապանը ու Հայութեան կեանքին ամէնէն ապահով երաշխաւորը ու մեր ազգային ինքնութեան կարեւորագոյն յենարանը: «Բնական է, որ Սփիւտքը վերակազմակերպելու ու նոր զարթոնքի տանելու ահազանգը բարձրանայ Հայ եկեղեցիէն, որովհետեւ Սփիւտքի տագնապը, առաւելաբար Հայ եկեղեցոյ տագնապն է, որովհետեւ Հայ եկեղեցին, իր բարձրագոյն հեղինակութեան նամբով, կը հաստատէ, որ Սփիւտքէն ներս մեր



կեանքը վերակենսաւորելու հարց մը գոյութիւն ունի», շեշտեց Սրբազան Հայրը: Ան աւելցուց, որ իբրեւ հոգեւորական ու աշխարհական սպասաւորներ, մենք պէտք է գործի լծուինք, որպէսզի մեր համայնական կեանքէն ներս իսկապէս նոր դարձակէտ մը ստեղծուի:

Այնուհետեւ իր խօսքը արտասանեց Կրօնական Ժողովի Ատենապետ՝ Արժ. Տ. Սարգիս Ա. Քհնյ. Սարգիսեան: Ան ըսաւ, որ սոյն օրհնաբեր այցելութիւնը առիթ է Լիբանանի Հայոց Թեմին հետ վերանորոգելու հոգեկան այն կապը, որ զարգացած էր իբրեւ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ այս Թեմէն ներս իր ունեցած երկար տարիներու ծառայութեան ընթացքին, եւ աւելիով ծաւալած, երբ Վեհափառ Հայրապետը, իբրեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռին Գահակալը, այնքա՛ն ջերմ սէր եւ գուրգուրանք ցոյց տուաւ Թեմին:

Իր խօսքին մէջ, Արժ. Տէր Հայրը յիշեց, որ 2003 թուականէն սկսեալ, Նորին Ս. Օծովիւնը, մեր ազգի կեանքին հետ աղերս ունեցող կարեւոր դէպքեր, ամեակներ կամ երախտաւոր յիշատակներ ոգեկոչելով, տարբեր անուանումներով գրոշմեց իւրաքանչիւր տարին, որպէսզի մեր ժողովուրդի զաւակները նոր աշխատանքով, գալիք օրերու ճամբան պատրաստեն: Խօսքը եզրափակելով, ան ըսաւ. «Մեր ուշադրութիւնը մեր եկեղեցիներու գործունէութեան վրայ կեդրոնացնելը հրամայական անհրաժեշտութիւն է բոլորիս համար: Բոլորս ալ կ'ուզենք, որ աւելի աշխոյժ ու կենդանի ըլլան մեր եկեղեցիները, աւելի նուիրեալ ու պատրաստակամ ըլլան մեր հոգեւորականները, աւելի ազդու ըլլայ մեր ծառայութիւնը եւ մեր աշխատանքով, առաւել եւս խորանայ մեր ժողովուրդին հաւատքը, մեր կեանքէն ներս պահպանուին մեր հոգեւոր ու բարեպաշտական բարեքերը, մեր ազգային սովորութիւններն ու ասանդութիւնները, յարատեւէ մեր նախնիներուն երկիւղածութեան շունչը եւ այդպիսով նաեւ ապահովուի մեր նոր սերունդին կեանքը»:



Ապա, Թաղականութեանց անունով խօսք արտասանեց Ս. Նշան Մայր եկեղեցւոյ Թաղականութեան անդամ Սմբատ Սրկ. Ղազէլեանը: Ան իր խօսքին մէջ ըսաւ, որ 2022 տարին Նորին Ս. Օծութիւնը կոչած էր «Սփիւտֆի Տարի»: Սակայն, նկատի ունենալով, որ Սփիւտքը, որուն ներկայացուցիչներն ենք բոլորս, շատ ընդարձակ թեմա է, անոր պէտքերը՝ բազմապիսի ու անոր առջեւ ծառայած խնդիրները՝ հսկայական, տարուան մը քննարկումները անբաւարար համարելով, «Սփիւտֆի Տարի»ն տարածուեցաւ նաեւ ներկայ 2023 թուականին վրայ: «Հայ Սփիւտը հայկական նկարագրով պահելու գործը կը կարօտի լուրջ ակադեմական մանրակրկիտ ուսումնասիրութեան, որ իր մէջ պէտք է ներառէ Հայ մարդուն հոգեբանութիւնը, Հայեցի դաստիարակութեան բաղադրիչները, ասանդականը նորովի ներկայացնելու եւ նորը ասանդականին յարմարցնելու ձեւերու որոնումը, կրօնքին ձգած ազդեցութիւնը Հայ մարդու հայրենասիրութեան եւ հողին կառչածութեան վրայ»: Հետեւաբար, «այսօր խիստ կենսական է համախմբովի եկեղեցւոյ շուրջ եւ անոր յարակից կառոյցներով նոր ուժականութիւն հաղորդելու յուսալիւմի մատնուած հանրութեան», եզրափակեց ան իր խօսքը:

Հուսկ, Արամ Ա. Կաթողիկոս փոխանցելով իր Հայրական Պատգամը, դիտել տուաւ, որ իրեն համար մեր ժողովուրդի բոլոր զաւակները սիրելի են՝ անկախ անոնց պաշտօնէն ու հանգամանքէն ու նշեց, որ Հոգեւորականը, ի՛նչ պատասխանատուութիւն ալ ունենայ եւ ի՛նչ աստիճանի վրայ ալ գտնուի, իր կեանքի ճամբան եւ նպատակը ծառայութիւնն է. ծառայութիւն՝ Աստուծոյ, եկեղեցւոյ եւ ժողովուրդին: Ան ըսաւ, թէ ծառայութեան ձեւերը կրնան փոխուիլ, սակայն կարեւոր եւ էական կը մնայ որակը:

Այս առիթով, ան իր ուրախութիւնը յայտնեց Լիբանանի Թեմի եկեղեցիներու պատասխանատուներուն հետ հանդիպելու կարելիութեան համար,

միաժամանակ չի շեղում, որ այս առիթը կը վերաբերի լիբանանահայ գաղութին վերակազմակերպումը եւ վերակենսաւորումը ընթացքի մէջ դնելու անհրաժեշտութեան: Ան ըսաւ, որ Սփիւռքը բաղկացնող մեր բոլոր գաղութները հրամայական անհրաժեշտութիւնը ունին վերանորոգման, վերակենսաւորման, վերակազմակերպման, վերակառուցման, որովհետեւ մենք կ'ապրինք արագ կերպով փոփոխութիւն ապրող աշխարհի մը մէջ եւ ասոր դիմաց մենք կոշտած ենք համապատասխան կերպով մեր կեանքը վերարժեւորման եւ վերաքննութեան ենթարկելու:

Ան յիշեց, որ Ազգ. Սահմանադրութեան բոլոր պայմանները լրացնող լիբանանի եւ Սուրիոյ մէջ մեր ծխային կազմակերպուածութիւնը միշտ նախանձելի եղած է: Յատկապէս Յեղասպանութենէն ետք, երբ անապատէն ճողոպրած մեր ժողովուրդի զաւակները հասած են լիբանան կամ Սուրիա, իրենց առաջին գործը եղած է եկեղեցի կառուցել: «Մեր եկեղեցին, մեր կեանքին ներս գործող պարզ կազմակերպութիւն մը կամ բոյր կազմակերպութիւն մը չէ, այլ իր թեմական կառոյցով, գաղութին կորիզն է, անոր առանցքն ու հիմքը կը կազմէ»: Անդրադառնալով անցեալին գոյութիւն ունեցած ծուխի հասկացողութեան եւ ներկայ պայմաններուն, Նորին Սրբութիւնը բացատրեց, որ ժողովուրդային տեղաշարժի պատճառով, նախկին հայրենակցական եւ տեղական պայմաններու դրուածքով կազմակերպուած ծուխի հասկացողութիւնը այլեւս գոյութիւն չունի եւ հետեւաբար, եկեղեցին եւ մեր կեանքին մէջ գործող բոլոր կազմակերպութիւնները պէտք է փորձեն իրականութեան դիմաց համապատասխան ռազմավարութիւն ճշդել, որովհետեւ կարելի չէ ներկային մէջ անցեալով ապրիլ: «Այսօր մենք կոչուած ենք մեր ծուխերը կազմակերպելու, ներկայ իրականութեան ու պայմաններուն լոյսին տակ: Եկեղեցին պէտք է պայծառ ըլլայ իր կեանքով, իր վկայութեամբ, իր ծառայութեամբ եւ իր ժողովուրդով», ընդգծեց Վեհափառ Հայրապետը:

Ծուխերը աշխուժացնելու եւ եկեղեցւոյ կեանքը պայծառացնելու ու կազմակերպելու նպատակով, կարգ մը գործնական թելադրանքներ կատարելէ ետք, Հայոց Հայրապետը Քահանայ Հայրերուն թելադրեց, իբրեւ Հոգեւոր Հովիւներ, յաճախակի այցելութիւններու ճամբով եւ այլապէս, մեր ժողովուրդին հետ իրենց ունեցած յարաբերութիւնը առաւել եւս սերտացնել, եկեղեցական արարողութիւններուն կանոնաւոր ընթացքը պահպանել, դպրաց դասերու վերակազմակերպման ճիգին հետեւիլ եւ քարոզախօսութեանց նկատմամբ ըլլալ բծախնդիր, որպէսզի ժողովուրդը կամովին իր եկեղեցւոյ շուրջ համախմբուելով՝ եկեղեցւոյ համայնական կեանքը աշխուժանայ ու առաւել եւս զարգանայ:

**ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՆ,
ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ, ԿԱՌՈՅՑՆԵՐՈՒ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ,
ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԵՒ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ
ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ՀԵՏ**

Ձորեքշաբթի, 25 Հոկտեմբեր 2023-ի երեկոյեան տեղի ունեցաւ Երրորդ հանդիպում-գրոյցը: Բարի գալստեան բացման իր խօսքով, Առաջնորդ Սրբազան Հայրը դիտել տուաւ, որ այսօր Ազգ. Առաջնորդարանի յարկին տակ հաւաքուած լիբանանահայ կառույցներուն ու մարմիններուն ներկայացուցիչներն ու պատասխանատուները կը կիսեն լիբանանեան կեանքի տեսակաւոր տագնապները եւ իրենց աշխատանքով կ'ապահովեն մեր համայնական կեանքին որակն ու աշխուժութիւնը, ինչպէս նաեւ քաղաքական դերակատարութեամբ լիբանանեան ընկերութեան մօտ կը պաշտպանեն Հայ ժողովուրդին շահերն ու համայնքային իրաւունքները: Ան վստահեցուց, որ ծառայութեան դաշտին մէջ մեզի եզոզ այս կառույցներն ու միաւորները, լիովին կը բաժնեն Սփիւռքի նկատմամբ Վեհափառ Հօր ունեցած մտահոգութիւնները եւ կը ցանկան նաեւ իրենց հնարաւորութիւններն ու պարտականութիւնները վերատեսութեան ենթարկելով, նոր տեսիլք գտնել, որպէսզի մեզի վիճակուած տագնապալի կեանքի ներկայ պայմաններուն մէջ, աւելի կենսունակ աշխատանքով, նոր պայծառութիւն բերեն իրենց գործին ու մեր համայնական կեանքին:



Այնուհետեւ, խօսք արտասանեց Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (Հ.Յ.Դ.) Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի եւ Հայկական Երեսփոխանական Պլոքի ներկայացուցիչ՝ Յակոբ Բագրատունի: Ան, առաջին հերթին, ողջունեց Վեհափառ Հայրապետին լիբանանահայութեան հետ ու անոր կողքին ըլլալը՝ թէ՛ անցեալին որպէս առաջնորդը ու թէ՛ ներկայիս որպէս Կիլիկեան Ս.

Աթոռի Գահակալ: Ան եղած է Լիբանանի մէջ իբրեւ միտք ու բաբախող սիրտ՝ մնայուն կերպով հետաքրքրուելով գաղութի հարցերով ու տագնապներով: «Միշտ մնացիք մեզի հետ՝ Լիբանանը նկատելով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կարեւորագոյն սիւներէն մէկը, որուն ուժն ու կարողականութիւնը դրուած են ի սպաս Անթիլիասի ուժեղացման եւ բարգաւաճման, ի խնդիր համայն Հայութեան ծառայութեան: Մեզի հետ եղաք խաղաղ օրերուն, բայց խաղաղ օրերու զօրակցութիւնը ընդհանրապէս դիւրին կը նկատուի. դժուարը միւսն է՝ տագնապալի օրերունը: Անցնող տարիներուն անվիճելի էր ձեր ներկայութիւնը մեզի հետ ամէնուրեք. պայթում, համաճարակ, տնտեսական-եղեմտական տագնապ, քաղաքական անկայունութիւն, ընկերային տագնապ: Դուք ներկայ եղաք ո՛չ միայն քարոզելով կամ պատգամելով, այլ իրական ու գլխազիր գործով, իբրեւ մղիչ ուժ, կազմակերպող, պահանջող, պատերազմի դաշտ նետուող մարտիկի նման, հասնելով ամէն ճակատ եւ գործնապէս մասնակցելով գոյատեւման պայքարին», ընդգծեց Բագրատունի:



Ան հարց տուաւ, թէ ինչպէ՞ս պէտք է վերակազմակերպուիլ, առաջքը առնել գաղթին, մարդուժի արտահոսքին, տիրական անտարբերութեան, ազգայինէն հեռանալու եւ համամարդկային էակ դառնալու մտածումին: Առ այդ, Յակոբ Բագրատունի շեշտեց, որ պէտք է ըլլալ իրապաշտ, տեսնել նորը եւ աւելի լաւը կառուցել:

Իր խօսքը եզրափակելով, Յակոբ Բագրատունի ըսաւ. «Կը յուսանք, Վեհափառ Տէր, որ Ձեր հովուապետական այցելութիւնը նոր մղում կու տայ մեր գաղութի վերակազմակերպման: Վստահ եմ, որ ներկաներէն իւրաքանչիւրը

նոր մտածումով, վերանորոգուած հաւատքով, յաւելեալ վճռակամութեամբ, աշխատելու նոր պատրաստակամութեամբ պիտի մեկնի՝ միշտ յուսալով, որ Ձեր ներկայութիւնն ու հովանին անպակաս կ'ըլլայ լիբանանահայութեան կեանքէն»:

Ապա խօսք առաւ Վեհափառ Հայրապետը եւ գոհունակութիւն յայտնեց, որ լիբանանահայութեան ղեկավարութիւնը կը գտնուի Ազգ. Առաջնորդարանի յարկին տակ՝ այդպիսով հաստատելով, որ մեր գաղութէն ներս հետըզհետէ առաւել եւս կ'ամրանայ միասնական ոգին, առանց որուն որեւէ նախաձեռնութիւն կամ ծրագիր չի կրնար իր յաջող վախճանին հասնիլ: Ան մաղթեց, որ միասնականութիւնը, մեր ազգի կեանքէն ներս դառնայ մնայուն ընթացք, որակ, ուղղութիւն եւ նպատակ:

Հայոց Հայրապետը նկատել տուաւ, որ անցնող երկու տարիներուն Սփիւռքի վերականգնումը լուսարձակի տակ բերելու իր փորձը տեսական եւ ակադեմական մօտեցում չէր, այլ արդիւնք՝ Սփիւռքը լաւապէս ճանչցած ըլլալուն ու նման արագընթաց աշխարհի մը մէջ հին ձեւերով Սփիւռքի գոյատեւումը ապահովել շկարենալու համոզմունքի: «Համաշխարհայնացումը մշակոյթ է, մտածելակերպ է, կենցաղակերպ է, գործելակերպ է, որուն մաս կը կազմենք նաեւ մենք եւ այսօր այս բոլորին ազդեցութեան տակ կ'ապրի Սփիւռքը»:

Շարունակելով իր խօսքը, Նորին Ս. Օծութիւնը դիտել տուաւ, որ գաղութներու միջեւ հասարակաց մտահոգութիւններ կան, սակայն կան նաեւ հիմնական տարբերութիւններ: Գաղութները ներքին տարբեր դրուածք, մտայնութիւն ու միջավայր ունին եւ հետեւաբար, այս տարբերութիւնները կարեւորութեամբ պէտք է նկատի առնուին եւ հարցերը դիտուին իւրաքանչիւր գաղութի շրջագիծէն ներս: Հայոց Հովուապետը ըսաւ, որ չենք կրնար լիբանանի գաղութին վերակազմակերպման մասին խօսիլ առանց նկատի առնելու անցեալը, որովհետեւ գաղութը իր ներքին կազմաւորման հոլովոյթը ունեցած է: 1975-էն սկսեալ գաղութը ենթարկուեցաւ յաջորդական տազնապներու, որոնք կը շարունակուին մինչեւ այսօր, դիտել տուաւ Վեհափառ Հայրապետը:

Որպէս առաջնահերթութիւն, ան ներկայացուց վեց մարզեր, որոնց մէջ վերակազմակերպումը, վերաքննութիւնը ու վերարժեւորումը հրամայական են.-

1) Կրթական ոլորտ: Նորին Ս. Օծութիւնը հարց տուաւ, թէ ինչո՞ւ մեր վարժարաններու աշակերտութեան թիւը չի համապատասխաններ մեր գաղութի թիւին եւ ինչո՞ւ Հայ աշակերտներուն կարեւոր մէկ մասը օտար վարժարան կը յաճախէ: Հարկ է կրթական պատասխանատուները քննեն այս օրակարգը եւ ճիշդ ձեւով փոխադրանաշունչ կատարեն: Մեր մօտեցումը զգացական կամ տեսական պէտք չէ ըլլայ, այլ կրթական մարմիններն ու պա-

տասխանատուները պէտք է բազմազան «ինչո՞ւ»ներու ճշգրիտ պատասխանը գտնեն:

2) Քաղաքական բնագաւառ: Նորին Սրբութիւնը շեշտեց, որ Հայկական Երեսփոխանական Պլոքը պէտք է վերականգնի եւ մէկ համախմբում ունենայ, որպէսզի մեր համայնքին նաեւ քաղաքական իրաւունքները պաշտպանուին: Քաղաքական մարզը խիստ կարեւոր ու հրատապ օրակարգ համարելով, ան հարց տուաւ, թէ ինչո՞ւ քաղաքական կեանքէն ներս նահանջ պիտի արձանագրենք. ինչո՞ւ մեր համայնքը ներկայացնող երեսփոխանները եւ նախարարները արժանաւոր, որակաւոր ու փորձառու անհատներ պիտի չըլլան:

3) Հոգեւոր կեանք: Արամ Ա. Կաթողիկոս ընդգծեց, որ պէտք է վերաշխուժացնել լիբանանահայ համայնքին հոգեւոր կեանքը: Եկեղեցւոյ վերանորոգումը, վերակազմակերպումը հոգեւորականէն կը սկսի: Պէտք չէ սպասել, որ ժողովուրդը եկեղեցի գայ, այլ եկեղեցին, հոգեւորականին ճամբով, պէտք է ժողովուրդին տանիլ: Ուստի, հոգեւորականներու պատրաստութիւնը էական է Լիբանանի մէջ եւ նաեւ բոլոր գաղութներէն ներս: Ան յիշեցուց, թէ Հայութեան համար եկեղեցին միայն աղօթքի վայր չէ եղած, այլեւ ազգային ծառայութիւն ու առաքելութիւն է:

4) Կազմակերպչական վիճակ: Նորին Ս. Օծութիւնը ըսաւ, որ մեր կառոյցները այլեւս չեն կրնար աւանդական, հին մտայնութեամբ, հին օրակարգերով եւ կանոնագրութիւններով շարժիլ, որովհետեւ ընկերութեան պայմանները փոխուած են: Ան շեշտեց, որ անպայմանօրէն պէտք է անցեալի փորձառութենէն օգտուիլ, սակայն միշտ գիտակցելով, թէ անցեալը չենք կրնար ապրիլ ներկային մէջ: Գաղութի մը վերակազմակերպումը կը սկսի իր կառոյցներէն եւ հսկայ ընելիք կայ այս ուղղութեամբ, ըսաւ Վեհափառ Հայրապետը:

5) Երիտասարդութիւն: Ինչպէս իր պատգամներուն մէջ յաճախ կը շեշտէ ու յիշեցնէ, այս անգամ եւս ան նշեց, որ երիտասարդութիւնը մեր ապագան չէ միայն, այլեւ մեր ներկան իսկ է: Ան իր խոր մտահոգութիւնը արտայայտելով՝ հարց տուաւ ներկաներուն, թէ ինչո՞ւ երիտասարդութեան կարեւոր մէկ մասը մեր ազգային ու եկեղեցական կեանքէն հեռու է: Երիտասարդներուն հետ պէտք է երկխօսութիւն ստեղծել եւ զիրենք ներառել մեր կեանքի ու աշխատանքի բնագաւառներէն ներս, այլապէս, ներկայ աշխարհի ունեցած գրաւիչ երեւոյթներէն տարուելով, անոնք միանգամընդմիշտ կը հեռանան մեզմէ:

6) Մարդուժ: Վեհափառ Հայրապետը նկատել տուաւ, որ մարդուժի պակաս կայ ամէն տեղ եւ մեր կեանքի բոլոր բնագաւառներէն ներս եւ ասիկա համասփիւռքեան երեւոյթ է: Այս առիթով, ան յայտնեց, թէ յառաջիկայ տարի, Հայրապետական հռչակագիրով, պիտի հռչակէ մարդուժի պատրաստութեան տարի:

Ուստի, Արամ Ա. Կաթողիկոս թելադրեց, որ լրջօրէն մտածուի մարդուժի պատրաստութեան անհրաժեշտութեան մասին եւ աւելցուց, որ մարդուժի պատրաստութեան հիմնական յենարաններն են ընտանիքը, դպրոցը, եկեղեցին, մեր կազմակերպութիւնները, հայագիտական դասընթացքներու հիմնարկները եւ մանկավարժական կեդրոններն են:

Եզրափակելով իր խօսքը, Վեհափառ Հայրապետը վստահեցուց, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը պատրաստ է ամէն գնով եւ բոլոր հնարաւորութիւններով սատար հանդիսանալու ու նեցուկ կանգնելու մեր գաղութներու վերակազմակերպան աշխատանքներուն:

Հաւաքները փակուեցան Վեհափառ Հայրապետին Օրհնութեան աղօթքով:



ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԸ ՇՆՈՐՀԱԴՈՐԷ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀ՝
ՍԱՄՈՒԷԼ ՇԱՀՐԱՄԱՆԵԱՆԸ**

Երկուշաբթի, 11 Սեպտեմբեր 2023-ին, Արամ Ա. Կաթողիկոս շնորհալորական նամակ մը յղեց Արցախի Հանրապետության նորընտիր Նախագահ՝ Վսեմաշուբ Սամուել Շահրամանեանին:

Ստորեւ կը ներկայացնենք նամակը.-

Վսեմաշուբ

Տիար Սամուել Շահրամանեան

Նորընտիր Նախագահ

Արցախի Հանրապետության

Ստեփանակերտ

Սիրելի՛ Պրն. Նախագահ,

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն Հայրապետական Օրհնութեամբ եւ ջերմ սիրով կ'ողջունենք Ձեր ընտրութիւնը, որպէս Նախագահ Արցախի Հանրապետության: Այս առիթով ջերմօրէն կը շնորհաւորենք Ձեզ եւ կը մաղթենք, որ Արցախի պատմութեան ճգնաժամային հանգրուանին՝ Ձեր ստանձնած պատասխանատուութիւնը վերանորոգ հաւատքով ու նուիրումով կարենաք լիովին արդարացնել՝ ի ինդիր Արցախի մեր սիրելի ժողովուրդին ինքնորոշման արդար իրաւունքին:

Արդարեւ, Արցախի Հայութեան կեանքի մշուշապատ այս օրերուն, Արցախի ապաշրջափակումը եւ անոր իրաւունքներու տիրացման հետապնդումը հարկ է որ դառնայ առաջնահերթ նպատակը իւրաքանչիւր Հայու եւ համայն Հայութեան: Մենք անձնապէս, Մեր բոլոր կարելիութիւնները ի գործ դրած ենք ու պիտի շարունակենք դնել միջազգային մակարդակով հետապնդելու Արցախի ժողովուրդին ինքնորոշման իրաւունքը: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իր Թեմերով միշտ եղած է Արցախի պետութեան, անոր քաջարի բանակին ու հերոսական ժողովուրդի

կողքին: Կը վստահեցնենք Ձեզ, որ նոյն ոգիով պիտի շարունակենք մեր Ս. Աթոռին զօրակցութիւնը Արցախի Հանրապետութեան:

Անգամ մը եւս, անձնապէս եւ յանուն մեր Ս. Աթոռի Միաբանութեան, Ժողովականութեան, Թեմերուն եւ մեր Ժողովուրդին, ջերմօրէն կը շնորհաւորենք Ձեր ընտրութիւնը: Թող Ամենաբարին Աստուած Իր հովանին անպակաս ընէ Արցախի Հանրապետութեան վրայէն, եւ Արցախի Հայութեան շնորհէ խաղաղ ու բարօր տարիներ:

Հայրապետական օրհնութեամբ՝

Աղօթարար՝

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**



**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՑԱԲԱԿՑԱԳԻՐ ՅՂԵՑ
ՍՈՒՐԻՈՅ ՆԱԽԱԳԱՅԻՆ՝
ՀՈՄՍԻ ՄԷՋ ԻՆԿԱՑ ՉՈՐՅԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ**

Ուրբաթ, 6 Հոկտեմբեր 2023-ին, Արամ Ա. Կաթողիկոս ցաւակցագիր մը յղեց Սուրիոյ Նախագահ՝ Տոքթ. Պաշշար Ալ-Ասատին՝ դատապարտելով Հոմսի սպայից վարժարանին վրայ գործուած ահաբեկչական յարձակումը եւ յայտնելով իր խորագգաց ցաւակցութիւնները Սուրիոյ պետութեան ու Ժողովուրդին:

Նորին Սրբութիւնը նամակին մէջ իր զօրակցութիւնը ու կարեկցանքը յայտնեց զոհերու ընտանիքներուն եւ աղօթք բարձրացուց առ Աստուած սուրիական հայրենիքին անսասանութեան ու հզօրութեան համար եւ շուտափոյթ ապաքինում մաղթեց բոլոր վիրաւորներուն:

ՀԱՅ ԴԱՏ

**ՍԵՃԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ
ԱՐՑԱԽԻ ԺՈՂՈՎՈՐԴԻ ԿՈՂՔԻՆ**

Արցախի Հանրապետության Անկախության 32-րդ ամեակին առիթով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս իր Հայրապետական Պատգամը ուղղեց ողջ Հայության, շեշտելով Արցախի Հանրապետության անյապաղ ապաշրջափակումը եւ անոր ինքնորոշման իրաւունքին ամրապնդումը: Նորին Սրբութիւնը իր պատգամին մէջ յատկապէս ըսաւ. «Անկախութիւնը Աստուածատու իրաւունք է: Անկախութիւնը նաեւ միջազգային օրէնքի հիմնական սկզբունքներէն մէկն է: Արդ, ո՛չ մէկ ազգ իրաւունք ունի բռնաբարելու ուրիշ ազգին անկախութիւնը: 32 տարիներ առաջ, Արցախի ժողովուրդը իր անկախութիւնը հռչակած է եւ բազմիցս վերահաստատած: Հետեւաբար, սիրելի՛ Արցախ, մնացիր ամուր՝ քո ինքնորոշման արդար իրաւունքը հարցականի տակ առնող ներկայ պայմաններուն մէջ: Մնացիր կառչած հաւաքական կեցուածքիդ: Դուն առանձին չես, ողջ Հայութիւնը քեզի՛ հետ է»:

Առ այդ, Անկախության տօնին առիթով, Կիրակի, 3 Սեպտեմբեր 2023-ին, նախագահութեամբ Վեհափառ Հայրապետին, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին եւ Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքի



համանուն մատրան մէջ մատուցուած Ս. Է. Անմահ Պատարագի ակարտին, հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Արցախի Անկախութեան ամրապնդման ի խնդիր իրենց անձը ընծայաբերած մեր քաջարի հայորդիներու հոգիներուն համար: Մայրավանքի Մայր Տաճարին մէջ պատարագեց ու քարոզեց Կաթողիկոսարանի Տեղեկատուական Բաժանմունքի Վարիչ՝ Հոգշ. Տ. Յովակիմ Վրդ. Բանճարճեան: Հոգշ. Հայր Սուրբը իր քարոզին մէջ յիշեց շրջափակումի ենթարկուած Արցախը եւ այնտեղ պայքարող ու իրենց արժանապատուութեամբ ապրող մեր ժողովուրդի 120,000 հայորդիները: Անդրադառնալով մեր ազգը յուզող ներկայ ճակատագրական օրերուն՝ ան ըսաւ. «Այսօր մեր բոլորին սիրելի Արցախի Հայրենիքը դարձեալ մահու-կենաց պայքար կը մղէ: Ազգովին կոչուած ենք ամէն առումով նեցուկ կանգնելու Արցախահայութեան եւ Արցախի ինքնորոշման իրաւունքին: Մեր պատմութեան գիտենք, որ երբ միակամ ու մէկ բռունցք եղած ենք, յաղթահարած ենք մեր ազգին դէմ ցցուած բոլոր մարտահրաւերներն ու տագնապները: Հետեւաբար, բոլորս միասնաբար գործնական քայլերու պէտք է դիմենք, որպէսզի կարողանանք պաշտպանել Արցախի մեր հայրենակիցներուն արդար իրաւունքները»:

Յայտնենք, որ Պուրճ Համուտի մէջ կազմակերպուած Արցախի ապաշրջափակումը պահանջող ստորագրահաւաքին մասնակցեցան նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբան հայրերն ու Դպրեվանքի սարկաւազները: Իսկ աշխարհասփիւռ մեր թեմերուն մէջ ծառայող Միաբան հայրեր տեսաերիզներու միջոցաւ իրենց զօրակցական խօսքը ուղղեցին Արցախի ժողովուրդին: Նոյն օրը երեկոյեան, խումբ մը Միաբան հայրեր մասնակցեցան Լիբանանի Հայկական երեք համայնքներու ու կուսակցութիւններու կողմէ կազմակերպուած ժողովրդային զօրակցական հաւաքին, ուր կատարեցին Արցախի Հանրապետութեան Դրօշի Օրհնութիւն:



**ՀՈԳԵՒՈՐ ՊԵՏԵՐԸ ԵՒ ԶԱՂԱԶԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ
ԿՈՉ Կ՛ՈՒՂՂԵՆ ԱՐՑԱԽԻ ՉՕՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԾԱԲԱԼԵԼՈՒ**

Արամ Ա. Կաթողիկոսի հրաւերով եւ մասնակցութեամբ Հոգեւոր պետերու եւ երեք Հայ Քաղաքական կուսակցութիւններու բարձրագոյն մարմիններու

ներկայացուցիչներուն, Զորեքշաբթի, 6 Սեպտեմբեր 2023-ին, Անթիլիասի Մայրավանքին մէջ գումարուեցաւ խորհրդակցական յատուկ նիստ մը, միակ օրակարգ ունենալով՝ Արցախի ժողովուրդին զօրակցելու հրամայականը:

Նիստին կը մասնակցէին Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ Հոգեւոր պետ՝ Ամեն. եւ Գեր. Տ.Տ. Ռաֆայէլ Պետրոս ԻԱ. Հոգեւոր Տէրը, Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական եկեղեցիներու Միութեան Նախագահ՝ Վեր. Փօլ Հայտոսթեան, Հայ Քաղաքական կուսակցութիւններու բարձրագոյն մարմիններու ներկայացուցիչներ՝ Տիար Յակոբ Տէր Խաչատուրեան (Հ.Յ.Դ.), Տոքթ. Աւետիս Տազէսեան (Ռ.Ա.Կ.) եւ Տոքթ. Վազգէն Համալեան (Ս.Դ.Հ.Կ.), Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ. Կեդր. Վարչութեան Քաղաքական Ժողովի համաատենապետներ՝ Տեարք Ստեփան Տէր Պետրոսեան եւ Գրիգոր Մահսերէճեան, եւ Կաթողիկոսութեան համահայկական խորհրդաժողովները համակարգող՝ Տիար Շահան Գանտահարեան:



Ժողովը կայացաւ մեր Հայրենիքին համար ծանրագոյն պայմաններուն մէջ: Ազրպէյճանի յարձակողապաշտ ուղղափառ քաղաքական վերջին օրերու դրսեւորումները կ'ընդգծեն ամբողջական միասնականութեամբ դիմակայելու մեր հաւաքական գոյութեան սպառնացող վտանգները:

Հոգեւոր պետերն ու Քաղաքական կուսակցութիւններու ներկայացուցիչները նախ զեկուցեցին այս հրատապ օրակարգին ուղղութեամբ իրենց տարած աշխատանքներուն մասին:

Զեկուցումներէն ետք, կայացած խորհրդակցութիւններու եւ քննարկումներու ընթացքին ժողովը հաստատեց.-

Ա) Հարկ է, որ մեր բոլոր կազմակերպություններն ու կառույցները շարունակեն անվերապահօրէն զօրավիգ կանգնիլ Արցախին եւ Արցախի Հայութեան պատմական իրաւունքներու արդար պայքարին:

Բ) Կոչ կ'ուղղենք Արցախի քաղաքական բոլոր ոյժերուն՝ համախմբուելու էական նպատակներու շուրջ եւ միասնական ոգիով անգամ մը եւս ապացուցելու Արցախահայութեան բռնցքուելու վճռականութիւնը՝ դիմադրելու թշնամիին եւ իր արդար իրաւունքներու ձեռքբերման:

Գ) Կոչ կ'ուղղենք Հայաստանի Հանրապետութեան Արցախի բանակցութիւններուն կառչած մնալու ինքնորոշման իրաւունքին:

Դ) Իրազեկել հանրային կարծիքը, որ Ազրպէյճան Արցախը պաշարելով դիմած է ցեղասպանական քաղաքականութեան, որուն նպատակն է Արցախի հայաթափումը:

Ե) Դիմել միջազգային բոլոր ատեաններուն եւ միջազգային ընտանիքին, որպէսզի աներկբայօրէն դատապարտեն Ազրպէյճանի նկրտումները եւ ամէն միջոց ի գործ դնեն անյետաձգելիօրէն ապահովելու համար Արցախի ապաշրջափակումը: Հայաստանի հետ Արցախի ազատ տեղաշարժի ապահովումը երաշխաւորող կողմը ունի յատուկ պատասխանատուութիւն եւ պարտաւորութիւն, զորս ստանձնած է 2020 Նոյեմբեր 9-ի եռակողմ յայտարարութեամբ:

Զ) Աշխատանք տանիլ Արցախեան հակամարտութեան լուծման գործընթացին առնչուող բոլոր պետութիւններուն մօտ, որպէսզի պարտադրեն Ազրպէյճանին յարգելու մինչ այդ կայացած համաձայնութիւնները եւ անմիջապէս բանալու Բերձորի (Լաչին) միջանցքը:

Է) Անյապաղ օգնութեան փութալ՝ մարդասիրական աղէտի առջեւ գտնուող Արցախի ժողովուրդին, լծուելով համահայկական տարողութեամբ աշխատանքներու:

Համայն Հայութիւնը այսօր ունի գլխաւոր առաջնահերթութիւն.- համախմբուիլ եւ համակարգուած աշխատանքներ իրականացնել Արցախի շրջափակումը վերացնելու համար:

Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիասնական համակարգի վերականգնումով, մեր Հոգեւոր, Ազգային եւ Քաղաքական բոլոր կառույցներն ու կազմակերպութիւնները պարտին հրատապօրէն աշխատիլ Արցախի ինքնորոշման իրաւունքին մեկնակէտով՝ Արցախի ժողովուրդին բոլոր իրաւունքներուն եւ անվտանգութեան ապահովման նպատակին ընդառաջ:

Հոգեւոր Պետերը եւ Քաղաքական կուսակցութիւններու ներկայացուցիչները կոչ կ'ուղղեն, եռամիասնական համակարգի սկզբունքէն մեկնած, բոլոր երկիրներուն մէջ, ուր կազմակերպուած համայնքներ գոյութիւն ունին, աշխատանք տանիլ հարկ եղած բոլոր ուղղութիւններով՝ Արցախի Հայութեան զօրակցելու եւ Արցախի ապաշրջափակումը իրականացնելու նպատակով:

ԱՍԻՈՅ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԿՈՉ Կ՛ՈՒՂԴԵ ԱՐՑԱԽԻ ԱՆՅԱՊԱՂ ԱՊԱՇՐՋԱՓԱԿՍԱՆ

Ասիոյ Եկեղեցիներու Խորհուրդը (Ա.Ե.Խ.) վերջերս պաշտօնական յայտարարութիւն մը կատարելով՝ կոչ ուղղեց կարելի փութով Արցախի ապաշրջափակման՝ զայն նկատելով մարդկային մեծ աղէտ, որ անընդունելի է թէ՛ բարոյական, թէ՛ օրինական եւ թէ՛ միջազգային օրէնքի իմաստով: Հետեւելով Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի (Ե.Հ.Խ.), Եւրոպայի Եկեղեցիներու Խորհուրդի (Ե.Ե.Խ.) եւ Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի (Մ.Ա.Ե.Խ.) կողմէ կատարուած յայտարարութիւններուն, Ասիոյ Եկեղեցիներու Խորհուրդը եւս շեշտեց Արցախի ինքնորոշման իրաւունքին հրամայականը:

Յայտնենք, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Իրանի երեք Թեմերը անդամ են Ասիոյ Եկեղեցիներու Խորհուրդին, որ կը ներառէ Ասիոյ զանազան Եկեղեցիներու անդամակցութիւնը: Թեհրանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Սեպուհ Արք. Սարգիսեան անդամ է Խորհուրդի Գործադիր Վարչութեան:

Արամ Ա. Կաթողիկոս մօտէն ծանօթ է Խորհուրդի Ընդհ. Քարտուղար՝ Դոկտ. Մաթիոս Ճորճ Զունաքարային եւ մնայուն կապի մէջ է անոր հետ:



ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ԵՒ ԱՐՑԱԽԻ ՉՕՐԱԿՑԱԿԱՆ ԱՂՕԹՔ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԵՋ

Նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, Հինգշաբթի, 21 Սեպտեմբեր 2023-ին, տեղի ունեցաւ Հանրապետական Մաղթանք՝ Հայաստանի վերանկախացման 32-րդ տարեդարձին առիթով եւ Արցախի զօրակցական աղօթք: Արարողութեան աւարտին Նորին Սրբութիւնը օրհնեց Հայաստանի ու Արցախի դրօշները, ապա յղեց իր Հայրապետական Պատգամը (տես էջ 521-522):

Արամ Ա. Կաթողիկոս պատգամը սկսաւ իր խոր ցաւը յայտնելով մեր ազգի ներկայ պայմաններուն ընդառաջ եւ ըսաւ, որ «Հայաստանի Հանրապե-



տուրեան անկախութեան 32-րդ տարեդարձը կ'ողջունենք տազնապալից պայմաններու մէջ: Երկար ամիսներու սովէ ու տառապանքէ ետք, այսօր Արցախը կը գտնուի մահուան դէմ յանդիման»:

Ապա, ան յայտնեց, որ հակառակ մեր կատարած զիջումներուն, վարած բանակցութիւններուն, կատարած յայտարարութիւններուն, հրապարակած դատապարտութիւններուն, միջազգային համայնքին եղած դիմումներուն, Ազրպէյճանը հետզհետէ ծաւալեց իր սադրանքները եւ շարունակեց Արցախի դէմ Յեղասպանութիւնը՝ անգամ մը եւս նեցուկը ունենալով Թուրքիոյ եւ Իսրայէլի: Հայոց Հայրապետը աւելցուց, որ միջազգային համայնքը լոկ կոչեր հրապարակողի եւ զօրակցութիւն յայտնողի դերին մէջ մնաց: «Փաստօրէն անպաշտպան ենք ու առանձին: Կարելի չէ՛ այլեւս հանդուրժել մեր ժողովուրդին դէմ կատարուող սադրանքները, սպառնալիքները, ուժակոծումներն ու յարձակումները: Կարելի չէ՛ այլեւս համակերպիլ պարտադրուած իրավիճակներուն: Արցախի ժողովուրդի անվտանգութեան ու իրաւունքներուն պաշտպանութիւնը միջազգային համայնքին պարտաւորութիւնն է ու նաեւ, եւ մանաւանդ, մեր ազգին համար՝ առաջնահերթութիւն: Եթէ այսօր յաւերժ կորստեան սեմին գտնուող Արցախը չկարենանք փրկել, վաղը կրնայ Հայաստանը նմանօրինակ կացութեան մէջ գտնուիլ», ընդգծեց ան ու յորդորեց ըլլալ արթուն եւ հեռատես, որովհետեւ պատահական չեն Ազրպէյճանի կողմէ առնուած զինուորական-քաղաքական բոլոր տեսակի քայլերը:

Իր պատգամի աւարտին, Արամ Ա. Կաթողիկոս ՀԱՄՆ, ԶԳԱՅԻՆ ԶՕՐԱ-

ՇԱՐԺԻ կոչ ուղղեց համայն Հայութեան: «Այսօր անցեալը ու ներկան ֆննադատելու ժամանակը չէ. այսօր Արցախի ներկան ու Հայաստանի ապագան փրկելու՝ ժամանակն է: Համախմբուի՛նք համազգային այս սրբազան տեսլականին ու յանձնառութեան շուրջ՝ մեր ազգին ողջ ներոյժով: Վստահի՛նք մեր սեփական ոյժին: Մեր ազգին ոյժը իր հաւաքական հաւատքին, վճռականութեան ու միութեան մէջ է: Այլ ճամբայ չունի՛նք մեր դիմաց: Եկէ՛ք միասնաբար փայտն՛ք այս ճամբէն՝ վերանորոգ հաւատքով զօրացած ու վառ յոյսով շաղախուած»:



**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԹԵՄԵՐՈՒՆ ԹԵԼԱԴՐԵՑ
ՀՌԶԱԿԵԼ ԱՐՑԱԽԻ ՉՕՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐ ԵՒ
ՍԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵԼ
ԱՐՑԱԽԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒՆ**

Չորեքշաբթի, 27 Սեպտեմբեր 2023-ին, Արամ Ա. Կաթողիկոս առցանց հանդիպում մը ունեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Թեմակալ Առաջնորդներուն հետ: Հանդիպումի օրակարգին գլխաւոր հարցը Արցախի մեր ժողովուրդին զօրակցութիւնն էր: Նորին Ս. Օծութիւնը հետեւեալ թելադրութիւնները կատարեց առաջնորդներուն եւ թեմի իշխանութիւններուն.-

Ա) Կիրակի, 1 Հոկտեմբեր 2023-ը նկատել Արցախի զօրակցութեան օր՝ հոգեհանգիստ կատարելով Արցախի նահատակներու հոգիներուն, ինչպէս նաեւ աղօթել հիւանդներու շուտափոյթ ապաքինման եւ ընդհանրապէս տագնապի մէջ գտնուող մեր զաւակներու բարօրութեան համար:

Բ) Գործնապէս մասնակից դառնալ ի խնդիր Արցախի մեր ժողովուրդին անվտանգութեան եւ իրաւունքներու պաշտպանութեան տեղի ունենալիք ցոյցերուն եւ հրապարակային այլ նախաձեռնութիւններուն:

Գ) Օժանդակել Արցախի մեր զաւակներուն ընկերային-տնտեսական կարիքներուն՝ թէ՛ Արցախի եւ թէ՛ Հայաստանի մէջ:



**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԻՐ ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՅԱՅՏԼԵ
ԱՐՑԱԽԻ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ**

Ուրբաթ, 6 Հոկտեմբեր 2023-ի յետմիջօրէին, Անթիլիասի Մայրավանքէն ներս, Արամ Ա. Կաթողիկոսի նախագահութեամբ, տեղի ունեցաւ վանաբնակ Միաբան Հայրերու հանդիպում: Վեհափառ Հայրապետը անդրադարձաւ Ազրպէյճանի Արցախի գրաւումով պարզուած կացութեան, մեր ժողովուրդին մօտ ստեղծուած խոր ցաւին ու ընդվզումին եւ Հայաստանի մէջ կայք հաստատած Արցախի մեր զաւակներուն մարդասիրական օժանդակութիւն կատարելու անյետաձգելի անհրաժեշտութեան:

Նորին Սրբութիւնը յայտնեց, որ Հայաստանն ու մեր ժողովուրդը նոր կացութեան դիմաց կը գտնուին: Հետեւաբար, անհրաժեշտ է, որ Հայաստանը մօտէն հետեւի տեղի ունեցող աշխարհաքաղաքական զարգացումներուն եւ հաւասարակշռուած քաղաքականութիւն վարէ՝ հեռու պահելով անհամաչափ քայլերու վտանգաւոր հետեւանքներէն: Ապա, Նորին Ս. Օծութիւնը ընդգծեց, թէ իր արժեւորումով, ներկայ հանգրուանին իրապաշտ մօտեցումով ռազմավարական նոր ուղղութիւն հարկ է ճշդուի, նկատի ունենալով յատկապէս հետեւեալ երեք կէտերը.-

ա) Ռազմագերիներու եւ Ազրպէյճանի կողմէ կալանաւորուած Արցախի պետական անձնաւորութիւններու ազատ արձակում:

բ) Մարդասիրական օժանդակութիւն Արցախի մեր զաւակներուն:

գ) Միջազգային երաշխիք արցախցիներուն վերադարձի իրաւունքին:



Միաբանութիւնը իր խոր ընդվզումը յայտնեց Ազրպէյճանի կողմէ Արցախի խաղաղ Հայ բնակչութեան դէմ շղթայազերծուած պատերազմին եւ բռնի ոյժով գայն իր պատմական հողերէն հեռացնելու անարգ քաղաքականութեան, որ իր մօտեցումով, եղանակով ու նպատակով Յեղասպանութիւն է: Միաբանութիւնը նաեւ խստօրէն դատապարտեց Ազրպէյճանի կողմէ Արցախի նախկին եւ ներկայ պետական պատասխանատուներուն ձերբակալումը եւ Հայաստանի Հանրապետութեան նկատմամբ շարունակուող սպառնալիքները: Ապա, ան կոչ ուղղեց Հայաստանի իշխանութեան, որ առաջնահերթութիւն ընծայէ Հայաստան ապաստանած Արցախի ընտանիքներուն՝ օժանդակութեան յատուկ ծրագիրներ մշակելով, ինչպէս նաեւ միջազգային համայնքին՝ նոյն նպատակին համար անհրաժեշտ օժանդակութիւնը կատարելու:



ԱՐՅԱԽԻ ԶՈՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐ ՀՈՉԱԿՈՒԵՑԱԻ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻ ՄԵՋ

Արցախ աշխարհին դիմագրաւած վերջին աղէտը ծանր հետեւանքներ ունեցաւ մեր ժողովուրդին համար՝ ստեղծելով անորոշութեան մթնոլորտ: 20-րդ դարու առաջին Յեղասպանութիւնը Հայ ժողովուրդին դէմ կրկնուեցաւ 21-րդ դարուն: Դարձեալ նահատակներ, քանդումներ եւ աքսոր...: Դարեր շարունակ Հայու արիւնով, արցունքով ու ստեղծագործ ոգիով շաղախուած Արցախը կը գտնուի թշնամիին արիւնոտ ձեռքերուն մէջ: Մեր ժողովուրդը չէ յուսահատած, որովհետեւ, ինչպէս Պօղոս առաքեալը կ'ըսէ՝ «Յոյսը երբեք ամօթով չի ձգեր» (Հռ 5.5): Հայ ժողովուրդը, Աստուծոյ օրհնութեամբ, կառչած է իր ամուր հաւատքին ու վճռականութեան: Քրիստոս խաչով կերտեց յարութիւնը: Այսօր, Վարազայ Ս. Խաչի տօնին, մեր ժողովուրդը կոչուած է իր հաւատքն ու յոյսը ամուր պահելու՝ նայելով Խաչեալին ու խաչէն ճառագայթող հզօր պատգամին:

Արդարեւ, Կիրակի, 1 Հոկտեմբեր 2023-ին, Վարազայ Ս. Խաչի տօնին եւ Արցախի ու Արցախահայրութեան գօրակցութեան օրուան առիթով, նախագահութեամբ Արամ Ա. Կաթողիկոսին, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ մատուցուեցաւ Ս. եւ Անմահ Պատարագ: Ս. Պատարագը մատուցեց եւ յաւուր պատշաճի քարոզեց Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Թորգոմ Եպս. Տօնոյեանը:

Սրբազան Հայրը իր քարոզին մէջ, առաջին հերթին, նշեց Վարազայ Ս. Խաչի տօնին կարեւորութիւնը՝ յայտնելով, որ Ս. Խաչի շորս տօներէն վերջինը՝ Վարազայ Ս. Խաչը, յատուկ է Հայ եկեղեցւոյ: Ան անդրադարձաւ պատմութեան մէջ Հայ ժողովուրդի «խաչելութիւններուն» եւ ընդգծեց պատմութեան ընթացքին տառապանքներուն դիմաց մեր ժողովուրդին ցուցաբերած հաւատքի զօրութիւնը: Սրբազան Հայրը ըսաւ, որ Ս. Խաչի տօները առիթ են մեր կեանքին մէջ վերահաստատելու Խաչին շարժիչ ոյժը եւ Խաչեալին փրկագործական զօրութիւնը: Մանրամասնելով Վարազայ Ս. Խաչի տօնը, ան ըսաւ, որ 7-րդ դարուն Ներսէս Գ. Շինող Կաթողիկոսին օրով հաստատուած է այս տօնը, երբ Վարազ լերան վրայ Թողիկ ու Յովէլ ուխտաւոր եկեղեցականներու անդուլ աղօթքներով ու ճգնութեամբ, երկնային հրաշքով մը կը յայտնաբերուի Ս. Հռիփսիմէ Կոյսին պատկանող Ս. Խաչին մասունքը:



Անդրադառնալով ներկայ կացութեան, քարոզիչ Սրբազան Հայրը նշեց, որ 4-րդ դարէն ի վեր Հայ ժողովուրդին ինքնութեան անքակտելի արժէքներ դարձած ազգութիւնն ու քրիստոնէութիւնը կ'արտացոլան պատմութեան մէջ: Կը տեսնենք, որ Հայութիւնը, Քրիստոսի նման Խաչի ճամբէն քալելով, տակաւին կը բարձրացնէ «Խաչ քո եղիցի մեզ ապաւէն, Տէ՛ր Յիսուս» աղօթքը, յատկապէս այս օրերուն, որովհետեւ այսօր նո՛յն եաթաղանը կը բարձրանայ մեր ազգի հերոսական Արցախի ու Արցախահայութեան վիզին՝ ընդմիշտ սպառնալով ոչնչացնել Հայաստանն ու Հայութիւնը: Քարոզի ընթացքին Թորգոմ Սրբազան Հայրը իր աղօթքը բարձրացուց առ Աստուած, ըսելով. «Աստուած՝ անմեկնելի, բազում են ճամբաներդ, անիմանալի՝ փրկագործական

հրաշքներդ, մինչ քու ամենաբուժիչ ու յաղթական ներգործութեանդ ամէն ժամանակէ աւելի այսօր է, որ պէտք ունինք մենք՝ Հայ Ազգն ու Հայրենիքը, տարագիր ու սգաւոր Արցախահայութիւնը, վիրաւոր ու սովատանջ Հայ մանուկները, նահատակուած առիւծ զաւակներու հերոսածին մայրերը, քոյրերն ու եղբայրները, դաւադրաբար բռնագրաւուած արծուբոյն մեր Արցախը, եւ տակաւին՝ ամենահսկիչ Քու նայուածքիդ իսկ առջեւ՝ անորոշութեան ու նոր պատերազմներու վտանգին մէջ տուայտող Հայաստան աշխարհը ու անլուր տառապանքներու աքցանին մէջ բռնուած Սփիւռքահայութիւնը, որոնք միահամուռ պաղատանքով մը, Տէ՛ր Ամենազօր, Ս. Խաչի՛դ իսկ զօրութիւնը կ'աղերսեն աշխարհի բոլոր անկիւններէն անխտիր»:

Ապա, Սրբազան Հայրը քաջալերեց հաւատացեալները չլուսահատելու, ջընկրկելու ու սատանային կամքին չյանձնուելու՝ այնքան ատեն, որ Ս. Խաչը ունինք որպէս ապաւէն ու պաշտպան: Փաստօրէն, Եղեռնի օրերուն Խաչը եղաւ Գողգոթայի ճամբաներէն յարութիւն տուողը մեր նախահայրերուն եւ մեզի պարգեւեց կեանք ու Աստուածային օրհնութիւններ: «Ինչպէս Յեղասպանութեան, նաեւ ներկայի ծանր օրերուն մէջ, շնորհիւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելաշունչ Ս. Աթոռին ժողովրդանուէր ծառայութեան, Աստուծոյ օգնութեամբ կարելի եղաւ մարդասիրական, կառուցողական, ընկերային, ազգային ու բարեսիրական տեսակ-տեսակ բնոյթի օժանդակութիւն իրականացնել ե՛ւ Հայաստան-Արցախին, ե՛ւ հայկական վիրաւոր գաղութներուն», ընդգծեց Սրբազան Հայրը եւ աւելցուց, որ մեր Ս. Աթոռը մինչեւ օրս կը շարունակէ իր ժողովուրդի կողքին ըլլալ:

Քարոզի աւարտին, Սրբազան Հայրը իր երախտագիտութիւնը յայտնեց Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, որ Արցախահայութեան նուիրուած զանազան ձեռնարկներու եւ ազգակերտ աշխատանքներու կողքին, վերջերս նաեւ Հայրապետական Ս. Աթոռին կողմէ յառաջացուցած է յատուկ մարմին մը, որ շուտով կը սկսի մարդասիրական նոր ծրագիրներու ճամբով անհրաժեշտ օժանդակութիւն մատակարարել գաղթական ու տարագիր Արցախահայութեան:

Յաւարտ Ս. Պատարագին, հանդիսապետութեամբ Նորին Սրբութեան, տեղի ունեցաւ Արցախի ու Արցախահայութեան նուիրուած յատուկ աղօթք եւ կատարուցեաւ հոգեհանգստեան կարգ՝ Արցախ Հայրենիքի պաշտպանութեան ու պահպանութեան համար նահատակուած մեր հերոս հայորդիներու հոգիներուն համար:



ԱՐՑԱԽԻ ԳԾՈՎ ՉՕՐԱԿՑԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Արցախի մեր ժողովուրդին դէմ Ազրայէճանի կողմէ կատարուած անարգ յարձակումին եւ անոր հետեւանքներուն գծով Լիբանանի զանազան համայնքներու ու կուսակցութիւններու կողմէ զօրակցական այցելութիւններ ու արտայայտութիւններ կատարուեցան:

Այս ծիրէն ներս, անցնող քանի մը օրերու ընթացքին Վեհափառ Հայրապետին այցելեցին Ազգ. «Ազատ Հոսանք» կուսակցութիւնը, ինչպէս նաեւ զարգացման ու գործակցութեան քրիստոնեայ խորհուրդը ներկայացնող պատուիրակութիւններ եւ Ասորի Համայնքի Լիկայի Նախագահը:

Բոլոր այցելուները իրենց ամբողջական զօրակցութիւնը յայտնեցին Հայ ժողովուրդին եւ Արցախի դէմ Ազրայէճանի կատարած յարձակումն ու ձեռքակալութիւնները նկատեցին միջազգային օրէնքի խախտում: Անոնք իրենց պատրաստակամութիւնը յայտնեցին օգտակար ըլլալու Հայաստան հաստատուած Արցախահայութեան ընկերատնտեսական կարիքներուն:



ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՄԻԱԲԱՆՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԱՆ ԱՐՑԱԽԻ ԳՐԱԴՈՒՄԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՂ ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ

Երեքշաբթի, 3 Հոկտեմբեր 2023-ի երեկոյեան, Էշրեֆիէի «Կապրիէլ» պանդոկին մէջ, Արցախի պարզած վերջին իրավիճակը լուսարձակի տակ բերող եւ անոր հետեւանքները քննող խորհրդաժողով մը գումարուեցաւ, «Արցախի Անկումէն Քաղուած Դասեր» խորագրեալ, մասնակցութեամբ լիբանանեան պետական ու տարբեր կուսակցութիւններու եւ կառույցներու ներկայացուցիչներու ու հոգեւոր հայրերու:

Օրհնութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, խորհրդաժողովին իրենց մասնակցութիւնը բերին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ուխտեալ Միաբանութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը: Առաջին հերթին, Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան ողջոյնի խօսք առնելով՝ իր երախտագիտութիւնն ու շնորհակալութիւնը յայտնեց ներկայ պատասխանատու-

ներուն, իրենց ցուցաբերած զօրակցական կեցուածքին համար: Ապա, Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան, յանուն Միաբանութեան, արաբերէնով արտասանեց խօսք մը: Հոգշ. Հայր Սուրբը իր խօսքին մէջ յայտնեց Հայ ազգին խոր ընդվզումը Արցախի մէջ գործադրուած բռնի տեղահանումին եւ բանթուրանական ծաւալապաշտական քաղաքականութեան գծով: Խօսք առանաեւ Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ՝ Յակոբ Բագրատունի: Ան եւս շնորհակալութիւն յայտնեց խորհրդաժողովի գումարման այս նախաձեռնութեան համար՝ դիտել տալով, որ կարելի չէ անտարբեր մնալ Արցախի մէջ պատահած բռնի տեղահանութեան դէպքերուն:

Մասնակիցները սեղմ գիծերու մէջ արտայայտեցին իրենց ներկայացուցած կառույցներուն կեցուածքները՝ յանգելով դատապարտումի եւ ընդվզումի արտայայտութեան:

Խորհրդաժողովի աւարտին հրապարակուեցաւ յայտարարութիւն մը, ուր հիմնականին մէջ շեշտուեցան հետեւեալ կէտերը.-

1) Ներկաները ամբողջական զօրակցութիւն յայտնեցին Հայ ժողովուրդի արդար Դատի պահանջներուն, դատապարտելով Ազրպէյճանի կողմէ Արցախի վրայ կատարուած յարձակումն ու Արցախահայութեան բռնի տեղահանումը իրենց հազարամեակներու պատմութիւն ունեցող բնօրրանէն:

2) Կոչ ուղղեցին Մ.Ա.Կ.ի Ապահովութեան Խորհուրդին՝ Արցախի կացութեան քննարկման յատուկ հրատապ նիստի գումարման, պահանջելով Արցախահայութեան ապահով տունդարձը:

3) Արցախի հարցի պաշտպանութեան գծով իրաւական եւ լոպիինկի միջազգային մարմնի կազմութիւն՝ միաժամանակ դիմելով Արդարադատութեան Միջազգային Դատարանին ու Մարդկային Իրաւանց Միջազգային Խորհուրդին:

4) Լիբանանեան կառավարութեան կողմէ Արցախի գծով դատապարտումի յստակ կեցուածքի հրապարակում:

5) Լիբանանի Արտաքին Գործոց Նախարարութեան կողմէ Արցախի դէպքերուն գծով դատապարտումի հաղորդագրութեան հրապարակում, միաժամանակ Ազրպէյճանի դեսպանէն հաշուետուութեան պահանջ եւ դատապարտումի յուշագիրի յանձնում:

6) Լիբանանեան Խորհրդարանի Արտաքին հարցերու, ինչպէս նաեւ Մարդկային Իրաւանց յանձնախումբերէն Արցախի գծով յստակ կեցուածքի դրսեւորում:

7) Այս մասին յատուկ յուշագիրներ յղել Արցախի ողբերգութեան ականատես ու առնչակից միջազգային թէ շրջանային գերպետութեանց դեսպաններուն:

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՍԲ ՍԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹԻՒՆ՝
ԱՐՑԱԽԵՆ ԲՈՆԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒՆ**



(Ատենապետ Արաբական Միացեալ Էմիրութիւններու եւ Քաթարի Ու Շրջակայից Հայոց Թեմին) եւ Տիար Յակոբ Լուսարարեան (Անդամ Լիբանանի Հայոց Թեմի Ազգ. Վարչութեան):

Վեհափառ Հայրապետին օրհնութեամբ, յիշեալ յանձնախումբը եռօրեայ այցելութեամբ ուղեւորուեցաւ Հայաստան՝ գործնական քայլերու դիմելու նպատակով:

Արդարեւ, Զորեքշաբթի, 18 Հոկտեմբեր 2023-ի առաւօտուն, Առաջնորդ Սրբազան Հայրերը հանդիպում ունեցան Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին հետ, անոր փոխանցեցին Արամ Ա. Կաթողիկոսին եղբայրական ողջոյններն ու Վեհափառ Հայրապետին եւ Կիլիկեան դարաւոր Ս. Աթոռին զօրակցութիւնը յայտնեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան կողմէ տարուող մարդասիրական աշխատանքներուն: Գարեգին Բ. Կաթողիկոս, իր կարգին, դրուատիքով արտայայտուեցաւ Նուիրապետական զոյգ Աթոռներուն միջեւ գոյութիւն ունեցող համագործակցութեան ոգիին մասին, զայն որակելով ցցուն ապացոյց Հայ եկեղեցւոյ ներքին միութեան ու զօրութեան, միաժամանակ անդրադարձաւ Թեմակալ Առաջնորդներու հետ տարուած բարեսիրական աշխատանքներուն:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Արցախեան Հայրենիքի իննամսեայ պաշարումին յաջորդող աւելի քան 100,000 հաշուող Արցախի մեր ժողովուրդի զաւակներուն բռնի տեղահանումին հետեւանքով, կազմեց յատուկ յանձնախումբ մը՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան օժանդակութիւնը մատակարարելու մեր տարագրուած հայրենակիցներուն: Այս յանձնախումբի անդամներն են՝ Գերշ. Տ. Անուշաւան Արք. Դանիէլեան (Առաջնորդ Հիւս. Ամերիկայի Արեւելեան Հայոց Թեմին), Գերշ. Տ. Թորգոմ Եպս. Տօնոյեան (Առաջնորդ Հիւս. Ամերիկայի Արեւմտեան Հայոց Թեմին), Մեթր ժիրայր Հապիպեան

Յիշեալ հանդիպումէն ետք, Առաջնորդ Սրբազան Հայրերը, յանձնախումբի միւս անդամներուն հետ, այցելեցին Երեւանի, Պոռշեանի եւ Կոտայքի մէջ ապաստանած գաղթականներուն եւ իրենց յորդորներով հաւատք ու յոյս ներշնչեցին ներկայ ահաւոր տագնապներէն ամէնաշուտ ժամանակին դուրս գալու վճռականութեամբ: Յանձնախումբը նաեւ հանդիպում ունեցաւ Արագածոտնի Մարգպետ՝ Սէրգէյ Մովսիսեանի հետ:

Յայտնենք, որ յանձնախումբը իր այցելութեան ընթացքին կատարեց նիւթական յատկացումներ տեղահանուած ընտանիքներուն:



ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄ

ԿԱՐՕ ԵՒ ՏԻՐԱՆ ԳԼՈՃԵԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒՆ ՇՆՈՐՀՈՒԵՑԱԲ «ԿԻԼԻԿԵԱՆ ԱՍՊԵՏ» ՇՔԱՆՇԱՆ

Կիրակի, 24 Սեպտեմբեր 2023-ի երեկոյեան, տնօրինութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի, խնդրանքով Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Մակար Եպս. Աշգարեանի, ներկայութեամբ Բերիոյ Հայոց Թեմի նախկին Առաջնորդներ՝ Գերշ. Տ. Սուրէն Արք. Գաթարոյեանի եւ Գերշ. Տ. Շահան Արք.



Սարգիսեանի, Արեւմտեան Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Թորգոմ Եպս. Տօնոյեանի ձեռամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Կիլիկեան Ասպետ» շքանշաններ յանձնուեցան Տէր եւ Տիկ. Կարօ եւ Մայտա Գլրճեանի եւ Տէր եւ Տիկ. Տիրան եւ Սօսի Գլրճեանի՝ Բերիոյ Հայոց Թեմէն ներս անցնող տասնամեակներուն իրենց բերած զանազան ծառայութեանց համար:

**ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ «ԿԻԼԻԿԵԱՆ ԱՍՊԵՏ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵԻԱՏՐԵՑ ԾԵՐՈՆ ԹԻԹԻՉԵԱՆԸ**

Շաբաթ, 7 Հոկտեմբեր 2023-ին, Հիւս. Ա.Մ.Ն.-ի Արեւմտեան Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Թորգոմ Եպս. Տօնոյեանի հովանաւորութեամբ տեղի ունեցած էնսինոյի Ս. Նահատակաց եկեղեցւոյ հիմնադրութեան 60-րդ ամեակին նուիրուած հանգանակային յատուկ ճաշկերոյթին ընթացքին, յանուն Ն.Ա.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Առաջնորդ Սրբազան Հայրը Բարերար եւ Ազգ. Երեսփոխան՝ Տիար Ծերոն Թիթիզեանի կուրծքը զարդարեց «Կիլիկիոյ Ասպետ»-ի շքանշանով:



Ի դէպ, Տէր եւ Տիկ. Մայք եւ Եւելինա Սարեաններու նախագահութեամբ ճաշկերոյթը հիւրընկալուած էր Տէր եւ Տիկ. Ծերոն եւ Սոնա Թիթիզեաններու կողմէն, ամուլին տան մէջ՝ ներկայութեամբ Ազգ. Վարչութեան եւ հոգաբարձական կազմի անդամներուն, պատկան մարմիններուն, միութիւններու ներկայացուցիչներուն, Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ հովանիին տակ գործող մարմիններու անդամներուն, ինչպէս նաեւ «Ֆերահեան» Ազգ. Երկրորդական Վարժարանի Տնօրէնութեան եւ Ուսումնական մարմինին, բարերարներուն, բարեկամներուն եւ հիւրերուն:

Թորգոմ Սրբազան Հայրը, իր խօսքի ընթացքին անդրադառնալէ ետք եկեղեցւոյ 60-ամեայ առաքելութեան, դրուատեց Թիթիզեան ամուլի ծառայական կեանքը՝ ազգին ու համայնքային կեանքի բարգաւաճման ի խնդիր, եւ դիտել տուաւ, որ իր խնդրանքով Կիլիկիոյ Աթոռի Գահակալ՝ Արամ Ա. Վեհափառ Հայրապետը Ծերոն Թիթիզեանին կը շնորհէ «Կիլիկեան Ասպետ» շքանշանը:

Այս առիթով, Հայրապետական Կոնդակը ընթերցեց՝ Արժ. Տ. Ռազմիկ Ա. Քհնյ. Խաչատուրեան: Այնուհետեւ շնորհակալական խօսքերով հանդէս եկան Տիկ. Սոնա Թիթիզեանն ու ամուլին դուստրը՝ Թամար Թիթիզեանը, իրենց երախտագիտութիւնը եւ սրտագին շնորհակալութիւնները յայտնելով Նորին Սրբութեան, Առաջնորդ Սրբազան Հօր եւ բոլոր ներկաներուն:



ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

**ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ
ԿԵՆՍՈԼՈՐՏԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ**

Ստեղծագործութեան յատուկ ուշադրութիւն դարձնելու նպատակով, ամէն տարի, շուրջ ամիս մը տեւողութեամբ, աշխարհի զանազան շրջաններուն մէջ յատուկ ձեռնարկներ կը կազմակերպուին եւ կենսոլորտի պահպանութեան հրամայականը կը շեշտուի: Այս իրողութենէն մեկնելով, 2021 թուականէն սկսեալ, Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդը,



1 Սեպտեմբերէն 4 Հոկտեմբեր երկարող ժամանակաշրջանը կը յատկացնէ կենսոլորտային հարցեր քննարկելու՝ շրջանի երկիրներուն մէջ դասախօսական շարքեր կազմակերպելով եւ միջ-եկեղեցական աղօթքներ կատարելով:



Առ այդ, Զորեքշաբթի, 4 Հոկտեմբեր 2023-ին, Քասլիքի Ս. Հոգի համալսարանին մէջ տեղի ունեցաւ կենսոլորտի պահպանութեան յատուկ միջ-եկեղեցական աղօթք, որուն Արամ Ա. Կաթողիկոսին օրհնութեամբ մասնակցեցան շորս երիտասարդ Միաբան Հայրեր՝ Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան, Դպրեվանքի Հսկիչ՝ Հոգշ. Տ. Աւետիք Վրդ. Տէր Կարապետեան, Միջին Արեւելքի միջ-եկեղեցական եւ միջ-կրօնական յարաբերութեանց պատասխանատու՝ Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան եւ Դպրեվանքի Հսկիչ՝ Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Գարակէօզեան:

Իսկ Հինգշաբթի, 5 Հոկտեմբերին, Սէն Ժոզէֆ համալսարանին մէջ տեղի ունեցաւ կենսոլորտի նուիրուած գիտաժողով, որուն նիստերէն մէկուն ընթացքին ելոյթ ունեցաւ Դպրեվանքի Տեսուչ Հայր Պարոյրը՝ «Բնութեան հասկացողութիւնը Հայ եկեղեցւոյ գիտանկիւնէն» նիւթով:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՍԻՈՅ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ 15-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

Հինգշաբթի, 28 Սեպտեմբերին մինչև Երեքշաբթի, 3 Հոկտեմբեր 2023, Հընդկաստանի Քոթայամ քաղաքին մէջ կայացաւ Ասիոյ Եկեղեցիներու Խորհուրդի 15-րդ համաժողովը՝ «Աստուած, վերանորոգէ մեզ Քու շունչովդ եւ վերականգնէ արարչագործութիւնը» խորագիրով: Յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան այս համաժողովին մասնակցեցան Թեհրանի Հայոց Թեմի Առաջնորդ ու Խորհուրդի Գործադիր Վարչութեան անդամ Գերշ. Տ. Սեպուհ Արք. Սարգիսեան եւ Բրշ. Անի Քրիստի Սրկ. Մանուէլեան:

Ժողովին բացումը կատարեց Ասիոյ Եկեղեցիներու Խորհուրդի Ընդհ. Քարտուղար՝ Դոկտ. Մաթիու Ճորճ Զունաքարան:

Համաժողովը քննարկեց Գործադիր Վարչութեան Ընդհ. Քարտուղարութեան եւ միաւորներուն վերջին ութամեայ գործունէութիւնը եւ նոր միջոցներ որոնեց շրջանի եկեղեցիներուն միջեւ համագործակցութիւնը առաւել եւս ամրացնելու եւ կրօնական երկխօսութիւնը զօ-



րացնելու: Աւարտին, համաժողովը ընտրեց յառաջիկայ հինգ տարուան Գործադիր Վարչութիւնը: Սեպուհ Սրբազան, որ 2010 թուականէն ի վեր եղած է անդամ Գործադիր Վարչութեան, վերընտրուեցաւ:

Ժողովի ընթացքին, որպէս պատգամաւոր, Սեպուհ Սրբազան Հայրը շեշտեց Արցախի ժողովուրդի ներկայ աղէտալի վիճակը եւ յանձնարարեց ժողովականներուն, յատուկ կոչով դատապարտել Թուրքիոյ եւ Ազրպէյճանի ցեղասպանական ծրագիրները Հայ ժողովուրդին նկատմամբ:

Նշենք, որ Կիրակի, 1 Հոկտեմբերին, ժողովականներուն տեղի եկեղեցիներու պատարագներուն մասնակցութեան ծիրէն ներս, Թեհրանի Հայոց Թեմի պատուիրակները մասնակցեցան Հնդիկ Ուղղափառ Եկեղեցւոյ Ս. Պատարագին, ուր Սրբազան Հայրը քարոզեց:

Փակման նիստին, Անի Քրիստի Սրկ.ը մասնակցեցաւ աղօթքի արարողութեան:

Յայտնենք, որ 2010 թուականէն ի վեր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Թեհրանի Հայոց Թեմը անդամ է Ասիոյ Եկեղեցիներու Խորհուրդին:

ԴՊՐԵՎԱՆՔ

ՀՈԳԵՄՏԱԲՈՐ ԿԵԱՆՔԸ ԴՊՐԵՎԱՆՔԷՆ ՆԵՐՍ

ԴՊՐԵՎԱՆՔԻ 2023-2024

**ՈՒՍՈՒՄՆԱԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ
ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԻ ՈՒՍՈՒՑՋԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ**

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի 2023-2024 ուսումնակրթական տարեմուտի սեմին, նախագահութեամբ Ս. Աթոռոյս Գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, տեղի ունեցաւ ուսուցչական ժողով-սեմինար մը, Շաբաթ, 7 Հոկտեմբեր 2023-ին, Դպրեվանքի «Բրաբրոն Տումանեան» սրահին մէջ:

Բարի գալուստի խօսք արտասանեց Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգ2. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան, որ անդրադառնալով Դպրեվանքի առաքելութեան ըսաւ. «Մեր ազգի դիմագրաւած տխուր տագնապներուն դիմաց, Դպրեվանքը նախանձախնդիր կերպով կը լծուի վերանորոգ առաքելութեամբ պատրաստելու հոգեւոր եւ ազգային այն մարդը, որ լուծումներ պիտի տայ մեր ազգին ու եկեղեցիին առջեւ դրուած դատին, խնդիրներուն եւ մարտահրաւէրներուն»:

Ապա, Նորին Սրբութիւնը իր Հայրական սիրով ողջունելէ ետք Դպրեվանք-



քի Տեսչությունն ու Ուսուցչական կազմը, շեշտեց Դպրեվանքի հոգեմտաւոր դաստիարակութեան առաքելութեան կարեւորութիւնը: Ան հաստատեց, թէ Դպրեվանքի աշակերտները պէտք է պատրաստուին ժամանակին հետ քայլ պահել այնպիսի՝ նկարագիրով, որուն ընդմէջէն Դպրեվանքը ճանչցուած է բոլոր գաղութներուն մէջ: «Այս տագնապալից օրերուն, մեր ժողովուրդին զաւակները կը նային Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան: Այս բժախնդրութեամբ պէտք է լծուինք հոգեմտաւոր մարդը պատրաստելու Դպրեվանքին մէջ»:

Նորին Ս. Օծութեան պատգամէն ետք, յաջորդաբար տեղի ունեցան երեք դասախօսութիւններ, որոնց նպատակն էր Դպրեվանքի ուսումնակրթական աշխատանքները վերաթարմացնել եւ նոր ծրագիրներ մշակել դպրեվանեցիի որակաւոր պատրաստութեան համար: Առաջին դասախօսութիւնը ներկայացուց Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան, նիւթ ունենալով «Հոգեւոր Կազմաւորման Հանգրուանները»: Տեսուչ Հայր Սուրբին յաջորդեց Տիկ. Ռաբէլ Քեչէճեանի հոգեբանական կարեւորութիւն ներկայացնող դասախօսութիւնը՝ «Վարուելակերպային Հարցեր» նիւթով: Ապա, Օրդ. Գայիանէ Մածունեան ներկայացուց «Հարցադրումներ՝ Արդիւնաւէտ Դասաւանդումի Համար» նիւթը: Ուսուցիչները աշխուժօրէն մասնակցեցան բոլոր նիւթերու քննարկումներուն: Ժողով-սեմինարը համալրուեցաւ սիրոյ սեղանով:

Այս առիթով յայտնենք, որ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին տնօրինումով, Տեսուչ Հայր Սուրբին իբրեւ օգնականներ, տեսչութեան մաս կը կազմեն՝ Հոգշ. Տ. Աւետիք Վրդ. Տէր Կարապետեան, Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Գարակէօզեան, Հոգշ. Տ. Ազատ Աբդ. Ֆիլիքեան եւ Բրշ. Նշան Սրկ. Անտրեան:

ՆԱԽԱՏՈՆԱԿ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԱՅՆ ՄԵՐՈՑ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՄԱՏՐԱՆ ՄԷՋ

Ուրբաթ, 13 Հոկտեմբեր 2023-ին, Պիքֆայայի Ս. Աստուածածին մատրան մէջ կատարուեցաւ Երեկոյեան Ժամերգութիւն, որուն յաջորդեց Սրբոց Թարգմանչաց տօնին առիթով հանդիսաւոր նախատօնակը: Արարողութիւնը կատարուեցաւ հանդիսապետութեամբ Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեանի, մասնակցութեամբ Տեսչական կազմի անդամներուն եւ դպրեվանեցիներուն:

Ժամերգութեան աւարտին, Տեսուչ Հայր Սուրբը ողջոյնի խօսք առնելով բարի գալուստ մաղթեց բոլոր դպրեվանեցիներուն, ինչպէս նաեւ օրուան խորհուրդին անդրադառնալով ըսաւ. «Շնորհիւ Ս. Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթեւ Հայրապետի եւ Ե. դարու տիտաններուն՝ Ե. դարը կոչուեցաւ Ոսկեդար: Անոնց ճիգերով մենք Աստուծոյ հետ հայերէն կը խօսինք, Տիրոջ խօսքը

հայերէնով կ'ընթերցենք եւ Տիրոջ պատգամը հայերէնով կը փոխանցենք: Այսօր Հայ ժողովուրդը ուրիշ ազգերէ կը զանազանուի իր մշակոյթով եւ գիրով: Ինչպէս Ե. դարը, շնորհիւ մեր հայրերուն կոշուեցաւ Ոսկեդար, նմանապէս այսօր մեր շնորհիւ՝ մեր դարը կրնայ ստանալ նոյն անունն ու արժէքը»:

ԴՊՐԵՎԱՆՔԻ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ԲԱՑՈՒՄ

Թարգմանչաց Վարդապետաց տօնը կրկնակի ցնծութեան օր է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համար, որովհետեւ կը յիշատակենք թէ՛ մեր հոգեւոր ու ազգային ինքնութիւնը ամրացնող սերունդին աւանդը եւ թէ՛ կը վերանորոգենք Թարգմանչաց ուխտը՝ Դպրեվանքի կրթական-ուսումնական տարեշրջանի մեկնարկի ճամբով:

Առ այդ, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Կիրակի, 15 Հոկտեմբեր 2023-ին, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, Ս. եւ Անմահ Պատարագ մատուցեց եւ յաւուր պատշաճի քարոզեց Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան: Հուսկ, Վեհարանի դահլիճին մէջ, Դպրեվանքի սաներուն մասնակցութեամբ եւ հաւատացեալներու ներկայութեամբ, գեղարուեստական յայտագիրով մը տեղի ունեցաւ Դպրեվանքի 2023-2024 ուսումնակրթական տարեշրջանին պաշտօնական բացման հանդիսութիւնը, որուն ընթացքին Նորին Սրբութիւնը յղեց իր Հայրապետական պատգամը:

Իր պատգամին մէջ, Վեհափառ Հայրապետը ուրախութիւն յայտնեց ի տես Դպրեվանքի նոր տարեշրջանի մեկնարկին՝ անգամ մը եւս շեշտելով, որ Դպրեվանքը իր էութեամբ ու կոշումով առաքելութիւն է, որ իր յարկին տակ



կը կոփէ Աստուծոյ եւ ազգին ծառայողները՝ հոգեմտաւոր արժէքներով թրծուած:

Խօսելով Թարգմանչաց Վարդապետաց տօնի մասին, Նորին Սրբութիւնը դիտել տուաւ, որ Թարգմանչաց սերունդը Աստուծոյ ներկայութիւնը թարգմանեց մեր ժողովուրդի կեանքին մէջ՝ հայացնելով մեր հաւատքը: Աւելին, Թարգմանչաց վարդապետները իրենց իրագործումներով մեզի պարզեցին պատմութեան փոթորիկներուն դիմաց կանգուն մնալու ոյժը՝ իբրեւ ազգային ու հոգեւոր արժէքներով շաղախուած ազգ: Այսօր, անոնք ընդհանրապէս մեր եւ յատկապէս Դպրեվանքի կեանքին մէջ պէտք է դառնան մեր կեանքի ճամբան լուսաւորող ուղենիշեր, նշեց ան:

Կամրջելով անցեալը ներկային, Նորին Ս. Օծութիւնը կարեւորեց Թարգմանչաց սերունդին տեսլականին շարունակականութիւնը ապահովող սերունդի մը պատրաստութեան հրամայականը: Վկայակոչելով իր Դպրեվանքի առաջին վերամուտի հանդիսութեան ընթացքին երջանկայիշատակ Տ.Տ. Զարեհ Ա. Կաթողիկոսին արտասանած պատգամը, ուր շեշտադրած էր առողջ նկարագրի կերտման հրամայականը, Արամ Ա. Կաթողիկոս ընդգծեց, որ ուսումն ու վկայականը անիմաստ կը դառնան, երբ մարդուն մէջ կը պակսի վեհ նկարագիրը, իսկ Դպրեվանքի հիմնական առաքելութիւնն է մարդուն մէջ նկարագրի կերտել՝ շաղախուած Աստուծոյ, եկեղեցւոյ, հայրենիքին ու ազգին ծառայելու պատրաստակամ ոգիով:

Աւարտին, Հայոց Հայրապետը իր բարձր գնահատանքը յայտնեց Տեսուչ Հայր Սուրբին, տեսչական եւ ուսուցչական կազմերուն, Դպրեվանքի բարերարներուն ու բարեկամներուն, որոնց անմիջական հսկողութեամբ ու աջակցութեամբ Դպրեվանքը կը շարունակէ իրագործել իրեն վստահուած սրբազան առաքելութիւնն ու կոչումը: Այս առիթով ան աղօթք բարձրացուց առ



Աստուած, որ իր երկնային բարիքներով, շնորհքներով եւ օրհնութեամբ լեցնէ Դպրեվանքին կեանքը:

Դպրեվանքի 2023-2024 տարեմուտի բացման հանդիսութիւնը իր աւարտին հասաւ «Պահպանիչ» աղօթքով եւ «Կիլիկիա» օրհներգի ու Դպրեվանքի քայլերգի միաբերան երգեցողութեամբ:

Նշենք, որ Դպրեվանքի տարեմուտի բացման հանդիսութեան ընթացքին, Տեսուչ Հայր Սուրբը արտասանեց տեսչական ուղերձը, ուր շեշտը դրաւ Դպրեվանքին առաքելութեան կիզակէտը կազմող ոգիին եւ իմաստութեան վրայ՝ դիտել տալով, որ Դպրեվանքի ոգին կը բխի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ս. Աթոռին դարաւոր պատմութենէն, այդ շունչով ու անոր տեսիլքով կ'ապրի եւ իր ապագան ինքնիր յարատեւ ջանքերով կը կերտէ, իսկ իմաստութիւնը, իբրեւ աստուածային շնորհք, կը համալրուի այն ժամանակ, երբ գիտութեամբ կ'աճի ու կը տոգորուի: Դպրեվանքին նպատակն է հոգեմտաւոր կարողութիւններով անհատներ կերտել եւ զանոնք զինել գիտութեամբ ու իմաստութեամբ, որպէսզի ապագային անոնք մեր ժողովուրդը բարգաւաճման ու զարգացման առաջնորդեն, ըսաւ ան:

Իսկ Ս. Պատարագի ընթացքին արտասանած քարոզին մէջ, Հայր Պարոյր կեդրոնացաւ Եսայի մարգարէի տեսիլքին վրայ, որուն պատգամն է խոնարհութիւնը եւ բոլորիս, անխտիր, Աստուածային փրկագործական ծրագիրին մաս կազմելը: Առ այդ, Հոգւ. Հայր Սուրբը քաջալերեց հաւատացեալները իրենց Աստուածատուր շնորհքներով, մասնագիտութիւններով ու հմտութիւններով իրենց մասնակցութիւն բերելու ազգակերտման ու եկեղեցակերտման սրբազան առաքելութեան, մանաւանդ, որ ներկայիս ազգովին կարիքը ունինք ճիգերու համախմբման՝ ի սպաս եկեղեցւոյ ու ազգին բարօրութեան:

ՏԵՍՉԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ¹

Ահաւասիկ այսօր, պաշտօնական հանդիսութեամբ, Վեհարանի այս հպարտալի յարկին տակ, կը կատարենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի 93-րդ ուսումնակրթական տարեշրջանի բացման հանդիսութիւնը՝ Թարգմանիչ Ս. Վարդապետներու բարեխօսական աղօթքին հովանիին տակ: Կը նայինք դէպի երկինք՝ փառք տալով Աստուծոյ, որ մեր հայրերուն հաստատած հոգեւոր եւ ազգային ծառայութեան մարդոյժ պատրաստող ձուլարանը՝ Դպրեվանքը, իր առաքելութիւնը կը շարունակէ վերանորոգ շունչով

¹ Արտասանուած՝ Կիրակի, 15 Հոկտեմբեր 2023-ի, Ս. եւ Անմահ Պատարագէն անմիջապէս ետք, Վեհարանի դահլիճէն ներս, Դպրեվանքի ուսումնակրթական 2023-24 տարեշրջանի բացման հանդիսութեան առիթով:

եւ պայծառ տեսիլքով: Մեր ներկայ կեանքի Հայոց պատմութեան էջերը կ'արձանագրեն խոր վէրքեր յառաջացնող աղէտներ ու տագնապներ, սակայն մեր աչքերը մենք տակաւին կը բարձրացնենք առ Աստուած, ուրկէ պիտի գայ մեր օգնութիւնը, շնորհքը, իմաստութիւնը եւ կամքը, որպէսզի մեր ազգին ու եկեղեցիին հաւաքական տեսիլքին կառչած մնանք եւ զայն իրականացնելու վճռակամութեամբ՝ աշխատինք ամբողջական նուիրումով: Փառք կու տանք Աստուծոյ, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքը, իր հիմնադրութեան առաջին իսկ օրերէն, երբեք չէ զլացած իր ծառայութեան մէջ եւ չէ շեղած իր հայեացքը՝ նպատակատեսիլ իր ճանապարհէն: Ահա այսօր, Դպրեվանքի 2023-2024 տարեշրջանի բացման հանդիսութեան, այս ոգին է, որ կը վերանորոգենք եւ կ'ուխտենք ըլլալ անոր վճռակամ պահապանները:

Պահ մը ուղղուելով դէպի մեր անցեալի պատմութիւնը, կ'ուզեմ վերջիշել այն իւրայատուկ դէպքը, որ արձանագրուած է «Հասկ» պաշտօնաթերթին մէջ, 1932-ին: Նոյն թուականին, Ս. Սահակի տօնին, երբ Դպրեվանքի աշակերտները կը մօտենային Սահակ ծերունագարդ Հայրապետին, իր անուան տօնը շնորհաւորելու եւ անոր օծեալ աջը համբուրելու համար, Վեհափառ Հայրապետը, գեղեցիկ խօսք մը կ'ուղղէ աշակերտներուն.

«Սահակ Պարթեւ մեծ էր ամէն կերպով: Իր օրով ինկաւ Հայոց Արշակունեան թագաւորութիւնը: Յետոյ հիմնուեցան Արծրունեանց, Բագրատունեանց ու Ռուբինեանց թագաւորութիւնները: Ասոնք ալ ինկան, բայց դարերէ ի վեր կանգուն կը մնայ ու պիտի մնայ Սահակի հիմնած գիրքի եւ գրիչի թագաւորութիւնը: Իմ հայրական խրատս սա է. գիրքի ու գրիչի թագաւորութեան քաջ եւ հաւատարիմ զինուորներ եղէ՛ք»²:

Շնորհագարդ Հայրապետին այս գանձ խօսքերը, որքան այժմէական եւ հարազատ կը հնչեն այսօր եւ անոր խրատը անգամ մը եւս մեզ կը մղէ գիտակցելու այն կոչումին, որուն իրականացումին համար մեր առաքելութեան լծուած ենք: Ժամանակակից մեր պատմութեան այս վճռորոշ օրերուն, անհրաժեշտ է շեշտել երկու կենսական իրականութիւններ, որոնք Դպրեվանքի գործունէութեան եւ դաստիարակութեան գործի մատակարարման կիզակէտը կը կազմեն. - Ոգի եւ Իմաստութիւն:

Դպրեվանքը աւելի քան 90 տարուան իր առաքելութեան մէջ, ճանչցուած է իր տածած ոգիով: Ոգի մը, որ ապագայ հոգեւորական կամ ազգային գործիչին առաքելութեան պատճառը, խթանը եւ ներուժը կը հանդիսանայ: Ոգի մը, որ բոլոր տեսակի կաղապարուած աշխատելակերպերէն դուրս կը մտածէ, յանուն ազգին ու եկեղեցւոյ բարօրութեան: Ոգի մը, որ ազգային ու եկեղեցական հաւաքական շահերը ամէն բանէ եւ մանաւանդ իր անձէն վեր կը դասէ, եւ անոր իրականացման համար ոչինչ կը խնայէ: Ոգի մը, որ Կիլիկիոյ

² Հասկ, 1932 Փետրուար, էջ 6:

Կաթողիկոսությունների դարաւոր պատմութեանէն կը բխի, անով կը կազմաւորուի, անոր շունչով ու տեսիլքով կ'ապրի ու իր ապագան ինքն իր յարատեւ ջանքերով կը կերտէ: Ահա այս ոգին է, որ Դպրեվանքեան իւրայատուկ միջոցառումով եւ կրթական եզակի համակարգի մը ընդմէջէն կը փոխանցուի մեր աշակերտներուն:

Երկրորդ կարեւոր գործօնը՝ Իմաստութիւն: Իմաստութիւնը աստուածային շնորհք է, սակայն կը համալրուի այն ժամանակ, երբ անիկա գիտութեամբ կ'աճի ու կը տոգորուի: Դպրեվանքը իբրեւ հոգեւոր ու ազգային ուսումնարան, կը նպատակադրէ հոգեմտաւոր կարողութիւններով անհատներ կերտել եւ զանոնք զինել գիտութեամբ եւ իմաստութեամբ, որպէսզի Դպրեվանքի շրջանաւարտը ապագային կարենայ մեր ազգին առջեւ ծառայող հոգեւոր եւ ազգային բոլոր հարցերը իմաստութեամբ լուծել ու մեր ժողովուրդը բարգաւաճման առաջնորդել: Այլ խօսքով, Դպրեվանքեան դաստիարակութիւնը կ'երաշխաւորէ իմաստութեան դրսեւորումը՝ իրական գործով եւ անխոնջ աշխատանքով:

Վեհափառ Տէր,

Ձերդ Սրբութեան ընտրութեան եւ օծման 28-րդ տարեդարձին առթիւ, Վեհարանի այս դահլիճին մէջ, Ձեր խօսքին մէջ, իրապաշտօրէն հետեւեալը յանձնեցիք մեր ուշադրութեան. «Այսօր մենք կարիքը ունինք, այնպիսի մարդերու, այնպիսի ղեկավարներու, այնպիսի առաջնորդներու՝ հոգեւոր թէ ազգային, որոնք իրենց ծառայութեամբ, իրենց նուիրումով, մեր ժողովուրդի կեանքին նոր շունչ կու տան, նոր արիւն կը ներարկեն մեր կեանքին եւ մեր ժողովուրդը կ'առաջնորդեն ճիշդ ուղղութեամբ: Այսօր մեր եկեղեցին, մեր ժողովուրդը, մեր կառոյցները, մեր հայրենիքը մարդո՛ւ պէտք ունին: Մարդո՛ւ պակաս կայ, ղեկավարի՛ պակաս կայ»: Այս խօսքերը, որոնք կը բխէին Ձեր իրապաշտ եւ հեռատես իմաստութեանէն, այսօր իբրեւ մարտահրաւէր կը դրուին Դպրեվանքին առջեւ: Այս խօսքերուն գործով պատասխան տուող կառոյցը ամէնէն առաջ պիտի ըլլայ Դպրեվանքը, իր ծառայութեամբ եւ հոգեմտաւոր մարդու ու ղեկավարի պատրաստութեամբ: Այս մտածումներուն եւ նուիրումի ու նախանձախնդրութեան վերանորոգ ուխտի լոյսին տակ, կը խնդրենք որ տաք Ձեր Հայրական օրհնութիւնը եւ Հայրապետական իմաստուն պատգամը, որպէսզի Դպրեվանքը պաշտօնապէս բացուած համարէ 2023-2024 ուսումնական տարեշրջանը, եւ Աստուծոյ շնորհքով ու խոստումնալից հասկեր քաղելու տեսլականով, դառնանք Քրիստոսի սերմնացանները, որոնք ոգի եւ իմաստութիւն կը ցանեն մեր մատաղ սերունդի մտքին ու սրտին մէջ:

ՊԱՐՈՅՐ ՎՐԴ. ՇԷՐՆԷՉԵԱՆ
ՏԵՍՈՒՉ ԴՊՐԵՎԱՆՈՒՅ

ԴՊՐԵՎԱՆՔԸ ՕԺՏՈՒԵՑԱԻ ԱՐԴԻԱԿԱՆ ՆՈՐ ԽԱՂԱՍՐԱՀՈՎ

Արամ Ա. Կաթողիկոսին տնօրինութեամբ, Դպրեվանքի 2023-24 ուսումնական թրիակն տարեշրջանի սեմին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքը օժտուեցաւ արդիական խաղասրահով մը՝ «Ռաֆֆի եւ Թալին Փօլատեան» Հիմնարկի նիւթաբարոյական օժանդակութեամբ եւ քաջալերանքով:

Այս ծրագրի իրագործման համար, մեր սրտագին շնորհակալութիւնը կը յայտնենք Ռաֆֆի եւ Թալին Փօլատեաններուն եւ իրենց զաւակներուն, մաղթելով իրենց Աստուծոյ օրհնութիւններով բեղուն օրեր:

Յայտնենք, որ այս ծրագրին իրենց աջակցութիւնը բերին նաեւ Սան Ֆրանսիսքոյի գաղութէն Դպրեվանքի առաքելութեան հաւատացող հայորդիներ:

Այս առթիւ, Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան աշակերտութեան ուղղելով իր խօսքը ըսաւ. «Դպրեվանքին հոգեմտաւոր կազմաւորումը առանցքային տեղ կը գրաւէ դպրեվանքեան կեանքին մէջ: Դպրեվանքին հոգին սնուցանելու կողքին անհրաժեշտ է որ նաեւ ընդլայնէ իր մտահորիզոնը՝ արհեստագիտութեան շնորհած արդիական զանազան խաղերու ընդմէջէն: Այս նպատակէն մեկնելով, Տեսչութիւնս փափաքեցաւ Դպրեվանքը օժտել նոր խաղասրահով, հաւատալով, որ այս ծրագիրը իւրաքանչիւր դպրեվանքի համար առիթ մը պիտի ըլլայ զարգացնելու իր զանազան հմտութիւնները»:



ՏԵՍՉՈՒԹԻՒՆ-ԱՇԱԿԵՐՏՈՒԹԻՒՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՒԱՔ

Երկուշաբթի, 16 Հոկտեմբեր 2023-ին, Երեկոյեան Ժամերգութենէն ետք, Դպրեվանքի «Բրաբրոն Տումանեան» հանդիսասրահին մէջ տեղի ունեցաւ մտերմիկ հանդիպում մը Դպրեվանքի Տեսչութեան եւ աշակերտութեան միջեւ, գլխաւորութեամբ Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեանի:



Հոգշ. Հայր Սուրբը նախ ներկայացուց Տեսչական կազմը եւ իւրաքանչիւրին ստանձնած պաշտօնները, ապա անդրադարձաւ դպրեվանեցիի նկարագրի կազմաւորման, փոխադարձ յարգանքի, եղբայրական սիրոյ, անկեղծութեան, օրէնքներու հնազանդութեան եւ պաշտօնի գիտակցութեան կարեւորութեան մասին: Ան ընդհանուր գիծերու մէջ խօսեցաւ Դպրեվանքի առօրեայի մասին, ինչպէս նաեւ յայտարարեց իւրաքանչիւր դպրեվանեցիի պաշտօնն ու պարտականութիւնը դպրեվանքեան կեանքէն ներս:



ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ՝ «ԿԱՐԳԱՊԱՀ ԸՆԹԱՅՔԻ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԲՈՆԱԾԱՂՐԻ (BULLYING) ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ»

Դպրեվանքի Տեսչութեան տնօրինութեամբ տեղի ունեցող դասախօսական շարքի ծիրին մէջ, Ուրբաթ, 27 Հոկտեմբեր 2023-ին, Ուսանողական Խորհուրդը կազմակերպած էր «Կարգապահ ընթացքի կարեւորութիւնը եւ բռնածաղրի դէմ պայքարելու միջոցներ» նիւթով դասախօսութիւն-զրոյց մը՝ զրուցավար ունենալով Հայկազեան Համալսարանի Դասախօս եւ Դպրեվանքի Ուսուցիչ՝ Դոկտ. Շաղիկ Գանտահարեան-Խիւտավէրտեանը:

Դասախօսութեան ընթացքին, Տիկ. Շաղիկը դպրեվանեցիներուն ուշադրութեան յանձնեց անկարգապահութեան եւ բռնածաղրի առթած վնասները, թէ՛ անհատական եւ թէ՛ հաւաքական կեանքին վերաբերող ու կարեւորեց իրարու հետ դրական կապեր հաստատելն ու առողջ վարուելակերպ որդեգրելը:

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

**ՀՈԳԵԻՈՐ ԼՍԱՐԱՆ՝ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԴՈՐԻՉ» ՄԱՅՐ ՏԱՃԱՐԷՆ ՆԵՐՍ**

Բարձր հովանաւորութեամբ եւ Օրհնութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքը աւելի քան 20 տարիներէ ի վեր, ամէն Երեքշաբթի, առաւօտեան ժամը 10:00-11:00, Կաթողիկոսարանի «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» Մայր Տաճարէն ներս կը կատարէ Հոգեւոր Լսարան, ուր Միաբան Հայրերու կողմէ սաղմոսասացութեամբ, շարականի ուսուցումներով, աղօթքներով ու մանաւանդ կրօնական խորհրդածութիւններով, մեր ժողովուրդի զաւակներուն կը ջամբուին հոգեւոր մատակարարում:

Առ այդ, Հոկտեմբեր ամսուան ընթացքին, կատարուած են հետեւեալ հոգեւոր խորհրդածութիւնները.-

ա) 3 Հոկտեմբեր 2023-ին, Բաժանմունքի վարիչ՝ Գերպ. Տ. Ստեփանոս Ծ. Վրդ. Փաշայեանի կողմէ բացումը կատարուեցաւ 2023-24 տարեշրջանի 24րդ տարուան Հոգեւոր Լսարանին:

բ) 10 Հոկտեմբեր 2023-ին, Գերպ. Տ. Փառէն Ծ. Վրդ. Վարդանեան խօսեցաւ Հայ Առաքելական Եկեղեցւոյ եօթը խորհուրդներէն՝ Ս. Մկրտութեան մասին:

գ) 17 Հոկտեմբեր 2023-ին, Գերպ. Տ. Ստեփանոս Ծ. Վրդ. Փաշայեան խօսեցաւ Սրբոց Թարգմանչաց Վարդապետներու մասին, խորագիր ունենալով՝ «Թարգմանիչներու թողած կտակով՝ շարունակենք մեր երիտասարդները կազմաւորել» նիւթը:

դ) 24 Հոկտեմբեր 2023-ին, Հոգշ. Տ. Յովակիմ Վրդ. Բանճարճեան խօսեցաւ հաւատքի քննութեան մասին:

ե) 31 Հոկտեմբեր 2023-ին, Հոգշ. Տ. Տաճատ Վրդ. Աշրգեան խօսեցաւ փորձութիւններու մասին, խորագիր ունենալով՝ «Փորձութեանց մէջ յարատեւութիւն՝ Քրիստոսի օրինակով» նիւթը:

**ՀՈԳԵՄՏԱԴՈՐ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝
«ՀԱՒԱՏՔ ԵՒ ԿԵԱՆՔ» ՅԱՅՏԱԳՐԻ ԸՆԴՄԵՉԵՆ**

Բարձր հովանավորութեամբ եւ Օրհնութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Քրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքը աւելի քան 3 տարիներէ ի վեր, համագործակցութեամբ Լիբանանի «Վանայ Ձայն» ռատիոկայանին, ժողովուրդին կը մատուցէ հոգեւոր, բարոյախօսական եւ դաստիարակչական յայտագիր մը՝ «Հաւատք եւ Կեանք» խորագրով, որ տեղի կ'ունենայ ամէն Հինգշաբթի, երեկոյեան ժամը 7:00-8:00, ուղիղ սփռումով:

Հոկտեմբեր ամսուան ընթացքին, Միաբան Հայրերու կողմէ կատարուեցան հետեւեալ խորհրդածութիւնները.-

ա) 5 Հոկտեմբեր 2023-ին, Հոգշ. Տ. Ազատ Աբղ. Ֆիլիքեան խօսեցաւ Ս. Պատարագի ծագման եւ զարգացման մասին:

բ) 12 Հոկտեմբեր 2023-ին, Հոգշ. Տ. Եսայի Աբղ. Էօրտէքեան խօսեցաւ Աստուծոյ վախճանի եւ մարդոցմէ ամչնալու մասին:

գ) 19 Հոկտեմբեր 2023-ին, Հոգշ. Տ. Առաքել Աբղ. Գատէհճեան խօսեցաւ Քրիստոսի հետեւորդ աշակերտուհիներուն մասին:

դ) 26 Հոկտեմբեր 2023-ին, Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան խօսեցաւ եկեղեցւոյ 12 վարդապետներուն մասին:



ՄԻԱԲԱՆ ՀԱՅՐԵՐ՝ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՍԷՉ

Լիբանանի Հայ Գաղութի կեանքէն ներս գործող հոգեւոր, ընկերային, մշակութային եւ բարեսիրական հաստատութիւններ, զանազան ծրագիրներ ձեռնարկներ իրագործեցին եւ համագործակցութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքին, Միաբան Հայրեր հիւրընկալեցին:

Միաբան Հայրերը յիշեալ ձեռնարկներու ընդմէջէն, եկեղեցւոյ առաքելութիւնը տարին ժողովուրդին մէջ, իրենց ներկայութեամբ եղան ժողովուրդին հետ եւ իբրեւ Հայ եկեղեցւոյ նուիրեալ սպասաւորներ՝ իրենց ծառայութիւնը մատուցին ժողովուրդին:

Այս առիթով, Հոկտեմբեր ամսուան ընթացքին, անոնք պատգամներով, քարոզախօսութեամբ ու դասախօսութիւններով իրենց մասնակցութիւնը բերին վերոյիշեալ ձեռնարկներուն.-

ա) Կիրակի, 1 Հոկտեմբեր 2023-ին, կազմակերպութեամբ «Նանէճեան» Հոգեւոր Եղբայրակցութեան, «Թռչնոց Բոյն»ի համալիրէն ներս մատուցուեցաւ Ս. եւ Անմահ Պատարագ եւ ապա տեղի ունեցաւ միօրեայ համագումար՝ «Ո՛ւր է Քրիստոսը քու կեանքիդ մէջ» խորագրով: Ս. Պատարագը մատուցեց եւ համագումարին իր հոգեւոր խորհրդածութիւնը կատարեց՝ Հոգշ. Տ. Առաքել Աբղ. Գատէճեան:

բ) Շաբաթ, 14 Հոկտեմբեր 2023-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդը, «Աղբալեան» ակումբէն ներս ձեռնարկեց 2023-24 տարեշրջանի պաշտօնական վերամուտը: Այս առիթով, իր մասնակցութիւնը բերաւ ու սրտի խօսքը փոխանցեց՝ Գերպ. Տ. Փառէն Ծ. Վրդ. Վարդանեան:

գ) Շաբաթ, 14 Հոկտեմբեր 2023-ին, նախաձեռնութեամբ Լիբանանի Թէքէյեան Մշակութային Միութեան (Թ.Մ.Մ.) տեղական վարչութեան, «Յովհաննէս Պողոսեան» սրահէն ներս տեղի ունեցաւ գեղարուեստական երիտասարդական յայտագիր (The Youth Band Annual Concert), որուն ներկայ գրտնուեցան՝ Հոգշ. Տ. Եսայի Աբղ. Էօրտէքեան եւ Հոգշ. Տ. Եղիա Աբղ. Մալխասեան:

դ) Կիրակի, 15 Հոկտեմբեր 2023-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդը, «Սոֆիա Յակոբեան» նախկին վարժարանի դաշտին մէջ ձեռնարկեց 2023-24 տարեշրջանի պաշտօնական վերամուտը: Այս առիթով, իր մասնակցութիւնը բերաւ ու սրտի խօսքը փոխանցեց՝ Գերպ. Տ. Վաղինակ Ծ. Վրդ. Մելոյեան:

ե) Երեքշաբթի, 31 Հոկտեմբեր 2023-ին, կազմակերպութեամբ «Գարակէօզեան» Հաստատութեան, «Շամլեան-Թաթիկեան» վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ Ա. խումբի Հոգեւոր Լսարանը: Օրուան Հոգեւոր խորհրդածութիւնը կատարեց՝ Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան, նիւթ ունենալով՝ «Ներկայ դժուար պայմաններուն տակ՝ չլուսահատիլ եւ Աստուծոյ ապաւինիլ» խորագիրը:

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ

**ՄԱՅՐԱՎԱՆՔԻ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ
ՓՈՔՐԻԿՆԵՐԸ ՍՏԱՑԱՆ ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ
ՀԱՅՐԱՎԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ**

Կիրակի, 29 Հոկտեմբեր 2023-ին, Անթիլիասի Մայրավանքին մէջ մատուցուած Ս. Էւ Անմահ պատարագէն ետք, վեհարանի դահլիճին մէջ, Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ընդունեց Էւ իր Հայրական Օրհնութիւնը փոխանցեց Մայրավանքի Կիրակնօրեայ վարժարանի փոքրիկներուն, որոնց կ'ընկերակցէին Քրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչ՝ Գերպ. Տ. Ստեփանոս Ծ.Վրդ. Փաշայեանն ու խումբ մը Միաբան Հայեր, ինչպէս նաեւ Կիրակնօրեայ վարժարանի տնօրէնուհի՝ Ժանին Դանիէլեանը:

Նախքան փոքրիկներուն կողմէ կոկիկ յայտագրի մը ներկայացումը, Դանիէլեան իր ողջոյնի խօսքին մէջ գոհութիւն ու փառք առաքեց ամենակարող Աստուծոյ, որ այս տարի Էւս, հակառակ մեր շուրջը ստեղծուած արտակարգ պայմաններուն, մեզ արժանացուց ըստ պատշաճի կատարելու 2023-24 տարեշրջանի բացումը՝ Նորին Ս. Օծութեան հովանիին ներքեւ: Ան կարեւորութեամբ յայտնեց, որ Մայրավանքի Կիրակնօրեայ վարժարանը այս տարե-



շրջանը նուիրած է Արցախի մեր քոյրերուն ու եղբայրներուն: «Բռնակալ թշնամին կրնայ մեր հողերը գրաւել, մեր տանարները աւերել, մեր տունները քանդել, սակայն չի կրնար խորտակել մեր հաւատքը, միասնական ոգին, գոյատևելու ու արարելու հզօր կամքը», ընդգծեց Ժանին Դանիէլեան: Ան յայտարարեց, որ մեր աշակերտներուն ամանորեայ տօնակատարութեանց եւ նուէրներուն ծախսերը լրիւ պիտի տրամադրուին արցախահայ մանուկներուն, որպէսզի անոնց անմեղ դէմքերուն վրայ յոյսի ժպիտը դրոշմուի:

Տնօրէնի խօսքէն ետք, Կիրակնօրեայ վարժարանի փոքրիկները ամփոփ յայտագիր մը ներկայացուցին, որ կ'ընդգրկէր շարականի երգեցողութիւն եւ զանազան նուագարաններու մեկնաբանութիւն:

Աւարտին, Վեհափառ Հայրապետը փոխանցեց իր Հայրական խօսքը: Առաջին հերթին, ան բարձր գնահատեց տնօրէնութեան ու աշակերտութեան նախաձեռնութիւնը՝ վարժարանին այս տարեշրջանը ձօնելու Արցախահայութեան: Ան ընդգծեց մեր նոր սերունդին կրօնական ու ազգային դաստիարակութիւն ջամբելու յոյժ կարեւորութիւնը: Այսօրուան մանուկներու սերունդը վաղուան մեր երիտասարդ սերունդն է եւ հետեւաբար, նաեւ՝ ղեկավարն ու առաջնորդը: Ուստի, մեր մանուկները եկեղեցական գիտելիքներով զինելու, ազգասիրութեան ու հայրենասիրութեան ոգիով թրծելու եւ եղբայրասիրութեան զգացումներով պարուրելու բժախնդիր ու նախանձախնդիր սրբազան աշխատանք եւ առաքելութիւնը, դրուած են մեր իւրաքանչիւրին ուսերուն վրայ, շեշտեց Նորին Սրբութիւնը:

Այս առիթով, ան իր գնահատանքի խօսքը ուղղեց աշակերտներու ծնողներուն, որոնք բժախնդրութեամբ լծուած են իրենց զաւակներուն դաստիարակութեան: Ան նաեւ գնահատեց Կիրակնօրեայ վարժարանի ուսուցիչներն ու տնօրէնութիւնը, որոնք ամէն Կիրակի, մէկդի դնելով իրենց անձնական ու ընտանեկան հանգիստը, նուիրուած են, բառին ամբողջական առումով, կամաւոր կերպով, սերունդներ դաստիարակելու սրբազան առաքելութեան ու կոչումին:

«ՇՆՈՐՀԱԼԻ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲ

«ՇՆՈՐՀԱԼԻ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԱՅՑԵԼԵՑ ՎԵՐԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Ուրբաթ, 13 Հոկտեմբեր 2023-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Կաթողիկոսարանի «Շնորհալի» երգչախումբի նորանշանակ Վարչութիւնը, գլխավորութեամբ երգչախումբի խմբավար՝ Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեանի, այցելեց Արամ Ա. Կաթողիկոսին եւ ստացաւ անոր Հայրական ու Հայրապետական Օրհնութիւնը:



Հոգշ. Հայր Սուրբը իր որդիական երախտագիտական ու շնորհակալական խօսքը ուղղելէ ետք, հրաւիրեց վարչականները հակիրճ կերպով զեկուցելու յառաջիկայի ծրագիրներուն ու աշխատանքներուն մասին: Վարչական անդամները յայտնեցին, որ «Շնորհալի» երգչախումբը յառաջիկայ տարուան համար կը պատրաստուի ներկայացնել երկու համերգներ՝ մէկը Սայաթ-

Նովայի նուիրուած եւ միւսը Կաթողիկոսարանի մանկապատանեկան «Նարեկացի» երգչախումբին հետ Ս. Ծննդեան համերգ: Վարչութիւնը նաեւ յայտնեց, որ երգչախումբին համար յառաջիկայ ամիսներուն պիտի կազմակերպուին յատուկ սեմինարներ, անդամները պիտի ծանօթանան օտար եւ այլ երգչախումբերու եւ երգչախումբը պիտի ունենայ իր ընկերային հաւաքները: Ի վերջոյ, նորանշանակ վարչութիւնը իր հաստատակամութիւնը յայտնեց, «Շնորհալի»ին ճամբով ծառայելու Հայ եկեղեցւոյ ու ժողովուրդին, որպէսզի իր համեստ լուծման ձգէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ս. Աթոռին ծառայական առաքելութեան բարգաւաճման ու հզօրացման մէջ:

Նորին Սրբութիւնը գնահատեց Հոգշ. Հայր Սուրբին գլխաւորութեամբ մշակուած ծրագիրները: Ան ողջունեց նորակազմ վարչութիւնը եւ անդրադարձաւ Հայ մշակոյթին դիմագրաւած ներկայ մարտահրաւէրներուն ու դժուարութիւններուն: Հայոց Հայրապետը ըսաւ, որ Կաթողիկոսարանի «Շնորհալի» երգչախումբը նախաձեռնողի կեցուածք պէտք է ցուցաբերէ իր եկեղեցական ու ազգային ականգնութիւններուն ու արժէքներուն պահպանման գծով՝ նոր հորիզոններ բանալու Հայ եկեղեցւոյ ու Հայ ազգի կեանքին մէջ: Այս առիթով ան դրուատիքով անդրադարձաւ երգչախումբի անդամներուն մասին եւ ըսաւ, որ անոնք կամաւոր մէկական զինուորներ են, որոնք կը պաշտպանեն ու կը տարածեն Հայ երաժշտութիւնը Կաթողիկոսարանին ճամբով: Վերջապէս, ան բարձր գնահատեց երգչախումբի անդամներուն կապուածութիւնը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դարաւոր Ս. Աթոռին եւ յիշեցուց, որ Ներսէս Շնորհալի Հայրապետին անունով կնքուած այս երգչախումբը իր լուծման ձգած է ու պիտի շարունակէ ձգել Հայ ժողովուրդի հոգեւոր թէ ազգային երգարուեստի գանձանակին մէջ:

Յայտնենք, որ նորանշանակ Վարչութիւնը բաղկացած է հետեւեալ անդամներէ.- Դոկտ. Քրիստին Արզումանեան, Տիանա Մարատեան, Նանոր Պոյաճեան, Յոլին Աբրահամեան եւ Մարիա Քէշիշեան:



ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԷՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՅՅԵԼԵՑ ԱՐԱ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԸ

Հինգշաբթի, 31 Օգոստոս 2023-ին, Արամ Ա. Կաթողիկոսին այցելեց Մարսելեն (Ֆրանսա) Պեյրոթ թիավարած Արա Խաչատուրեանը:

27 Մայիսին, Խաչատուրեան մեկնարկած էր «Թիավարություն Յանուն Խաղաղության» խորագրեալ առաքելության, նպատակ ունենալով իր մասնակցությունը բերել աղքատության ու պատերազմներու դեմ պայքարին:

Վեհափառ Հայրապետին հետ տեսակցության ընթացքին, Խաչատուրեանը խօսեցաւ իր առաքելության եւ հետապնդած նպատակներուն կարելորության մասին:

Արա Խաչատուրեանը, որ 2018 թուականին Նորին Սրբութեան ձեռամբ պարգևատրուած էր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով, Հայոց Ցեղասպանության եւ այլ ցեղասպանություններու դատերը նախապէս ուշադրության դարձուցած էր՝ աշխարհի ամենաբարձր լեռը՝ Էվերեսթ բարձրանալով (2016) ու անոր գագաթին հայերէն Աստուածաշունչն ու Հայաստանի դրօշը տեղադրելով, ինչպէս նաեւ Մարսելէն Հայաստան վազելով (2018): Այս տարուան իր ուղեւորութիւնը նրւիւրած էր իր ծննդավայրին՝ Լիբանանին, որմէ հեռացած էր քաղաքացիական պատերազմին պատճառով:

Նորին Ս. Օծութիւնը գնահատեց Արա Խաչատուրեանի կորովն ու Հայու ինքնութեան կառչած մնալու հաւա-

տարմութիւնը եւ իր Հայրական Օրինութիւնը փոխանցեց անոր յառաջիկայ ծրագիրներուն:

ՀԱՄԱՉԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՐԱՍՏԵՂԾ ԴՐՕԵԸ ՕՐՀՆՈՒԵՑԱՒ ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԶԵՈՒՍԲ

Համազգայինը 95 տարիներէ ի վեր կը գործէր միայն իր տարբերանշանով. Միութեան վերջին 9-րդ Պատգամաւորական Ժողովը (Մայիս 2022, Երեւան) հաստատեց Միութեան դրօշի մը որդեգրման անհրաժեշտութիւնը:

Արդարեւ, 4 Սեպտեմբեր 2023-ին, Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը՝ բաղկացած Կեդր. եւ Լիբանանի Շրջանային Վարչութիւններու անդամներէ, Հ.Օ.Մ.ի եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդր. Վարչութեան ներկայացուցիչներէ, Համազգայինի զանազան հաստատութիւններու Տնօրէններէ, այցելեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանք, ուր Վեհարանին մէջ հանդիպեցաւ Նորին Ս. Օծութեան եւ ներկայացուց Համազգայինի նորաստեղծ դրօշը:

Վեհափառ Հայրապետը զոյգ Միաբան Հայրերու ներկայութեամբ օրհնեց դրօշը եւ դրուատիքով խօսեցաւ Համազգայինի ունեցած 95-ամեայ դերակատարութեան եւ գործունէութեան մասին, յայտնելով որ այս օրերուն ազգային արժէքները, կրթութիւնն ու մշակոյթը աղաւաղելու հոսանքին դեմ

թիավարելու մեջ մեծ է Համազգայինին դերը:

Ապա Կեդր. վարչության Ատենայետ՝ Զաքար Քեշիշեան շնորհակալություն յայտնեց Նորին Սրբութեան, իր մնայուն նեցուկին ու քաջալերանքին համար:

Նշենք, որ Համազգայինը իր հիմնադրութեան 95-ամեակը նշեց 12-18 Սեպտեմբեր 2023-ին, Երեւանի մեջ գրական-գեղարուեստական ձեռնարկներու շարքով եւ պաշտօնական հանդիսութեամբ:

**ՎԵՅԱՓՈՒ ՅԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ԼԻԲԱՆԱՆԻ ՍՕՏ ԱՐԺԱՆԹԻՆԻ
ԵՒ ՎԱՏԻԿԱՆԻ ՍՕՏ ԼԻԲԱՆԱՆԻ
ԴԵՍՊԱՆՆԵՐԸ**

Երկուշաբթի, 18 Սեպտեմբեր 2023-ին, Արամ Ա. Կաթողիկոս յաջորդաբար ընդունեց Լիբանանի մօտ Արժանթինի դեսպան՝ Մորիսիօ Ալիսը եւ Վատիկանի մօտ Լիբանանի դեսպան՝ Դոկտ. Ֆարիտ Ալ-Խազէնը:

Դեսպաններուն հետ քննարկումները ընդհանրապէս կեդրոնացան Լիբանանի յառաջիկայ նախագահական ընտրութեան գծով վերջին շրջանին տեղի ունեցած զարգացումներուն վրայ: Այս ծիրէն ներս կատարուեցաւ տեսակետներու փոխանակում եւ շեշտուեցաւ կարելի փութով ընտրութիւն կայացնելու անհրաժեշտութիւնը:

Հանդիպման ընթացքին, Նորին Սրբութիւնը նաեւ արծարծեց Արցախի պարզած ներկայ կացութիւնը՝ զայն նկատելով Ազրայէճանի կողմէ մարդկային իրաւանց ու արժանապատուութեան դէմ առնուած անմարդկային քայլ, որուն նկատմամբ միջազգային համայնքը դատապարտումէն անդին անհրաժեշտ է որ դիմէ գործնական քայլերու:

**ՎԵՅԱՓՈՒ ՅԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ԵՈՒՀԱՆՆԱ ՊԱՏՐԻԱՐԹԻՆ
ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉԸ ԵՒ ԹՈՒՄՈՅԻ
ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՍԵՄ ՍԻՍՈՆԵԱՆԸ**

Շաբաթ, 30 Սեպտեմբեր 2023-ին, Արամ Ա. Կաթողիկոսին այցելեց Անտիոքի Յոյն Ուղղափառ Եկեղեցոյ պետ՝ Եուհաննա Ժ. Եազճի Պատրիարքին ներկայացուցիչ եւ Պալամանտ համալսարանի աստուածաբանական բաժանմունքի տնօրէն՝ Հայր Ժազ Խալիլը: Հանդիպումին ներկայ էին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեանն ու Կաթողիկոսարանի Միջին Արեւելքի միջ-եկեղեցական եւ միջ-կրօնական բաժանմունքի վարիչ՝ Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեանը:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան Հայ եւ Յոյն Ուղղափառ եկեղեցիներու եւ Դպրեվանքի ու Պալամանտ համալսարանի միջեւ գործակցութեան կարելիութիւնները:

Նորին Ս. Օծութիւնը ընդունեց նաեւ ԹՈՒՄՕ ստեղծարար ճարտարագիտութեանց միջազգային կեդրոնի (TUMO Center for Creative Technologies) հիմնադիր՝ Սէմ Սիմոնեանը, ընկերակցութեամբ իր տիկնոջ եւ աղջկան: Հանդիպումը առիթ հանդիսացաւ ակնարկ մը նետելու ԹՈՒՄՕ կեդրոնի գործունէութեան, ինչպէս նաեւ նման կեդրոն մը Լիբանանի մեջ հաստատելու կարելիութիւններուն:

**ՍԱՍ ՅԱՐԻՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՆՈՂ
ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՍԸ
ԱՅՅԵԼԵՑ ՆՈՐԻՆ ՍՐՐՈՒԹԵԱՆ**

Երեքշաբթի, 3 Հոկտեմբեր 2023-ին, Վեհափառ Հայրապետը ընդունեց Լիբանանի նախկին վարչապետ՝ Սաատ Հարիրին եւ «Մուսթաքալ» հոսանքը

ներկայացնող պատուիրակություն մը, Անթիլիասի Մայրավանքին մէջ: Հանդիպումին ներկայ էր նաեւ Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ՝ Յակոբ Բագրատունի:

«Մուսթափալ»ի պատուիրակությունը Նորին Ս. Օծուբեան փոխանցեց վարչապետ Հարիրիի ողջոյնները եւ միաժամանակ արտայայտեց անոր խոր ցաւը՝ ի տես Արցախի մէջ պատահող փոփոխութեանց, ժողովուրդի տեղահանութեան եւ աշխարհի լուծութեան:

Պատուիրակությունը նախկին վարչապետին անունով յոյս յայտնեց Արցախեան կնճիռին բարուք լուծման եւ տեղահանութեան վերջ տալու առնչութեամբ:

**ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ԳԵՐՄԱՆԻԱՅԵՆ ԺԱՄԱՆԱԾ ԽՈՒՄԲ ՍԸ
ԱՍՈՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ**

Շաբաթ, 7 Հոկտեմբեր 2023-ին, Պէյրութի Ասորի Ուղղափառ եկեղեցւոյ Առաջնորդ՝ Տանիէլ Եպս. Գուրիէի գլխաւորութեամբ, Արամ Ա. Կաթողիկոսին այցելեցին Գերմանիայէն ժամանած քսան ասորի ուսուցիչներ: Անոնք կը դասաւանդեն կրօնագիտութիւն Գերմանիոյ գոլէճներուն մէջ: Անոնցմէ ոմանք Թուրքիայէն եւ Սուրիայէն արտագաղթած են տարիներ առաջ, իսկ ոմանք՝ Գերմանիա ծնած:

Տանիէլ Եպս. իօսք առնելով՝ ներկաներուն անունով իր զօրակցութիւնը յայտնեց Հայ ժողովուրդին, Արցախի հարցով ստեղծուած տագնապին գծով: Ան պարզեց ուսուցիչներուն այցելութեան նպատակը: Իօսք առաւ նաեւ ուսուցչաց խումբին ներկայացուցիչը եւ յիշեց, որ տարիներ առաջ ան հանդիպած էր Վեհափառ Հայրապետին՝ Հայ եւ Ասորի եկեղեցիներու միջեւ տեղի ունեցած հանդիպման ընթացքին: Ան նաեւ անդրադարձաւ Նորին Ս. Օծու-

թեան միջ-եկեղեցական յարաբերութեանց մէջ ունեցած տիրական ներկայութեան:

Ողջունելով ներկաներուն այցելութիւնը Պիքֆայայի վանք, Արամ Ա. Կաթողիկոս անդրադարձաւ երկու եկեղեցիներուն դարաւոր գործակցութեան: Այս ծիրէն ներս, ան յիշեց Հայ եւ Ասորի եկեղեցիներուն սերտ յարաբերութիւնը արտայայտող դէպքերն ու երեւոյթները: Հայոց Հայրապետը շեշտեց ներկայ աշխարհին մէջ եկեղեցիներու գործակցութեան հրամայականը, այս պարագային յատկապէս Հայ եւ Ասորի եկեղեցիներուն, որոնք պատմութենէն ժառանգած գործակցութեան փորձառութիւն ունին: Այս իրողութիւնը յիշեցում մըն է երկու եկեղեցիներու եւ ազգերու գործակցութեան նոր մղում տալու անհրաժեշտութեան, ըսաւ ան:

Հանդիպումէն ետք, Տանիէլ Եպիսկոպոսին գլխաւորութեամբ, ասորի ուսուցիչները այցելեցին Պիքֆայայի Հայոց Յեղասպանութեան յուշարձանը եւ հոն աղօթքի ճամբով յիշեցին Թուրքիոյ կողմէ ցեղասպանուած Հայ եւ Ասորի նահատակները:

**ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ
Հ.Յ.Դ. ԲԻՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉԸ**

Երկուշաբթի, 30 Հոկտեմբեր 2023-ին, Վեհափառ Հայրապետին այցելեց Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Բիւրոյի ներկայացուցիչ՝ Յակոբ Տէր Խաչատուրեանը, ընկերակցութեամբ Բիւրոյի անդամ՝ Դոկտ. Մկրտիչ Մկրտտիչեանի:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան Հայաստանի ներքին կացութեան, Արցախի տագնապի հետեւանքներուն եւ Սփիւռքին առնչուած շարք մը խնդիրներ:

ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈՋ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒՄ ԿՈՂՄԷ

ԿԻՐԱԿԻ, 3 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2023: Դ. ԶԿՆԻ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Յովակիմ Վրդ. Բանճարճեան:

Պիքֆայայի Ս. Աստուածածին մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Վիգէն Վրդ. Տալգլըճեան:

ԿԻՐԱԿԻ, 10 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2023: Ե. ԶԿՆԻ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Առաքել Աբղ. Գատէճեան:

Պիքֆայայի Ս. Աստուածածին մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեան:

ԿԻՐԱԿԻ, 17 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2023: ՏՕՆ ՎԵՐԱՑՄԱՆ ՍՐԲՈՅ ԽԱԶԻՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Օշին Վրդ. Զուլերթեան:

Պիքֆայայի Ս. Աստուածածին մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Գարակէօզեան:

ԿԻՐԱԿԻ, 24 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2023: Բ. ԶԿՆԻ Ս. ԽԱԶԻ: ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ՎԱՐԱԳԱՅ Ս. ԽԱԶԻ ՊԱՀՈՅ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Աւետիք Վրդ. Տէր Կարապետեան:

Պիքֆայայի Ս. Աստուածածին մատրան մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան:

ԿԻՐԱԿԻ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2023: Գ. ԶԿՆԻ Ս. ԽԱԶԻ: ՏՕՆ ՎԱՐԱԳԱՅ ՍՐԲՈՅ ԽԱԶԻՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ յաւուր պատշաճի քարոզեց՝ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Թորգոմ Եպս. Տօնոյեան:

ԿԻՐԱԿԻ, 8 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2023: Դ. ԶԿՆԻ Ս. ԽԱԶԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Առաքել Աբղ. Գատէհճեան:

ԿԻՐԱԿԻ, 15 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2023: Ե. ԶԿՆԻ Ս. ԽԱԶԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան:

ԿԻՐԱԿԻ, 22 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2023: Զ. ԶԿՆԻ Ս. ԽԱԶԻ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Ազատ Աբղ. Ֆիլիքեան:

ԿԻՐԱԿԻ, 29 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2023: Է. ԶԿՆԻ Ս. ԽԱԶԻ: ՏՕՆ ԳԻԻՏԻՈՅ ԽԱԶԻՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերպ. Տ. Փառէն Ծ. Վրդ. Վարդանեան:

